

ԱՐԱՔՍ

ԳՐԱԿԱՆ ԵՒ ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԵՍ

1892

ԶՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ԳԻՐՔ Բ

ԴԵԿՏԵՄԵՐ

Ա.ՊԵՏԵՐԲՈՒՐԳ
ՏԳԱՐԱՆ ԵՒ ԼԻԲԵՐՄԱՆԻ

Дозволено цензурою Спб. 31 Декабря 1892 г.

Типографія Я. И. Либермана, Вознесенскій пр., д. № 38 -4.



Գլխարկ փարազը Սաթկի:

Гюлизаръ.

Гравировалъ Мате

Մ Ի Ք Ա Ն Ի Խ Օ Ս Բ

Զեռնարկելով 1887 թուականին «Արաքսի» հրատարակութեանը, մենք հէնց սկզբից յայտարարեցինք, որ մեր վեցամսեայ հանդիսի իւրաքանչիւր գիրքը բաղկանալու է մօտաւորապէս 12 տպագրական թերթից կամ 192 երեսից, այն ինչ չնայելով որ ընդհանուր առմամբ նկարներով հանդերձ «Արաքսի» ամեն մի թերթը մեզ արժենում է հարիւր քսան ռուբլուց աւելի, մենք այնուամենայնիւ երբէք չենք բաւականացել խոստացուած թերթերի քանակութիւնով, այլ շարունակ տուած ենք 15, 16, 17, 18 և մինչև անգամ 19¹⁾ թերթ իւրաքանչիւր գրքում: Հետևապէս, արտաքին կողմից դատելով, մենք ոչ միայն կատարել ենք մեր խոստումը, այլ և ամեն անգամ տուած ենք աւելի, որոնք, եթէ հաշուի առնենք, մեծ գումարներ են նստել մեզ: Բայց այժմ էլ, չնայելով որ մեր հանդիսի վերջին երեսին կանգնած է միշտ 12 թերթից պայմանը, մենք ոչ միայն սահմանափակելու ենք «Արաքսի» իւրաքանչիւր գիրքը թերթերի որոշեալ քանակութեամբ, այլ և, հաւանական է, նոյն իսկ քսանական թերթից հրատարակենք իւրաքանչիւրը, քանի որ պայմանաւորեալ 12 թերթը չէ բաւարարացնում «Արաքսում» ղետեղելիք յօդուածների պարունակութեանը:

Անցնելով մեր ներկայ գրքին, բարոյական պարտաւորութիւն ենք համարում յայտարարելու, թէ ինչո՞ւ մեր բոլոր ջանքի հակառակ, այս գիրքը լոյս է տեսնում, համեմատելով մինչև այժմ հրատարակած «Արաքսների» հետ՝ համարեա կիսու չափ մեծութեամբ: Այս առթիւ ահա մեր բացատրութիւնը:

Պաշտօնապէս մենք իրաւունք ունենք իւրաքանչիւր տարուայ մէջ միայն երկու անգամ հրատարակել «Արաքսը», և այդ երկու գրքերը անհրաժեշտ է, որ լոյս տեսնեն միայն մի տարուան ընթացքում: Ուստի եթէ 1892 թուականի այս գիրքը լոյս չ'տեսնէր մինչև այս ղեկտեմբերի 31-ը, այլ յաջորդ՝ 1893 թուականին հէնց յունուարի մէկին կամ երկուսին, այն ժամանակ մենք 1893 թուականի համար միանգամայն կորցրած կը լինէինք երկու գիրք հրատարակելու իրաւունքը և մեզ թոյլ չէին տալ մի գրքից աւելի հրատարակել 1893 թուականի մինչև ղեկտեմբերի 31-ը, քանի որ 1892 թուականի վերաբերեալ երկրորդ գիրքը լոյս տեսած կը լինէր ոչ թէ 1892 թուականին, այլ 1893 թ., թէև հէնց առաջին կամ երկրորդ օրը: Այսպիսով, յուսով ենք՝ կարող եղանք մեր յարգելի ընթերցողներին ճիշտ տեղեկութիւն տալ մեր հանդիսի հրատարակութեան վերաբերմամբ ընդհանրապէս, իսկ այս գրքի փոքր գիրքով հրատարակելու անխուսափելի շարժառիթի մասին մասնաւորապէս:

Թէ ի՞նչ ի՞նչ պատահումներն են պատճառու և, որ այս գիրքը տասը թերթից ենք լոյս ընծայում և ոչ աւելի, ինչպէս սովորապէս տալիս ենք, դորա պատասխանը թէև դիւրին է, բայց խմբագրութիւնների գործերում մէկ մէկ պատահում են այնպիսի անխուսափելի արդեւքներ, որոնց առաջն առնել թէ խմբագրութեան ուժից վեր է և թէ նպատակայարմար չէ ներկայանում այդ մասին հրապարակաւ յայտարարել: Բայց այսքանը կասենք, որ ղեկտեմբեր ամսին, երբ տպարաններում մեքենաները մի րոպէ ազատ չեն մնում և ամբողջ տպարանները օր ու գիշեր տաքերոցքի մէջ գործում են, մենք մեր երեք զրաշարներով ամեն միջոց գործ ենք դրել ըստ կարելւոյն չափ աւելի շատ տպագրական թերթեր տալ, և մինչև անգամ վերջերս օր ու գիշեր, նաև պետական տօներին աշխատելով, և ամեն ճիգ ու ջանք գործ դնելով, հահազիւ հազ կարողացանք պատրաստել և տպագրել այնքան, որքան որ պարունակում է այս գիրքը, այն է 10 տպագրական թերթ:

Այս բոլորից յետոյ, մենք մեզ թոյլ ենք տալիս արձանագրել այստեղ և այն, որ չնայելով այս գրքի թերթերի քանակութեանն, մենք այնուամենայնիւ այժմ ևս տալիս ենք մեր հանդիսում այնպիսի մեծ թուով և նկարներ, որոնք թէ իրենց յատկութեան տեսակէտից և թէ ընտիր տպագրութեամբ, ոչ միայն մեզ, հայերիս մէջ կարող են օրինակելի համարուել, այլ և աղատութեամբ կարող են մրցել եւրոպական ընտիր հրատարակութեանց հետ գեղարուեստօրէն արտադրելու պատճառաւ:

Ամեն մի պատկերազարդ հրատարակութիւն, մանաւանդ նուրբ գեղարուեստական, մեծամեծ նիւթական ծախսեր է պահանջում, թէ պատրաստութեան կողմից և թէ թրղթի ու տպագրութեան: Բաւական է միայն ասել, որ «սակ պատկերների տպագրութեանը, առանց թղթի և անշուշտ առանց կլիշաների մեծագին ծախսերը, շոշափելի մեծ գումար է պահանջում իւրաքանչիւր անգամ: Մենք մեր նուիրական պարտականութիւնն ենք համարած գեղարուեստը բարձր պահել մեր հայոց մէջ, ուստի այս տեսակէտով երբէք բաւականանալու չենք գտած յաջողութեամբ, այլ միշտ յառաջ ենք գնալու և աւելի ու աւելի կատարելագործուելու:

Յառաջիկայ 1893 թուի գրքերը բովանդակութեան կողմից, որ այժմեանից միջոցներ ենք ձեռք առել, աւելի ու աւելի հետաքրքրական դարձնել ընտիր և բազմակողմանի բովանդակութեամբ, հանդիսի և արտաքին կողմը, նկարները աւելի կենդանութիւն և մշտկութիւն են ստանալու: Բացի սովորական աւտոտիպական եղանակով լոյս ընծայուող նկարներից, 1893 թուի մէջ կ'մտնեն նաև ֆոտոտիպիական միջոցով պատրաստուած նկարներ: Իսկ հանդիսի տպագրութեանը իբրև երաշխաւորութիւն, կ'արժում ենք, կ'արող է ծառայել մինչև այժմ մեր լոյս ընծայած գրքերը:

Ա. Գալստիսեան



ԳԱՐԵԳԻՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍՐՈՒԱՆՁՏԵԱՆՑ

Այս տարուայ նոյեմբերի 15-ին Կ. Պոլսի Ազգային Հիւանդանոցում երկարատե ծանր Հիւանդութիւնից յետոյ վախճանուեց Սրուանձտեանը: Նար-Բէյ սրբազանի թարմ շիրմի կողքին մի ուրիշն էլ փորեցինք, մի ազնիւ զանձ, մի ազնիւ սիրտ էլ Հոգի տակ թաղեցինք...

Մենք հանգուցեալ Սրուանձտեանից դեռ շատ էինք ակընկալում, նորա թանգազին հրատարակութիւնների լոյս ընծայելուն դեռ շատ էինք սպասում: Նա դեռ առոյգ հասակումն էր. նա դեռ ընդունակ էր զործ կատարել: Մեր ընդարձակ ու հարուստ հայրենիքում, - հարուստ իւր բազմադարեան, բազմարկած, բազմաչարչար ժողովրդի հոգեղէն զանձերով, - Սրուանձտեան սրբազանը առաջին անձն էր, որ իւր բանաստեղծ հոգու սնունդը գտաւ հսկայ ժողովրդի հրակայ ստեղծապործութիւններում: Նա սրտանց սիրեց իւր օրրանի շուրջը հնչող, իւր մանկական հոգին առաջին անգամ սննդող ու պարարող հրաշալի բանաստեղծութիւնները. նրա երեակայութիւնը անդադար սաւառնեց վանեցոյ ու ուշտունցոյ ստեղծած կախարդիչ առասպելական աշխարհում և անկեղծ մանկան նման սիրեց իւր հսկայ մայր-ժողովրդին, իւր սիրտը պարարող, իւր հոգին հրապուրող բանաստեղծ-ժողովրդին: Նա լաւ ճանաչեց իւր այդ հոգեւոր ուսուցչին և հարազատ մօրը. նա տեսաւ թէ ռբբան հրաշալի մարգարիտներ են թաղուած այդ ժողովրդի ծով-հոգու խորքում, նա տեսաւ թէ ռբբան ազնիւ է, ռբբան մաքուր է, որբան անարատ է այդ ժողովրդի բարոյական աշխարհը, ռբբան այդ անպաճոյճ ժողովուրդը հերոսութիւններ անելու

ընդունակ անհատներ ունի իւր մէջ, իր քան պոյ ըստ երեւոյ-
թին պարզուկ ու անմիտ ամբօխի պարզուկ ու միամիտ գեղ-
ջկուհին ընդունակ է սիրել ամենամեծ բանաստեղծի ազնիւ
ու անկաշառ սիրով, ինչպէս պոյ ամբօխը զուարճանում է,
ինչպէս նա հարսանիք է անում, ինչպէս ծաղըում է սրան
կամ նրան. նա տեսաւ որ անհամեմատելի, հրաշալի, անմահ
սիրուն է այս ժողովրդի ոգին, անհամեմատ ազնիւ, անհա-
մեմատ բարոյական, անհամեմատ բարձր է այս ժողովրդի
աշխարհաՀայեացքը և նորա համեմատ էլ կեանքի եղանակը,
բան որ և է ժողովրդից հեռու ապրած անհատիւն, ինչքան
էլ որ նա բարձր զիրքի վերայ կանգնած լինէր և ինչքան
էլ բարձր կրթութիւն ստացած լինէր: Եւ ահա նրա ոգուն-
տիրող պոյ անհուն բերկրութիւնը, նրա գտած ժողովրդական
ոգու պոյ մարգարիտները ուղեց ուրիշներին տալ, նրանցից
ուրիշներին էլ բաժին հանել: Ինչպիսի հրճուանք էր տիրում
մեր հոգուն, երբ թերթում էինք «Մանանան», «Համով-Հո-
տով», «Թորոս աղբարը», «Հնոց-Նորոցը», «Գրոց-Բրոցը»,
իր քան գեղեցիկ մտապատկերներ ենք քաղել պոյ հարուստ
գանձարաններից, իր քան երիտասարդների ոգևորել է պոյ
գրքերում դուրս բերուած բուն Հայ ժողովրդի կեանքն ու
հոգին, իր քան մատաղ ոգիներ իրենց ցանկացել և ցանկա-
նում են նուիրել ժողովրդի հոգու մարգարիտները հետազո-
տելու գործին, և պոյ բոլորը առաջին անգամ Սրուանձտեա-
նի շնորհիւ: Յաւում ենք անկեղծ սրտով պոյ իսկը ժողովրդի
մարդու, պոյ բուն Հայ գիւղացու զաւակի, պոյ լաւագոյն
Հայ մարդու մահուան, անփառունակ, վաղաժամ մահուան
մասին: Հայ ժողովրդի գործով պարապողը, ժողովրդին առաջ-
նորդել ու ղեկավարել ցանկացողը ապագայում միշտ իրեն
առաջնորդ կունենայ Սրուանձտեանի գրուածքները:

«Արաքսը» իրեն սրբազան պարտք է համարում իւր
յաջորդ գրքում տալ սրբազանի մանրամասն կենսագրու-
թիւնը նորա կենդանագրով հանգերձ:





Jack. G. Leighton

Հեռագիրը գումեց «Մշակ» լրագրի խմբագիր Գրիգոր Արծրունու մահը: «Արաքսը» այս առթիւ իւր սրբազան պարտականութիւնն է համարում, իբրեւ Հայ պարբերական հրատարակութիւն, հրապարակաւ յայտնել իւր խորին ցաւակցութիւնը Հայ մամուլի մի նշանաւոր ներկայացուցիչ կորստեան մասին:

Գրիգոր Արծրունու մահը, իբրեւ 20 տարուայ տպագրական խօսքի եռանդուն գործիչի, իբրեւ իւր գաղափարների տոկուն ու հաստատամիտ քարոզչի, խիստ զգալի է մեզ համար: Ինչքան էլ նրա գաղափարները Հայ կեանքին յարմարուելով լուրջ քննադատութեան չըղիմանան, ինչքան էլ նրա դատողութիւնները մի քանի հասարակական խնդիրներում բոլորովին սխալ տրամաբանութեան վրայ հիմնուած լինեն, այնուամենայնիւ նորա քարոզները միշտ գրաւել են երիտասարդութիւնը ոչ այնքան նոցա սխալ եզրակացութիւններով, որքան նոցա հիմքը կազմող գեղեցիկ ճշմարտութիւններով: Գերմանական բարձր ուսումը տուեց Գրիգոր Արծրունուն եւրոպական կրթութիւն, ներշնչեց նրա մէջ եւրոպացուն յատուկ գաղափարներ, ճշմարտութիւններ, տուեց նրա կորովի մտքին առատ սնունդ ընդհանուր մարդկային կեանքից: Ահա այդ բոլորը զուտ վեր առած՝ Գրիգոր Արծրունու արժանիքն են կազմում: Անկեղծ հաւատալով իւր ստացած գիտութեանն ու կրթութեանը, Արծրունին նոյն անկեղծութեամբ հաւատում էր և իւր քարոզներին հայութեան վերաբերեալ խնդիրներում: և նրա անկեղծութիւնն ու տոկուն եռանդը միացած իրար հետ գնահատելի են դարձնում մեր աչքում գրական խոշոր գործիչի կորուստը Հայ չքաւոր կեանքի համար:

Հանգիստ ոսկրներիդ, անխոնջ մշակ տպագրական խօսքի:



ՄԱՀ Տ. ԽՈՐԷՆ ՆԱՐ-ՊԷՅ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

Ձեր ընթերցողները Պոլսի թերթերէն իմացան 'ի հարկէ՛ Նար-Պէյ սրբաղանի անակնկալ մահը, առանց սակայն մօտէն տեղեկութիւն ունենալու մահուան պարագայներուն վրայ, քանի որ մեր թերթերը ստիպուած էին կատարեալ լռութիւն պահել այս մասին. այս առթիւ կը փութամ հետաքրքիր ընթերցողին պարզել յիշեալ եկեղեցականին կեանքի վերջին մասը որուն վրայ խորհրդաւոր քող մը ձգեցին տարի է մը 'ի վեր:—

Ինչպէս ամէնքին յայտնի է՝ Նար-Պէյ արքեպիսկոպոս տեսական մարդ չէր և ճիշտ այդ պատճառով, մինչև հիմա մերժած էր այն ամէն գաւառական պաշտօններ, որոնք հետզհետէ առաջարկուած էին իրեն. կը փափագէր, (Թուրքիոյ ուրիշ շատ մը եկեղեցականներուն պէս, Պոլսի մէջ կեանք վարել. Պոլսի վայելքներէն չէր կարող զրկուիլ կարծես, բայց մայրաքաղաքի կեանքը, մանաւանդ իրեն նման բարձրաստիճան եկեղեցականի մը համար, սուղ է, և ինքը մեծ դժուարութիւն կը կրէր ապրուստը հայթայթելու. իրեն յատկացուցած էին Պէշքեթաշի եկեղեցին, ուրկէ ամսական չէր ստանար, հապա պէտք էր սպասել որ եկեղեցիէ մը պատարագի հրաւիրէին, մեծատուն մը ամուսնանար կամ մեռնէր՝ որպէս զի Նար Պէյ քանի մը ոսկի շահէր: Բարեբաղդաբար Նար-Պէյ գրական և լեզուական մեծ հմտութիւն և տաղանդ ունէր, ու եթէ ադոնք (Թուրքիոյ համար նիւթական շահու տեսակէտով նշանակութենէ զուրկ էին՝ Եւրոպայի մէջ կրնային շահագործուիլ: Սրբազանը կը գրէր ուրեմն եւրոպական թերթերուն, որոնցմէ լիւթովակ 'կը վարձատրուէր. իւր թղթակցութիւնները սակայն, երկար տարիներէ 'ի վեր գաղտնի պահուած, մէկէն 'ի մէկ երե-

ւան կ'ելլեն անցեալ տարի, կ'ապացուցուի որ 'Վար-Պէյ օգտուելով այն սերտ յարաբերութիւններէն՝ զորս մշակած էր Սուլթանի պալատին բարձրաստիճան անձնաւորութեանց հետ՝ պայտատական մեծ ու փոքր գաղտնիքներ հաղորդած էր եւրոպական թերթերուն, այս գաղտնիքները, քաղաքական նշանակութենէ մեծ մասամբ զուրկ, աւելի կը նկատէին Սուլթանի ներքին կեանքին, հարեմի խորհրդաւոր կեանքէն քաղուածներ, հազարումէկ գիշերներու հրապոյրով մանրամասնութիւն, այս կարգի յայտնութիւններ, որքան որ լուսաւորեալ կառավարութեան մը համար անկարեւոր, Սուլթանի աչքին մեծ ոճիր և աններելի յանցանք կը նկատուէին, 'Վար-Պէյ՝ ի սկզբան կը ջնայ ուրանալ, բայց երբ իւր ստորագրութեամբը դրօշմուած յօդուածներ ցոյց կուտան իրեն՝ ամէն բան կը խոստովանի՝ սա միակ մեղմացուցիչ պարագայն ի մէջ բերելով, թէ դրամ շահելու հարկին մէջ գործած էր այն յանցանքը, Սուլթանը, որ առաջ Խորէնի մասնաւոր համակրանք ունէր, և որ, կրօնական նախապաշարումով մը, կարելի եղածին չափ կը զգուշանայ եկեղեցականները խստիւ պատժել՝ ներեց 'Վար-Պէյին, ըսելով թէ «Ես ներեցի, Լստուած թող դատէ»։ Ս'եր Լ'շըգեան պատրիարքը, կարծելով որ ինքն է Լստուծոյ փոխանորդը, փութաց Սուլթանի բաղձանքը տեղը տանիլ և իւր հռչակաւոր կոնդակովը 'Վար-Պէյը ո'չ միայն զրկեց եկեղեցական և ազգային ամէն պաշտօնէ՝ այլ մինչև անգամ եկեղեցւոյն մէջ հրապարակաւ աղօթել և պատարագելն ալ արգելեց նմա։ Պոլսի ժողովուրդը դեռ մինչև հիմա չէ կրցած ըմբռնել թէ պատրիարք---եպիսկոպոս մը ինչպէս կարող է արքեպիսկոպոսի մը արդելել պատարագելու կամ հրապարակաւ աղօթելու, թողունք որ ինչ՞ պատճառ կար 'Վար-Պէյը պատժել՝ քանի որ ինքը Սուլթանը ներած էր անոր ենթադրեալ յանցանքին, ինչ որ ալ ըլլայ՝ 'Վար-Պէյի մեծութիւնը սա եղաւ որ լռիկ մնչիկ համակերպեցաւ եղած տնօրինութեան, ժողովուրդը, որ արդէն մեծ տհաճութեամբ ընդունած էր պատրիարքական կոնդակը՝ 'Վար-Պէյի համակերպութենէն յուզուեցաւ և անոր անցեալ հանրային ու անհատական պակասութիւնները մոռնալով՝ սկսաւ համակրիլ նմա, հոս կ'արժէ դիտել տալ թէ ինչ կը նշանակէր պատրիարքական հարուածը 'Վար Պէյի նման անձնաւորութեան մը համար։ Իբր դրագէտ և առաջնակարգ բանաստեղծ ամբողջ հայ ազգին հանրածանօթ, իւր քիչ մը խնդրոյ տակ եղած պատմական ծագումով եւրոպեան բանասիրաց և պետական մար-

գոց ուշադրութիւնը գրաւած, իւր գրական արժանեաց համար Ֆրանսական գրական ակումբներու պատուոյ անդամ, եւրոպեան կարգ մը տէրութեանց կողմէ պատուանշաններով պատուուած, Պոլսի դեսպանական մարմնոյն ընդհանուր համակրանքը գրաւած, Պոլսի բոլոր հասարակութեանց ուշադրութեան առարկայ, ահա ինչ որ էր Խորէն Լիւզինեան. հիմա երեւակայեցէք թէ այս հանգամանքներով օժտուած եկեղեցական մը, մէկ հարուածով գետնէ գետին կը զարնուէր, ամբողջ աշխարհի առաջ այսպէս կը նսեմանար . . . :

Կառավարութիւնը՝ պատրիարքի վարմունքէն քաջալերուած, լրտեսներով շրջապատեց անկեալ եկեղեցականը. իւր բնական տանը դրանը առջեւ, տան պարտիզին դրանը մօտ, փողոցը քալած միջոցին, ճաշած ատենը, քնացած պահուն, ամեն տեղ և ամեն ատեն՝ լրտեսներ. ո՛չ ոք կը համարձակեր Նար Պէյի մօտենալ, ոչ ոք կուզէր անոր ողջոյնը առնուլ. հեռու հեռու կէ փախչէին իրմէ : : Լըքուած ամենքէն, Նար Պէյ իւր բնակութիւնը հաստատեց իւր քրոջ տունը, ուր կրնար գոնէ պատահ մը հաց ճարել. այսպէս անցաւ ժամանակ մը. բայց քրոջը նիւթական կացութիւնն ալ նախանձելի ըլլալէ շատ հեռի էր. արգարե Նարիզի մէջ հարուստ եղբայր ունէր. ինչ օգուտ սակայն, Նար Պէյ և իւր ամբողջ ընտանիքը տող մ' անգամ չէին կարող դրել ի Նարիզ, այնչափ խիստ հսկողութեան ենթարկուած էին ամեն կողմէ. օր մը Նար Պէյ, այս անորոշ կացութեան պատճառաւ ծայրայեղ յուսահատութեան մատնուած՝ որոշեց պատրիարքին դիմել և խնդրել որ իրեն ներում շնորհէ. այն օրը Խառն Դոզով կար 'ի Վալթիա. Նար Պէյ բարապանի մը միջոցաւ լուր կը ղրկէ պատրիարքին թէ կը փափագի իրեն ներկայանալ և առանձին տեսակցութիւն մ' ունենալ :— Եւ առանձին մարդ չեմ կրնար ընդունիլ, կը պատասխանէ պատրիարքը, թող գայ ըսելիքը Խառն Դոզովին ըսէ : Խորէն կը ներկայանայ Խառն Դոզովին և ուղղակի պատրիարքին դիմելով՝ պաղատական ձեւեր առած կ'աղբսէ որ իրեն ներում շնորհէ : «Վրթացէ՛ք, Սրբազան հայր, կ'ընդունիմ թէ ծանր էր յանցանքս, այսչափ ապաշխարանքը բաւ համարեցէք, բարոյական և նիւթական տառապանքս անտանելի դարձած են, անթի եմ . . . » :— Լիմ անապատ գնա՛, Կոտեց անապատ գնա՛, կը պատասխանէ Նորին Սրբազնութիւնը :— Սրբազան հայր, կը պաղատիմ, անապատ չեմ կրնար երթալ . . . :—Վուրս հանեցէ՛ք սա մարդը, կը գո-

ոայ պատրիարքը բարապաններուն, և նոյնհետայն կոշտ ձեռքեր քաշկուտելով դուրս կը հանեն Նար-Պէյը: Նար-Պէյ, գլուխը կախ, տուն կը վերադառնայ: Նանկալթի հաստատուելէն 'ի վեր կիրակի և լուր օրերէ՛ Ներայի գերեզմանատան մատուռը կը յաճախէր, ուր, պահարանին մէջ, առանձին կ'աղօթէր, մատրան բարի աւագերէցը թախանձելով, թախանձելով՝ համոզած էր զինքը վերջապէս գալ դասը կանգնելը, ուրտեղ «ողջոյն» կ'առնէր և «ողջոյն» կուտար ժողովրդին, «մաս» կ'օրհնէր ու կը բաժներ, այսչափ մը զինքը պատուած ըլլալու ներքին գոհունակութիւնն ունէր խղճամիտ հայ քահանայն:

Եթէ ստոյգ է որ թշուառութիւնը յիմարութիւններ գործել կուտայ՝ Խորէն, իւր ծայրագոյն յուսահատութեան մէջ, կրնար այդ յիմարութիւններէն մին գործելով՝ իւր կացութենէն ազատիլ, արձակ համարձակ պտտել՝ դրամ, փառք, պատիւ, պաշտօն շահիլ: այս ամէնը ունենալու համար բաւական էր Լըզարեան Վերապայծառին դիմել և դաւանութիւնը փոխել, այսպէս ըրած էին, դժուարին պարագաներու մէջ, կաթոլիկութենէ հայ եկեղեցւոյ գիրկը դարձած քանի մը վարդապետներ, այսպէս կը կարծէին թէ Խորէնն ալ պիտի ընէ ամէն անոնք՝ որք Խորէնը շատ փոփոխամիտ և տկար արարածի մը տեղ դրած էին. բայց Խորէն ասոր հակառակը ապացուցուց շատ փայլուն կերպով. Խորէն իւր վրայ փորձեց իւր հռչակաւոր մէկ բանաստեղծութիւնը «Հայ մեռնինք» ու հայ մեռաւ:

Խորէն քաջառողջ մարդ էր և սովորական պայմաններու մէջ կրնար տակաւին մինչև քսան տարի ապրել: Բայց այն բարոյական անհնարին վիշտերը, որոնց մոտենուած էր վերջերս՝ իւր մահը փութացուցին:

Խորէնի մահը անսահման վիշտ պատճառեց ամբողջ հասարակութեան. որ զինքը պատրիարքի վրէժխնդրութեան մէկ զոհը նկատեց և իրաւամբ Նար-Պէյ մեռաւ բոլորովին ժողովրդականացած, բայց ինչ կը խորհէր, գերեզմանի տխուր փոսին առջև ալ պատրիարքի վրէժխնդրութիւն չը մեղմացաւ. անոր յուղարկաւորութիւնը և թաղումը կարելի եղածին չափ անշուք ընելու համար ամէն ջանք 'ի գործ տրաւ, էն աննշան քահանային մահը «մահագոյթով» մը կ'յայտարարէին ժողովրդեան. այս պատիւը զլացան Նար-Պէյի. լրագիրները յայտարարեցին թէ յուղարկաւորութեան և թաղման օրը պաշտօնապէս իրենց հաղորդուած

չ'ըլլալով՝ իրենք ևս այս մասին բան մը չէին գիտեր. լրագրական այս յայտարարութեան հետեւեալ օրն իսկ, առտուն կանուխ, հապ-ճեպով կը կատարեն կը լմնցնեն ամէն հանգէս. ժողովուրդը բան մը չը գիտեր. ամէն մարդ իրարու կը հարցնէ, թէ եր՞բ պիտի կատարուի թաղումը, երբ արդէն ամէն բան լըմնցած է . : (Ներայի ժողովուրդը որ բնականաբար հանգիսին օրը բարեբաղդ եղած էր իմանալ՝ կը փութայ գրեթէ ամբողջութեամբ ներկայ գտնուիլ, 1500 հոգիի չափ յուղարկաւոր կը գտնուի, որոցմէ շատերը լացած են, յուղումը և տխրութիւնը ամէն գէմքի վըայ կը կարդացուի, բայց ո՛չ դամբանական, ոչ պսակ, ոչինչ . . . :

Այ ազգին համար խորէն Նար-Պէյի մեծագոյն արժանիքը իւր գրական բարձր տաղանդն էր, իբր բանաստեղծ խորէնը շատ մեծ ծառայութիւն մատուցած է իւր հասարակութեան, իւր երկերէն ամէնէն գլխաւորները՝ «Ստուերք Այկա-կանք» և «Քնար պանդխտին» միշտ անզուգական գոհարներ պիտի մնան մեր գրականութեան մէջ, իւր երգերը շատ մը հոգիներ ազգասիրութեան աւելնով ներշնչած են: Ազգի սիրեցեալ խորիմեան Այրիկ, թուրք կառավարութեան կողմէ Կոստանտնուպոլիս կոչուելուն առթիւ Կարինէ անցած պահուն, Իրեն 'ի պատիւ տրուած հակցերոյթի մը մէջ, դպրոցի տղաքը Նար-Պէյի «Այ մեռնինք»ը կ'երգեն, խորին վեհափառութիւնը այս երգէն այնչափ կ'զգածուի՝ որ անմիջապէս յոտին կանգնելով բաժակ կ'առաջարկէ Նար-Պէյ սրբազանի կենացը:

Բանաստեղծ արքեպիսկոպոսը այժմ կը հանգչի Շիշլիի գերեզմանատան մէկ անկիւնը, փայտեայ խաչ մը միայն կը զարդարէ իւր փոսը . . . :

Պուլաեյի.



The first thing I noticed when I stepped
 out of the car was the cold. It was a
 sharp contrast to the warm blanket I
 had been under. The air was crisp and
 clean, a welcome change from the stuffy
 interior. I took a deep breath, savoring
 the moment. The sun was shining
 brightly, casting long shadows on the
 ground. The world around me seemed
 so different, so new. I felt a sense of
 adventure, of possibility. The road ahead
 was long and winding, but I was ready
 for whatever came my way. The journey
 was just beginning, and I was excited
 to see where it would lead me.



Տաթևի վանքը: Մ. փափաղեանի ընկանկարից:
 Татевскій монастырь.
 Автотипія Ангерера въ Вѣнѣ.





Տ Ե Ղ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

ՏԱԹԵՒԻ ՎԱՆՔԸ

Ինչպէս քաղաքակիրթ ազգերի մէջ ամեն մի կոթող, ամեն մի արձան կամ հասարակական որ և է մի յիշատակարան, ինչ նպատակով էլ կանգնեցրած լինի, յիշեցնում է այդ ազգի փառաւոր գործերի կամ անցեալի կենդանի յիշատակը, ինչպէս էլ որ այդ արձանների նշանաւորները իրենց կարեւորութեան տեսակէտից զարթեցնում են իւրաքանչիւր կրթուած անհատի մէջ դոցա հետ կապուած զանազան պանծալի յիշողութիւններ, հէնց այդպէս էլ հայաստանի բովանդակ տարածութեան վերայ ուր ուրեք աւեր կամ շէն նշանաւոր մենաստանները կամ հոյակապ կոթողները մեզ, ներկայ հայերիս մէջ, երբ փոքր ինչ ուշադրութեամբ սկսում ենք տեղեկանալ այդ տաճարների պատմութեանը կամ շինութեան ժամանակամիջոցի մասին, ծնեցնում են նոյնպիսի վառ յիշողութիւններ մեր նախնեաց անցեալից, որոնք այսպէս թէ այնպէս սերտ կապակցութիւն են ունեցել այդ տաճարների հիմնարկութեան հետ:

Այս տեսակէտից նայելով, խիստ դիւրին է բացատրել նաև, թէև ըստ երևոյթին չնչին, բայց պատմական կարեւորութիւն ունեցող շատ խաչքարերի, դամբարանների գոյութիւնը և խորհրդաւոր իմաստը: Եւ որ հետաքրքրականն է,

այս իսկ վանքերը հէնց իրենց արձանագրութիւններով արդէն կենդանի ապացոյց են ներկայանում այդ վայրերի հիմնարկութեան ժամանակամիջոցի մի կարգ նշանաւոր անձանց ու ղէպերի մասին: Այնպէս որ խղճմտաւոր ուսումնասէր հետալուողը, եթէ այսօր կամենար մասամբ պարզելու այդ ժամանակամիջոցների հայ կեանքի բնորոշ վիճակը, անտարակոյս նա համարձակ կարող էր այդ նպատակին հասնել նոյն իսկ այդ տաճարների արձանագրութիւններից:

Այսպէս, չայաստանի ամեն մի վանքը, ամեն մի կոթողը, հայրենեաց որ կողմումն էլ կառուցուած լինէր, այնուամենայնիւ ունի իր անցեալը, իր պատմութիւնը և իր հրահանգիչ նշանակութիւնը: Այս մտքով անելի նշանաւոր են և անուանի այն բազմաթիւ հռչակաւոր մենաստանները, որոնք հնումը այնքան յայտնի դեր են խաղացել ազգի մտաւոր և բարոյական կեանքում: Հեռու կը տանէր մեզ իւրաքանչիւր դարում կառուցած ու հաստատած հռչակաւոր վանքերի ու մենաստանների յիշատակութիւնը. ուստի մենք այս անգամ կտնդ ենք առնում Սիւնեաց աշխարհի Տաթևու անուանի մենաստանի վերայ, որի միակ անունը արտասանելիս, ներկայումս ամեն մի հայի մէջ փրբան քաղցր յիշողութիւններ է զարթեցնում նա, հակառակ իր ներկայ անկեալ վիճակին:

* * *

Նախ քան Սիւնեաց հռչակաւոր մենաստանի նկարագրութեանն անցնելը, մենք նպատակադրմար ենք գտնում գէթ մի թեթև հայեացք ձգել Սիւնեաց աշխարհի վերայ, մանաւանդ որ մեր ներկայ հայ ժողովուրդը, ինչպէս յայտնի է, ամենուրեք պարզ ծանօթութիւն անգամ չունի իրեն նախնիքներից աւանդած և իր բնակած երկրի նախնիք վիճակի, պատմութեան և աշխարհագրութեան վերայ: Ցաւում ենք, որ մենք այժմ անկարող ենք փոքր ի շատ է մանրամասնօրէն բաւարարութիւն տալ մեր ընթերցողաց Սիւնիքի վերաբերեալ քանի որ մեր ներկայ նիւթը Սիւնիքի հռչակաւոր մենաստանն է, և ոչ նոյն իսկ երկիրը: Սակայն ի դէպս առած,

այսուհետեւ մենք մեծ զոհութեամբ զետեղելու ենք մեր երկրի զանազան նահանգների նախնի վեճակի մասին դիւրամտելի մասնաւոր տեղեկութիւններ, որոնք անշուշտ կը զուգորդուին բնութեան և տեղեաց ընտիր նկարներով:

* * *

Միւնիքը բարձրաւանդակ երկիր է, որի մեծ մասը կազմում են բարձրաբերձ լեռներ՝ անմատչելի, անբերրի և մշտադալար խիտ անտառներով ծածկուած: Սոսկալի ձորեր, քարանձաւներ, այրեր: Սոցա մէջ անանցանելի զարհուրելի անտառներ և լեռներ, խորհրդաւոր կիրճ եր, որոնք իրենց ահռելիութեամբ և նախնական վայրի բնութիւնով սոսկում ու ճնշում են ազդում ուղեւորի զգայարանքների վերայ: Երկնապաց լեռների գագաթներից ու ծմակներից տեղացող վտակները, աղբիւրները և հեղեղասները ոչ պակաս ահեղ տեսարան են ներկայացնում իրենց փրփրադէղ յորձանքներով ու զարհուրիչ զըրդիւններով, որոնք երբեմն որոտող ջրվէժներ կազմելով՝ բնութեան անգորրութեան մէջ մեծ գոչիւններ արձակելով՝ ընթանում են երկրի զանազան կողմերը և թափվում, որոնք Արաքսը և որոնք Գեղամայ գողտրիկ լիճր:

* * *

Միւնեաց աշխարհը, որի պատմութիւնն իր սկիզբն առնում է հայկազեան Գեղամայ որդի Սիսակից և որի իսկ անունով այս բովանդակ երկիրը հնումը անուանուեցաւ Միսական կամ Միւնիք, հայոց թագաւորութեան օրով, հայաստանի բազմամարդ, բարեբեր և նշանաւոր նահանգներից մինն էր կազմում: Միւնեաց աշխարհի ճիշտ սահմանները որոշել իսկապէս դժուար է, ըստ որում Միւնիքը զանազան ժամանակներ զանազան սահմաններ է ունեցել. օրինակ, մի առժամանակ Միւնիքը բովանդակում էր Փայտակարանը, Կուր և Արաքս գետերի միացման տեղից, ամբողջ Արցախու (Գանձակի) նահանգը Վասպուրականի մի մասով, հին-Նախիջևանը, Գողթան և Զուղան, իսկ մօտաւորապէս եօթներորդ դարում,

Սիւնեաց աշխարհի սահմանն արեւմուտքից կազմում էր Արարատ և Վասպուրական, Հիւսիսից՝ Գուգարք և Ուտիք, արեւելքից՝ Արցախ և Հարաւից՝ Երասխ-Արաքս գետը՝ այնտեղում, ուր սա բաժանում է Հայաստանը Ասորպատականից և Մեղացոյց երկրից։ Ամբողջ Սիւնիքը այնուհետեւ բաժանվում էր տասներկու դաւառների և ունէր բազմաթիւ անառիկ ամրոցներ։

Գաւառներից առաջինն էր Ծղուկ, Նախիջեանու սահմանի վերայ, որը մի ժամանակ Սիւնեաց իշխանների և միտրապոլիտների աթոռանիստի էր։ Ութերորդ դաւառն, ուր գտնվում է Տաթևի հռչակաւոր մենաստանը, յայտնի էր Կովսական կամ Սիսական անուններով։ Այս դաւառը, որ այժմ կոչվում է Ձանգեղուր, բովանդակում էր իր մէջ նաև Արցախու նահանգի մի մասը։

* * *

Սիւնիքը նահապետութիւն էր, որ երկար ժամանակներից սկսած երկու ճիւղի էր բաժանուած. սրանցից աւագագոյն իշխանը անուանվում էր Սիւնեաց գահերէջ իշխան, որի կենտրոնատեղին էր Կից, իսկ երկրորդը կրում էր Հայկապոնի իշխանի անուն և նստում էր Գեղարքունիքում։ Սակայն տասներորդ դարում, ի 970 թուին, երեւան եկան և երկու նոր իշխանութիւններ, որոնցից մինը, Կապանում նստողը, որ Գեղարքունիքի հայկազուն իշխաններիցն էր, գլխին թագ դրեց 970 թուին մօտաւորապէս և վեց թագաւորներ տուեց Սիւնիքին, մինչ և որ 1166 թուին բովանդակ Սիւնիքը բոլորովին նուաճուեցաւ այլազգիներից։

Այնուհետեւ տասներորդ դարում, 1721 թուին, հանդէս եկաւ Դաւիթ բէգ Սիւնեցին, որը և յաջող փորձ փորձեց ազատել Սիւնիքը մահմետական լծից, սակայն մի քանի տարի երկրի մի մասին իշխելուց յետոյ, մեռաւ Սիւնեաց քաջարի վերջին զօրավիգը, որով և վերջնականապէս մտրեց Սիւնեաց իշխանութեան վերջին աստղը։

Սյսպէս, Սիւնեաց իշխանները, որոնք ուրոյն դիրք ունէին բռնած Հայոց թագաւորների վերաբերմամբ, Հայոց նախարարական և իշխանական ցեղերի մէջ, մեծ ազդեցութեամբ էին հռչակուած, այնպէս որ եղել են ժամանակներ, երբ Սիւնեաց իշխանները մինչև անգամ յաւակնութիւն են ունեցել արկելու բովանդակ Հայաստանին: Վարդան Մամիկոնեանի հակառակորդ Վասակ իշխանը՝ ինչպէս յայտնի է, Սիւնեաց իշխաններին էր:

Սյս աշխարհը ևս, որպէս բնական է, տղատ չէ եղել այլազգիների շարունակ յարձակումներից: Եղել են ժամանակներ, երբ Սիւնիքը նոյն իսկ յայտնի աշխարհակալների աւերումներից չէ ազատուել, սակայն եղել են և այնպիսի ժամանակամիջոցներ, երբ Սիւնեաց ընդարձակ աշխարհը խաղաղութեան մէջ բարգաւաճել ու զօրացել է: Սյսպէս, չորրորդ դարում, Անդոկ իշխանի օրով, Սիւնիքը չարաչար աւերեցաւ և ամայացաւ, և նորա Բաբիկ որդու օրով նորից ծաղկեցաւ և իր նախնական վիճակին վերածուեցաւ: Իննեւորորդ ու տասներորդ դարերում Սիւնիքը ծաղկում է վաճառականութեամբ, բաղմամարդութեամբ, երկրագործութեամբ, ճարտարապետութեամբ և մանաւանդ աստուածապաշտութեամբ: Կառուցանվում են հարիւրաւոր մենաստաններ ձորերի, լեռների մէջ, և լեռանց ծայրերում և բաղմաթիւ աստուածավախ մարդիկ թողնելով աշխարհի վայելչութիւնները, իրենց անձը ձգնութեան են նուիրում Աստուծոյ տաճարներում, բնութեան զրկում: Ահա կրօնական ջերմեռանդութեան այս շրջանի մէջ է և իր սկիզբն առնում Տաթևու անուանի մենաստանը, որի նկարագրութեանը կդառնանք փոքր ինչ ստորև:

* * *

Տաթևը յիշելիս, ամբողջ Սիւնիքն ես պատկերացնում մտացդ առջև իր դիւցազնական արկածներով և պատմութիւնով, հայ եկեղեցու նշանաւոր ներկայացուցիչներով և անցեալի այնքան խորհրդաւոր ելեէջերով: Դարե՛ր ա-

առջ այստեղ էին քարոզում քրիստոնէութիւնը Հայաստանայց եկեղեցու Հիմնադիրները՝ Սուրբն Բարդուղիմէոս առաքեալ և Սուրբն Գրիգոր լուսաւորիչ այստեղ, Սիւնիքում, էին զործու Հայ եկեղեցու արի ախոյեանները և դեռ զաղտուկ մնացած կռապաշտութեանը վերջին ջախջախիչ հարուածը տալիս անուանի Սուրբն Մեսրոպ, Մաշտոց անուանեալ վարդապետը, Սիւնեաց բարեպաշտ Վաղինակ իշխանի օրով:

Այսպիսի աստուածընտիր առաքեալների քարոզութեամբ անկարելի էր որ քրիստոնէութիւնը Սիւնիքում չբարդաւաճէր, ուստի և Հէնց սկզբից աստուածաբանական ուսումը պարարտ հող գտաւ այստեղ, որի առաջին վարկ տուողը եղաւ Սիւնեաց Անանիա եպիսկոպոսը, Ս. Մեսրոպի աշակերտը, որ այնուհետեւ բարձրացաւ միտրապոլիտութեան աստիճանին և մեծամեծ պարգևներով պատուեցաւ նաեւ Աղուանից թագաւորից: Իսկ երբ Սուրբն Սահակ և Մեսրոպ ստեղծեցին Հայ գրականութիւնը, Անանիա եպիսկոպոսը բացաւ Սիւնիքում դպրոցներ, որոնց տեսչութիւնը յանձնեց իրեն աշակերտակից Բէնիամինին: Սա փութով բոլորին սովորեցրեց Հայոց գիրը և գրականութիւնը: Այնուհետեւ այստեղ այնքան յառաջ գնաց Հայկական լեզուի ուսումը և առհասարակ աստուածաբանական դիտութիւնը, որ Սիւնիքի վարդապետները իրենց դիտութեամբ մեծ հռչակ և առաջնութիւն ստացան Հայոց միւս վարդապետողների առաջ: Սորանից յետոյ Սիւնեաց վարդապետներին միայն վերապահուեցան սուրբ գրեանց մեկնութիւնը և թարգմանութիւնը և առհասարակ նորա հռչակուեցան իբրեւ զլուս բոլոր Հայոց վարդապետների: Աւելի նշանաւոր հանդիսացաւ Մաթուսաղայ քերթող վարդապետը, որը յետոյ վարդապետարանի զլուին անցնելով, աւելի մեծ մղում տուաւ ուսման: Իւր նշանաւոր դիտութեան շնորհիւ Մաթուսաղան ոչ միայն Սիւնեաց բոլոր վարդապետների զլուիւր համարուեցաւ ու յետոյ եղաւ Սիւնեաց եպիսկոպոս, այլ նաեւ նորա հռչակը տարածուեցաւ բոլոր Հայ աշխարհը ու նորա շնորհիւ, Հայոց կաթողիկոսարանի

և երեւելի Արշարունեան վարդապետարանները Սիւնեաց վարդապետարանի գլխաւորութիւնը ճանաչեցին:

Սիւնեաց վարդապետարանի այս համբաւը շարունակուեց մինչև ութերորդ դարու սկիզբը, երբ դեռ Սիւնեաց Ստեփաննոս եպիսկոպոսը, նախ քան եպիսկոպոսութեան բարձրանալը, դիմեց ուսելու այս վարդապետարանը որպէս տաճար իմաստութեան: Աւելի որոշ դաղափար տալու համար, թէ մինչև որ աստիճանի անուանի էր այս վարդապետարանը, աւելորդ չենք համարում միջ բերել նոյն իսկ Օրպելեան Ստեփաննոս եպիսկոպոսի այս վկայութիւնը. «Ուստի ելնելով իր ճգնարանից՝ շապում գալիս է Սիւնեաց վարտապետարանը՝ այդ իմաստութեան աղբիւրը՝ որ հայոց բոլոր զիաութիւնների գլուխն էր, և որի մէջ եղած Կարոյները ծաղկած էին. որովհետեւ, ինչպէս Աթենացիք հռովմայեցոց և յունաց մէջ ճոխացել էին և խապանացոց աշխարհում իմաստութեան մայր էին կոչուել իրենց լատին և յոյն զրականութեամբ, այսպէս էլ սոքա մեր հայոց աշխարհում, Թորգոմի երկրում»:

Այս վարտապետարանումն են ուսել և երկու երեւելի մատենագիրներ, մինն՝ Քերթով անուանեալ Սիւնեաց իններորդ Պետրոս եպիսկոպոսը հինգերորդ դարու վերջում, և երկրորդը՝ Ստեփաննոս եպիսկոպոսն ութերորդ դարու սկզբում:

* * *

Այժմ գալով Սիւնեաց եպիսկոպոսական աթոռին, պէտք է ասած, որ Սիւնեաց առաջին եպիսկոպոսները կամ առաջնորդները բացի առաջնից, որը ինքը ս. Լուսաւորիչը ուղարկեց, Սիւնեաց իշխանների խնդիրքով ընտրում էին կաթողիկոսները, իսկ միջին և վերջին դարերի եպիսկոպոսները ընտրվում էին իշխաններից և ժողովրդից և ձեռնադրվում կաթողիկոսից: Սոցա միահամուռ ընտրութեամբ հոգեւորական մեծ փառքով զիմում էր հայոց կաթողիկոսին, որը և ձեռնադրելուց յետոյ ճանապարհում էր նորան մեծաշուք պատուով: Այսպէս, Սիւնեաց եպիսկոպոսները, հէնց սկզբից, մեծամեծ

պատիւներ և արածննութիւններ ստացան ս. Լուսաւորչուց, իսկ սուրբ Ներսէս կաթողիկոսը Սիւնեաց եպիսկոպոսութեանը յատկացրեց «Պատրիարքի նախաթոռ» պատիւը. այդ ժամանակից և սոքա միտրապոլիտ անուանուեցան: Սահակ Մեծի և Մեսրոպի օրով ս. Գրոց մեկնութեան և թարգմանութեան հրաման ստացան, որով և նոցա պաշտօնը ու գործունէութիւնը առաւել ընդարձակուեցաւ: Որպէս հետեանք այդ իրաւանց, Սիւնեաց եպիսկոպոսները իրենք էին ձեռնադրում Սիւնիքի տասներկու գաւառների համար եպիսկոպոսներ և այդպիսով նոցա զուլսը համարվում. բացի այս, թէ կաթողիկոսի ձեռնադրութիւնը և թէ ո և է եկեղեցական ժողով առանց Սիւնեաց միտրապոլիտների չէր կարելի տեղի ունենալ: Անանիա եպիսկոպոսը իր անձնական յատկութիւններովն աւելի ևս բարձրացրեց Սիւնեաց միտրապոլիտութիւնը: Նորա աջակցութեան համար սուրբ Մեսրոպին՝ Աղուանից այբուբէն ստեղծելու գործում և Սիւնիքում, հայ եկեղեցու դաւանութեան և աստուածաբանական գիտութեան դպրոց և վարդապետարան հաստատելում, Աղուանից թագաւորը շնորհեց Անանիա միտրապոլիտին արտաքին պատիւ, այն է՝ իր թագաւորական դրօշը կարմիր և ոսկետրտուն վառել, զլիւին գունդ ոսկի և վերան պատուական խաչ:

Բայց Աբրահամ կաթողիկոսի օրով ծագած երկպառակութեան պատճառաւ, Սիւնեցիք Դաւիթ եպիսկոպոսին միտրապոլիտ ընտրելով ապստամբեցան հայոց կաթողիկոսի դէմ և չկամեցան հպատակել ս. Լուսաւորչու յաջորդին, այլ միտք յղացան իրենց միտրապոլիտը ինքնուրոյն դարձնելով հայոց ընդհանուր կաթողիկոսի հետ մի աստիճանի վերածել: Սակայն երկար տարաձայնութիւններից յետոյ, տասներորդ դարում Անանիա կաթողիկոսը մեծ ջանք գործ դրաւ հնադանդեցնելու Սիւնիքին, որ և յաջողութեամբ վերջացաւ: Ինքը կաթողիկոսը ստիպուած եղաւ գնալ Սիւնիք, և ձեռագիր երդումով ընդմիշտ հնադանդութեան հրաւիրեց: Այնուհետեւ թէ և 1113-ին մի թոյլ փորձ փորձեցին դարձեալ ապստամբել

էջմիածնու աթոռի դէմ, բայց և այնպէս անհետեանք քնաց:

Սիւնեաց եպիսկոպոսարանը թէեւ առաջուց որոշուած էր հաստատել որ և է մի քաղաքում կամ այլուր, ուր կար ժողովրդի բնակութիւն, բայց յետոյ նպատակայարմար դտան հաստատուել Տաթևու վանքում, որի նկարագրութեանն և դառնանք այժմ:

* * *

Տաթևու հռչակաւոր մենաստանը, որի լուսատիպ արտատիպը դնում ենք մեր հանդիսի այս դրքում, գտնվում է Սիւնեաց աշխարհում մի վիթխարի ապառաժ վայրի վերայ, Դիզափայտու լեռների հանդէպ: Իւր բարձրադիր դիրքով, որ դէպի արևելք ընկած բազմաթիւ գիւղերի նկատմամբ դիտանոցի է նմանում, ներկայացնում է կիսալուսնի ձևով մի տափարակ վայր՝ ըջապատած բարձր և սուր լեռներով: Վանքի առաջին կողմից ընկած են գեղեցիկ և ընդարձակ ձորեր ու խիտ անտառներ, որոնց միջով ահադին զգրգիւնով ու դոչիւնով անցնում է Որոտան գետը: Զորը լի է այգիներով և զանազան հոտաւէտ ծաղիկներով: Սյստեղ, ուր այժմ կանգնած է Տաթևու վանքը, հին ժամանակներում, դեռ Մեծն Ներսէսի և Սահակայ օրերում, կար որձաքարից շինած անշուք մի հին եկեղեցի, ուր ձգնում էին մշտապէս հայ ճգնաւորներ:

Սյս հնադարեան եկեղեցու կամ որ աւելի ճիշտն է մատուռի հիմնարկութեան մասին, թէ երբ կամ ումից է շինուել, ոչ մի դրական տեղեկութիւն չկայ, թէև ոմանք անգիր աւանդութեան վերայ յենուելով, այդ մատուռի շինութիւնը վերագրում են Թադէոս առաքեալի աշակերտ Ստաթէ առաքեալին, որի անունը իբր թէ ժամանակին աղճատուելով վերածուել է Տաթևի, դորանից և Տաթև. հետեապէս և այժմեան Տաթևու վանքի անունը իբր թէ Ստաթէ անունից է յառաջանում: Սակայն յիշատակաց արժանի Կարապետ վարդապետ Շահնազարեանը միանդամայն ժխտում է այս ենթադրութիւնը: Բազմահռչակ հայ վեղարակիրը իր հրատարակած «Ստեփաննոս Օրպելեան պատմութեան» յառաջաբա-

նում ոչ միայն չէ ընդունում այս տարածուած կարծիքը, որ իբր թէ այդ մասուռը շինած է Ստաթէ առաքեալը, այլ մինչև անգամ ժխտում է նոյն իսկ Ստաթէ առաքեալի Սիւնիք զալը, քարոզելը, նահատակուելը և վերջապէս թաղուելը: Իր այս տեսակէտը նա ապացուցանում է գլխաւորապէս նորանով, որ մասնաւորապէս Սիւնիքի մասին զրող մատենագիրներ ի երկերի մէջ ոչ մի տեղ և ոչ մէկի զրուածքում դէթ սոսկ յիշատակութիւն չկայ Ստաթէ անուան մասին, երբ այնպիսի մի մատենագիր, ինչպէս Ստեփաննոս Օրպելեանն է, զրում է Շահնազարեանց, անշուշտ ուրախութեամբ կը յիշատակէր այդ երևոյթը, եթէ իրօք Ստաթէ անունով առաքեալ մուտ գործած լինէր նորա սիրած Հայրենի Սիւնիքը:

Ստեփանն Օրպելեանն, որ ապրում էր տասներեքերորդ դարում, ասում է, որ Տաթև անունը անձանօթ էր Սիւնիքում և թէ մինչև իններորդ դարը, երբ Հիմնուել է այժմեան Հայկական նշանաւոր ուխտատեղին, որ կոչւում է Տաթև, ամբողջ Սիւնիքում չկար և ոչ մի երեւելի շինուած, այլ թէ իններորդ դարում Սիւնեաց Դաւիթ եպիսկոպոսը առաջինն եղաւ, որ գնեց Փիլիպպէ իշխանից մերձակայ զիւղերը նորա շրջակայ ագարակով և այդտեղ Տաթևում Հաստատեց իր եպիսկոպոսական աթոռը: Իսկ յետոյ Սիւնեաց աշխարհի միտրապոլիտ Յովհաննէս եպիսկոպոսը հրեշտակի երևմամբ 896 թուին քանդում է վերոյիշեալ Հնակառոյց տաճարը և Սիւնեաց իշխանների օգնութեամբ կառուցանում է տաճարի նոյն տեղում բարձրաձեղուն մի նոր, հրաշալի եկեղեցի, վայելուչ կաթողիկէով, երկու Հաստաբեւո սիւների վերայ, դանկազատնով, միաբանների խցերով, շրջապատուած ամրակուռ բուրգերաւոր պարսպապատով: Տաճարի այս Հիմնակութեան օրից մինչև 1400 թուի սկզբները, ինչպէս յիշեցինք, Տաթևու վանքը յիշատակւում է միշտ ս. Պօղոս և Պետրոս անունով, նաև ս. Գրիգոր Լուսաւորիչ, մեծ տաճարին կից կանգնած փոքրիկ եկեղեցու անունով:

Այս մասին լիովին տեղեկութիւն տալու նպատակաւ, պէտք է յիշել նաև, որ Սիւնեաց պատմագրի վկայութեամբ

Սիւնիքում բրիստոնէութիւնը մուտ գործելուց յետոյ՝ այս աշխարհի մայր եկեղեցին, ուր երկար ժամանակ նստում էին սեղւոյս վիճակաւոր եպիսկոպոսները, Շաղատ գիւղաքաղաքի տաճարն էր համարվում, որտեղ իւրաքանչիւր տարի եկեղեցու հանգիսաւոր տօնախմբին, Սիւնեաց իշխանը ժողով էր ունենում երկրի բոլոր եպիսկոպոսներովը հանդերձ:

Սիւնեաց եպիսկոպոսական աթոռը Տաթև փոխադրելուս այս մենաստանն են փոխադրած և շատ ծանրագին հարստութիւններ ու սրբոց զանազան նշխարներ: Այդ սուրբ մասունքների մէջ մասնաւորապէս մեծ հռչակ ունի ամբողջ երկրում աստուածամուկ ս. Նշանը կենաց փայտից, որը իւրաքանչիւր տարի հոգեորականութիւնն այժմ շրջեցնում է թեմի զիւղերը նուէրներ ժողովելու համար: Այնուհետև անուանի է բաբկենեան ս. խաչը, սրբոյն Յովհաննու և Ստեփաննոս նախավկայի, Գրիգոր Լուսաւորչու, հռիփսիմէ կուսի նշխարները, ևն:

Թէև Սիւնեաց եպիսկոպոսարանը Տաթև փոխադրուելու օրից աւելի հռչակ ստացաւ այս սրբավայրը, բայց և այնպէս նորա սահմանը խիստ փոքր էր և անձուկ, ուստի և Սիւնեաց եպիսկոպոսարանի պէտքերին անբաւարար, որը, սակայն, ընդարձակուեցաւ միայն Դաւիթ միտրապոլիտի օրով իններորդ դարու սկզբում, երբ այս եպիսկոպոսը Սիւնեաց Փիլիպպէ իշխանից գնեց շրջակայ Արձիւ և Բերդկաներիչ գիւղերը իրենց ագարակներովը: Աւելորդ չենք համարում առաջ բերել այստեղ Փիլիպէ իշխանի և Դաւիթ միտրապոլիտի մէջ կապած այս վաճառման պայմանի զէթ մի մասը.

«Ես տէր Դաւիթ շնորհօքն Աստուծոյ Սիւնեաց եպիսկոպոս՝ ի մձդ (286) թուականիս հայոց, գնեցի զԱրձիւ ի տեառն Փիլիպպէ՝ Վասակայ որդւոյ Սիւնեաց տեառն, իւր սահմանօքն լերամբ և դաշտիւ, զոստին և զՅրբին, և զարօտ երկիր, զարա և զմարդ ևն ևն. Այժմ առաջ բերենք Փիլիպպէ իշխանի կողմից դրուած պայմանագրի մի կտորը.

«Ես տէր Փիլիպէ առի զգանձս ՚ի տէր Դաւիթ Սիւնեաց եպիսկոպոսէ ժռ. դրամ, և ապստուարեցի զզիւզդ ի սուրբ

խաչդ այդ սահմանաւոր, որ ի վճիռս գրեալս է... ետու ես տէր Փիլիպպէ զԲերդկաներեջոյ զկէսդ առ նա՝ քարին փոխան, և զկէսդ սուրբ եկեղեցւոյդ... Ծէրանահողմէր ի վայր ի գետու, և ի վեր ի կատարն... ի դաւակ»:

Փիլիպպէ իշխանն կամենալով աւելի ևս ապահովացնել Սիւնեաց այս մենաստանն, դորանից եօթ տարուց յետոյ, պարգևում է Տաթև անուանեալ զիւղը իր բոլոր շրջակայքով հանդերձ ի մշտնջենաւոր սեպհականութիւն մենաստանի:

Ահա այստեղ Դաւիթ եպիսկոպոսը շինում է և մի զեղեցկաշէն եկեղեցի՝ հին եկեղեցուն կից դէպի հարաւ, ս. Գրիգոր Լուսաւորիչ անունով: Վերջը, 848 թուականին, Դաւիթ եպիսկոպոսը վախճանուելով թաղուեցաւ եկեղեցու դրան առաջ: Դաւիթ եպիսկոպոսից յետոյ, Տաթևը ճոխացրեց նորա յաջորդ Սողոմոն եպիսկոպոսը զանազան ստացուածքներով, թանկազին նուէրներով, նաև մենաստանի մէջ աւելի կարգ ու կանոնաւորութիւն մտցրեց: Սողոմոն եպիսկոպոսի վախճանելովը, Սիւնեաց եպիսկոպոսական աթոռը բարձրացաւ Յովհաննէս եպիսկոպոսը: Սա տեսնելով Տաթևու հին եկեղեցու խախտեալ վիճակը, մտածում էր նորից կառուցանել, մանաւանդ որ եպիսկոպոսական այդ մայր եկեղեցին առանց մեծ կաթողիկէի էր, որը ընկել էր ժամանակաւ տեղի ունեցած շարժից: Եւ մինչդեռ նա մտաւանջութեան մէջ էր նորոգ կառուցանելիք եկեղեցու համար նիւթականի կողմից, նորան երեւեցաւ Աստուծոյ հրեշտակը, որ և քաջալերեց աստուածավախ եպիսկոպոսին իսկոյն ձեռնարկել շինելու մտադրուած տաճարը, նոյն իսկ գծադրելով տեղը, ս. Պօղոս և Պետրոս առաքեալների անունով: Սիւնեաց իշխանները լսելով Աստուծոյ հրեշտակի այս յայտնութեան մասին, առաջարկեցին Յովհաննէս եպիսկոպոսին ծախսի համար բոլոր հարկաւոր գումարը, որով և նա կանգնեց նախկին խախտեալ տաճարի տեղը նորը՝ դմբէթայարկ և հինգ սեղանով, նոյն դիրքով, ինչպէս որ կայ կանգնած մինչև այսօր: Նաև եկեղեցու ծածքի տակ կառուցանում է երկու հրաշակերտ սիւն ի յիշատակ Պօղոս և Պետրոս առաքեալների, որոնց մասունքներն էլ

դրին նոցա Հիման տակը, իսկ մնացեալ բազում առաքելոյ, Հայրապետաց և մարտիրոսաց մասունքներն էլ տեղաւորեցին եկեղեցու Հիման և անկիւնների մէջ:

Այս տաճարի շինութիւնը տեւեց տասնութէկ տարի, որից յետոյ Յովհաննէս միտրապոլիտը եկեղեցու Հարաւային դրան Հանդէպ կառուցեց մանր կոփածոյ քարերից կերտուած զարմանալի մի սիւն ս. Երրորդութեան անունով: Այս սիւնը կամ ինչպէս նաև անուանուեցաւ զաւաղանը, մօտաւորապէս ութ արշին բարձրութեամբ, շարժվում, օրորվում է, երբ ով և իցէ խիստ ոյժով շարժում է: Սիւնի գլխին կայ կիսաբոլոր մի շինուածք, որի մէջ է քանդակագործ մի խաչ: Սորա շարժուելու պատճառը ոմանք բացատրում են նորանով, որ Հիմքը մեծ ճարտարութեամբ դրուած է սնդկի վերայ: Միտրապոլիտը եկեղեցին շրջապատում է սրբատաշքարեայ պարսպով, իսկ մենաստանը կոփածոյ քարով: Այնուհետև Հարթում է գետինը ու վանքի ներքեւը զեանի տակ զաղանանոցներ և եկեղեցու Համար դարան է շինում և այսպէս շատ Կործեր է տեսնում վանքի օգտին:

Այդ ժամանակ Տաթևու մենաստանը ծաղկում է ոչ միայն շինութիւններով, այլ և ճոխանում է նորա դպրոցը ուսումնական կրթութեամբ, ուր գտնվում էին նաև արուեստաւոր նկարիչներ ու զրոզներ: Բայց տասներորդ դարում արաբացիք յարձակուելով Սիւնիքի վերայ, կործանում են եկեղեցին և Տաթևու վանքը կրակի տալիս, որը, սակայն, նորից նորոգում է Յովհաննէս եպիսկոպոսը: Իսկ տասներկուերորդ դարու կիսում Բաղաց Սենեքերիմ Ե. Թագաւորը և նորա քոյր Շահանդուխտ բաւականին պարգև և ժառանգութիւն են շնորհում Տաթևու մենաստանին: Տասներորդ դարում Սմբատ Օրպելեանը նորոգում է աւերուած Տաթևը, իսկ Տարսախճ Օրպելեանը՝ Տաթևու վանքը զարդարում է գեղեցիկ սպասներով և զգեստներով և եկեղեցուն վերադարձնում է վաղուցուանից յափշտակուած նորա ժառանգութիւնը. հաճի, Յուր, Խոս և Քելէւան իրենց սահմաններովն և իր ձեռակերտ Խոտաւէտ այգին: Մայր եկեղեցու առաջին գտնվում է ան-

շուք և փոքրիկ դաւիթ, ուր ամփոփւում է Տարսաիճի կնոջ մարմինը: Տաճարի հարաւային կողմից ընկած է սիւնաղարդ սրահանք մի այլ դաւիթ, որ կառուցած է Յովհաննէս արքեպիսկոպոսը Սմբատ Թաղաւորի օրով. սորա ներքին ծայրում է շինուած այն քարաշէն եկեղեցին, որ Փիլիպպէ իշխանը կառուցեց ս. Գրիգոր Լուսաւորչու անունով Դաւիթի եպիսկոպոսութեան միջոցում: Դաւիթ արեւմտեան կողմում բարձրացնում է վեց գեղեցկատեսիլ սիւների վերայ տաճարի զանկադատունը սրածայր կաթողիկէով: Այս դաւթի մէջ տեղում մայր եկեղեցուն կից կանգնած է մի վայելուչ փոքրիկ մատուռ, որի դուռը տանում է ս. տաճարի մէջը: Այստեղ, այս մատուռի մէջ է գտնւում անուանի Գրիգոր Տաթևացու մեծ վարդապետի դամբարանը, որն այնքան երկիւղածութեամբ յաճախում է իւրաքանչիւր տարի ուխտաւորների մեծ բաղմութիւն: Այս մատրան մէջ է պահւում և մեծ վարդապետից դրուած ինքնագիր ս. Աւետարանը ասղէնկարի պահաւանովը հանդերձ, որը յօրինած էր աւետարանի պահպանութեան համար Տաթևացու հռիփսիմէ քոյրը:

Պարսպի մեծ դրան հիւսիսային կողմում կայ կանգնած մի փոքրիկ եկեղեցի, վայելուչ կաթողիկէով, որը կառուցել է Գրիգոր սիւնեաց եպիսկոպոսը: Վանքը շրջապատում է ընդարձակ, կրաշաղաղ և բուրգերաւոր պարիսպապատ: Այստեղ են ընկած Տաթևու միաբանութեան կոփածոյ և հասարակ քարերից շինած բաղնիսթիւ խցերը, իսկ առաջնորդի բնակարանը գտնւում է քարափի վերեւում, որտեղից բացւում է բնութեան հրաշալի տեսարան. ահադին ձորեր, քարանձաւներ ու խիտ անտառներ:

Պարսպի արտաքին կողմերում զէպի արեւելք ընկած է անուշահոտ ծաղիկների բուրաստան, իսկ տաճարի վերեւ գտնւում է մօտակայ վտակներից բերած մի քաղցրահամ աղբիւր:

էր



Այրի վանքը կամ Ս. Գեղարդ: Տ. Փեշմալճեանի լուսանկարից:

Монастырь Св. Кегарта.

Автотипія Ангерера въ Вѣнѣ.



Գեղարքունեաց լեռների մի ոստը ձգուելով հիւսիսից դէպի հարաւ և զանազանակերպ բարձրութիւններ առաջանելով Գեղարքասար անունն է կրում (Նէլթէփէ): Երկու կողմից հետզհետէ իջնելով՝ նեղ ու անձուկ կոհակներ է կազմում, որոնց միջով խոխոջալով վազում են մերձաւոր ձիւնապատ զաղաթների տղբերավայրերից սկիզբն առնող վտակները և արագահոս ընթացքով գահավիժում են և խառնվում ձորակի միջով հոսող Ազատ գետի կամ Գառնի գետի հետ, որը այնքան նեղ է ու խոր, որ երբեմն Սիւնեաց պատմիչ Ստեփաննոս եպիսկոպոս Օրպելեանի պատմութեան մէջ Խրան Գառնոյ է կոչվում:

Ահա այս ձորակի մէջ, Ազատ գետի աջ ափին, ընկած է Սյրի վանքը մի փոքրիկ տափարակի վերայ: Սյրի վանքը հայոց բաղմաթիւ ու հոյակապ նախնի յիշատակարանների մէջ, թէ իւր գեղեցկութամբ, թէ իւր զարմանալի քանդակներով առաջին տեղերից մէկն է բռնում: Նորա արտաքին և ներքին տեսքը ոչ միայն մեզ են զարմացնում, այլ և շատ եւրոպացի ճանապարհորդներ, (ինչպէս Մորիէ անգղիացին, 1813 թ. Տիւպուա չելուետացին, 1834 թ. Քէր-Բորդր անգղիացին, 1819 թ), որոնք ապրելով լուսաւոր և յառաջադէմ Եւրոպայի կենդրոնում, սովորած լինելով հրաշալիքները սառն աչքով դիտել, այսօր մտազբաղ կանգ են առնում այս մենաստանի առաջ, հրձվում, հիանում և միայն ենթադրութիւններով են կամենում բացատրել զանազան մանրանկարների և խաչքարերի բարդ ձևեր փորագրող, մեղնից վարերով առաջ ապրող, վարպետների հմտութիւնը: Հէնց նոյն իսկ եթէ Սյրի վանքի ճարտարապետական գեղեցկութիւնը չը լինէր, այ-

նուամենայնիւ նորա արտակարգ բանաստեղծական զիրքը բաւական էր հետաքրքիր աչքերին զոհութիւն և բանաստեղծին ոգևորութիւն պարզեցնու համար:

Ընկնելով ձորակի մէջ, ձորակ՝ որը ոլոր ու մոլոր պտոյտներով դէպի հիւսիս դնալով կորչում է լեռների մէջ, Գեղարդայ վանքը առաջին անգամ աչքի չէ ընկնում: Ծանապարհորդը մտնելով ձորակը, տեսնում է երկու կողմից բարձրանիստ սեպաձև քարաժայռերից լեռներ, որոնք խսկառկտրում են հորիզոնը և մի երկար շերտ առաջացնում մարդու գլխի վերայ: Լեռները ոչ աստիճանաբար իջնելով յած դէպի Աղատ գետի ափերը, մի անմատչելի պարիսպ են առաջացնում հիւսիս և հարաւային կողմերից: Լեռների լանջի վերայ ընկած են բաղմաթիւ այրեր և քարանձաւներ, որոնցից շատերը հովիւների և ոչխարների համար իբրեւ պատրսպարան են ծառայում: շատերը եղել են խստակեաց ձգնաւորների աղօթատեղի, ուր մինչև այժմ էլ նորանց ծնկներով մաշած քարերը կան, իսկ շատերն էլ այնպիսի զիրք ունին, որ բոլորովին անմատչելի են և թերեւ մինչև այժմ ոչ ոք այնտեղ ոտք անգամ չէ կոխել: Այսպիսի անմատչելի այրերը վայրենի թռչունների բնակարան են, որոնց միջից անդադար, մանաւանդ դարնան ամիսներին, լսվում են հազար ու մի տեսակ թռչունների երգեր և դայլայլիկներ, որոնք արձագանք տալով հեռաւոր քարանձաւներում և խառնուելով խողովացող Աղատի ալեծուփ ձայների հետ, մի տեսակ ներդաշնակ երաժշտութիւն են կազմում: Գետի աջ և ձախ ափերը ծածկուած են մացառուտ անտառներով, որոնք փոփում են մինչև լեռների գագաթները և դիտողի աչքին մի կանաչ գորգի են նմանում: Չնայելով որ այդ անտառները խիտ ու անանցանելի չեն, բայց միշտ անմշակ մնալով և մանաւանդ իրենց զառիվայր զիրքը արգելք լինելով մարդկանց ներս թափանցել դէպի ամենահեռաւոր մասերը, մի տեսակ կուսական անկիւններ են կազմում: ուստի և վայրենի գազաններից և կենդանիներից մի քանիսները, արջ, գայլ, աղուէս, եղջերու, քօշ, ամենայն համարձակութեամբ իրենց համար

բնակութիւն են հաստատել այդ մարդկանց անմերձենալի տեղերում: Այս անտառները, ինչպէս երևում է հետքերից, մի ժամանակ աւելի ընդարձակ տեղ են բռնած եղել, բայց մերձակայ զիւղերի բնակիչները անդադար կտրատելով ոչնչացրել են և միայն թողել են այն մասերը, որոնց կտրելը զգուար է եղել:

Ձնայելով որ Երևանից միայն մի քառասուն վերստ հեռաւորութիւն ունի Գեղարդաձորը, նա այնուամենայնիւ բոլորովին տարբերվում է թէ կլիմայով, թէ օդի բարեխառնութեամբ և թէ շատ բոյսերով: Այն ժամանակ, երբ Երևանում սարսափելի շոգեր են տիրում, օրինակ օգոստոսի սկզբներին, Գեղարդաձորում մինչև անգամ ցրտեր են լինում: Ժամանակի տարբերութիւն կայ և պտուղների հասունանալու մէջ: Այս ամենից յետոյ հասկանալի է, թէ ինչպիսի դիրք ունի Այրի վանքը:

* * *

Յովհաննէս Զ. Դրասխանակերտցին իւր պատմութեան մէջ թէւ յիշում է Այրի վանքի անունը, բայց չէ բացատրում, թէ որտեղից է դուրս եկել այս անունը: Նորա պատմելով՝ Այրի վանքը շատ հին է, հինդերորդ դարու դործ, որովհետեւ նա ս. Սահակ Պարթևի կայանք է անուանում: «Այսպէս ապա ելեալ ի վանացն անտի Այրից ի կացըդդից սրբոյն Իսահակայ, որ ի ծործորս լերին զետոյ, որ ի ձորակի միոջ դէսլ ուղիղ գնացաք և ելաք ի վերին վանս, ուր կայանք անասնոցն էին, և անտի չուեալ գնացաք ի միայնացելոցն կուսակրօնից միայնարանս որ ի Սևան կղզւոջ»: Ստեփաննոս Օրպելեան պատմիչը իւր պատմութեան մէջ յիշում է, որ Դրասխանակերտցուց առաջ 835 թ. Յովհաննէս Ե Ուխայեցի (Կոտայքում) կաթողիկոսը, երբ իրեն ուղղում էին աքսորել, թողնում է կամովին կաթողիկոսական դաշը և քաշվում է Այրի վանքը այնտեղ ապրելու: Բացի այս երկու պատմիչները, նոր պատմիչ Յովհաննէս եպիսկոպոս Շահխաթունեանցը, տեսնելով վանքի արեւելեան կողմ գտնուած եկե-

ղեցիները, որոնց վերայ արձանագրութիւն չկայ, աշխատում է ցոյց տալ, որ Սյրի վանքի անունը այդ եկեղեցիներին է պատկանելիս եղել, որ յետոյ տարածուել է ամբողջ մենաստանի վերայ: Բայց մենք չենք կարող ընդունել Շահխաթունեանի բացատրութիւնը, ինչու որ շինութիւնը աւելի մօտ ժամանակի է վերաբերում, և թէ աւելի հաւանական է Դրասխանակերտցու խօսքերը՝ «ի կացրից սրբոյն Իսահակայ», որից մենք կարող ենք եղբակացնել, որ Սյրի վանքը Երդ դարումն է հիմնուել: Ծիշտ վանքի շինութեան տարին որոշել չէ կարելի, որովհետեւ անդադար վերանորոգուելով, ժամանակի կատարեալ անորոշութիւն է ներկայացնում: Ահա ի՞նչ է ասում վանքի աւագ խորանի հիւսիսային պատի վերայ գտնուած արձանագրութիւնը «Շնորհին Աստուծոյ, ես Պռոշ իշխան որդի Վասակայ յաղղէն Խաղբակայ զանձակին արարի ի տէրանց աշխարհիս սուրբ ուխտս Սյրի վանից լերամբք և դաշտաւք և ամենայն կազմութեամբ որ կայր ի սմա... ոսկի և արծաթ խաչ և պահարանս, սկիզբ բուրվառի և քջօցաւք շինեցի եկեղեցիս և կանդնեցի սուրբ նշանքն և յարմարեցի զերեզմանատուն ինձ և աղգի իմոյ յաւիտեան և տուի ի սպասաւորութիւն սրբոցս այս հալալ զանձաղին գեղն Զողջաբեր զբերդաւն և ժմ սպ... որ խոստացաւ Զաստկին պատարագ և տարին անխափան կատարեն զյիշատակ մեծ պարոն Պռոշի զարմից և զաւակաց նորա յաւիտեան ի թ. 218»: Այս արձանագրութիւնից երևում է որ 732 թ. Պռոշ հայոց իշխանը վերանորոգել է վանքը և ազարակներ ու գիւղեր է նուիրել. իսկ թէ մինչև այդ թիւը ի՞նչ դրութեան մէջ է եղել վանքը, այդ մասին արձանագրութիւնները ոչինչ չեն ասում:

Բացի այս արձանագրութիւններից կան և շատ սւրիշները, որոնք յիշատակում են զանազան բարեգործ մարդկանց նուիրատուութիւնների մասին: Այդ արձանագրութիւնների մէջ ուշադրութեան արժանի է ժԲ դարի Զաքարիայ սպասալարին վերաբերեալը. «ի ժամանակս թագաւորազնոյն Զաքարիայի և Իվանէին նորին հարազատի և որդւոց նոցին

Շահնշահի և Աւագին և առաջնորդութեամբ Բարսղի միայնաւորի և աշխատութեամբ եղբարցս շինեցաւ կաթողիկէս մեծափառ, թուին ՈՒԴ»։ Սորանից երեւում է, որ կաթողիկէն ԺԲ. դարու դործ է։ Զաքարիայ և Իվանէի բարեգործութեանց յիշատակները՝ հայոց շատ վանքերում կան. համարեա նոյն բովանդակութեամբ արձանագրութիւն կայ և Ծաղկաձորի վանքերի ճակատին։

Մի քանի ժամանակ անցնելուց յետոյ, եբք ս. Գեղարդը բերում են Սյրի վանք, ժողովուրդը համարեա բոլորովին մոռանում է նախկին անունը և սխտում է Գեղարդայ վանք անուանել։ Թէ ե՞րբ բերուեց ս. Գեղարդը, դորա մասին ճիշտ տեղեկութիւն չկայ, միայն Վարդան աշխտրհագիրը, որը ԺԴ դարում էր ապրում, յիշում է, որ «Սյրի վանքն, ուր կայ ս. Գեղարդն աստուածամուկն ներկեալ արեամբ Կենարարին և Տախտակն սուրբ տապանակին Նոյայ, և նա է տուն հայաստանայցս, հաստատեալ ի սուրբն Լուսաւորչէն»։ Ըստ աւանդութեան ասում են, որ Գեղարդը ԺԵ. դարումն է բերուել։

* * *

Գեղարդայ վանքը ամբողջապէս շինուած է յղկուած կարմիր քարից։ Նոքա արտաքին տեսքը շատ գեղեցիկ է և խաչաձև. աչքի է ընկնում մանաւանդ կաթողիկէն, որի վերին մասը շղթայաձև ծաղկանկար գօտիներով է և տասնուվեց անկիւնաւոր կամարաձիգ և սիւնազարդ շրջանակներով է զարդարուած, որոնցից ութի մէջ, մէկ ու մէջ նեղ ու երկայնաձև լուսամուտներ են շինուած։ Թէ այդ շրջանակների և թէ կամարների ու լուսամուտների զլիւններին և թէ անկիւնների մէջ հիւսնալի քանդակներ կան, որոնցից մի քանիսը աստղաձև և շուշանաձև ծաղիկներ են, մարդու գլուխ, վարդեր, խաղողի ողկոյններ։ Սիրուն ճարտարութեամբ դուրս է բերուած մանաւանդ մի սաւառնաթև արծիւ, որը իր մազիւններով բարձրացնում է դառին։ Սյնուհետեւ կան քանդակած թռչուններ, նապաստակ, եղան գլուխ, իսկ ընդհանրապէս տաճարի չորս կողմը զարդարուած են վեց թևեան հրեշ-

տակներով, երկգլխեան արծիւներով և այլն: Տաճարը երկու դուռն ունի, մէկը հարաւից, միւսը արեւմուտքից, որը բացվում է ընդարձակ ժամատան մէջ. հարաւային դրան արտաքին տեսքը գեղեցիկ քանդակագործութեամբ պրուստացած են միմեանց վերայ եկած սիւնաղարդ կամարներով, մանտաւանդ բուն ճակատը, որի վերայ քանդակուած են Հինգ հատ խաղողի որթեր, նռնենիք, որոնցից կախուած են պտուղները: Դրան վերի քառանկիւնաւոր քանդակագործ շրջանակի միջին կողմն՝ որտեղ արձանագրութիւն է երեւում՝ աջ ու ձախ կողմից փորագրուած են երկու թռչուն, սակայն մէկի գլուխը կտրած. սորա վերեւ գտնվում է հարաւային քառանկիւնի մեծ լուսամուտը, որի ձախ կողմը մի հատ փոքրիկ, մարմարիոնից շինած խաչ և արեւի քանդակած ժամացոյց կան: Լուսամուտի գլխին կան երկու սոսկալի առիւծներ և ցուլեր, առիւծը իւր թաթերը դնելով ցուլի ուսերի և մէջքի վրայ՝ ջարդել է ուզում, իսկ ցուլն իւր սրածայր եղջիւրները անցկացնելով առիւծի փորի տակ ուզում է շուռ տալ: Ինչպէս հարաւային պատի աջ և ձախ դրան, նոյնպէս և արեւելեան պատի մէջ երկերկու բարձրադիր ներս ընկած երկայն խորշեր կան, որոնց գլուխները զարդարուած են մանրանկար պտորտաւոր համարներով:

Մենաստանը ներքին կողմից բազկանում է երկու գլխաւոր բաժանմունքից: Բաժանմունքներից առաջինը, որի դուռը բացվում է դէպի հարաւ, Ժամատան է կոչվում: Ժամատան տանիքը, ամբողջապէս բարից է և հաստատուած է չորս սիւնների վերայ: Վերեւում ընկած է շրջանաձև մեծ լուսամուտ, որի շուրջը նոյնպէս քանդակներով է զարդարուած: Ժամատան արեւտեան կողմում գտնվում է մի փոքրիկ խորան, ուր շինուած է մի աւաղան. այս աւաղանի մէջ կաթիլկաթիլ հաւաքվում է լեռան տակից ծծուած անձրեւաջուր, որի զանազան շերտերի միջից անցնելով զովում և աղբիւրի ջրի է նմանում: Ժողովուրդը այս ջուրը դործ է անում, իբրեւ բուժիչ միջոց և ամեն մի մուրազ ունեցող հայ ազգիկ կամ տղայ, ժամերով բերանը բաց կանգնում է կաթող ջրի տակ և

աշխատում է ամենայն եռանդով որ մի քանի կաթիլ ջուր ընկնի նորա բերանը:

Ժամատան արևելեան կողմը զտնուած բաժանմունքը իսկական տաճարն է, ուր կատարվում է ժամերգութիւնը: Տաճարը վիմափոր է և առանց սիւնի. միայն չորս հատ խարըս խաւոր որմնասիւններ ունի հատուածէ եռակարգ բաժանած՝ որոնց վերնախարսիների գլխի վրայով անցկացրած աջ և ձախ չորս կամարների վերայ շինուած է զմբէթը: Գմբէթի ներքին կողմում ընկնում են տասն և երկու կամարաձիգ և սիւնաղարգ շրջանակներ, որոնց իւրաքանչիւրի վերին անկիւնների մէջ քանդակուած են հրեշտակների պատկերներ: Տաճարի հիւսիսային պատի մէջ փորած է մկրտութեան ակաղանը, որի տակից մաքուր ջուր է բղխում: Տաճարի արեւմտեան դրան մօտ կան երկու խաչքարեր, որոնց վերայ այդպիսի արձանադրութիւն կայ. «Սուրբ խաչս կոչի Գաբրիէլի, բարեխաւս տէր Մանուէլ եպիսկոպոսի»: Տաճարը, որի բարձրութիւնը զմբէթից մինչև յատակը քսան և չորս կանգուն է, չորս խորան ունի, որոնցից երկուսը պատարագամատոյց սեղանի երկու կողմն են, իսկ միւս երկուսը արեւմտեան անկիւններումն. բացի այս բաժանմունքներից, մենաստանի շուրջը զտնվում են խորաններ և մատուռներ, որոնց սեւացած քարերը և ջնջուած արձանադրութիւնները վկայում են որ աւելի հին են, քան իսկ տաճարի շինութիւնը: Այդ մատուռները զանաղան անուններ ունեն. զորանից իւրաքանչիւրի մէջ մի յիշատակ կայ. ոտքերի տեղեր, ծնկների հեաքեր, որոնք ապացոյց են, որ այդ նեղ անկիւններում, աշխարհից հրաժարուած մարդիկ են ապրելիս եղել, իրենց օրերը անցկացնելով ծոմապահութեամբ և աղօթքներով:

Գեղարդայ վանքից դէպի արեւմուտք քարափների մէջ կան փորած այրեր, որոնք նոյնպէս իբրև ուխտատեղի են համարվում: Մի քանիսներն Քեօռ-օղլուի բերդ են ասում: Հատերը ճրը դատայ բերդ, բայց թէ ի՞նչ անուն ունին, իսկապէս, յայտնի չէ:

Գեղարդայ ամբողջ վանքը շրջապատուած է պարիսպներով: Պարիսպների ուղղութեամբ շինուած են փոքրիկ և

մութ խցեր, որոնցից մի քանիսը վանքի վանահօրն են ծառայում, իսկ մնացածը ուխտաւորներին: Սյս վանքում միաբանութիւն չկայ: Կառավարութիւնը կենդրոնացած է էջմիածնից նշանակուած վանահօր ձեռքում: Պէտք է ասել, որ այս վանքը մեր միւս վանքերի համեմատութեամբ աւելի շէն և բարեկարգ է: Տնտեսական վիճակը խիստ լաւ է. ունի եղներ, կովեր, ձիեր, ոչխարների հօտեր, որոնք առատութեամբ հոգում են վանքի պէտքերը: Ունի նոյնպէս զանազան տեղերում կալուածներ, այգիներ և տներ, որոնք տրվում են կապալով զանազան անձանց:

Գեղարդայ վանքը ընկնելով մի բոլորովին առանձնացած ձորի մէջ երբեմն ենթարկուել է աւազակների յարձակմանց, սակաւ չէ պատահել, որ տարիներով ժողոված հարստութիւնը մի զիջերուայ ընթացքում աւազակների կողոպուտ է դառել:

Գեղարդայ վանքի դիրքը, ինչպէս ասացինք, խիստ բանաստեղծական է, իսկ կլիման առողջարար, ուստի և այս վանքը էջմիածնի հոգեւորականների համար երբեմն ծառայում է իբրեւ ամառանոց: Նոյն իսկ մեր կաթողիկոսներից շատերը հնումը ամառները այստեղ են անցկացնելիս եղել:

Տարուայ ընթացքում շատ ուխտաւորներ են այցելում վանքը, առանձնապէս Վարդապետին և Աստուածածնի վերափոխման տօներին: Ուխտաւորները զլիւսաւորապէս մօտակայ քաղաքների և գիւղերի բնակիչներից են լինում, որոնց աւելի յայտնի է ս. Գեղարդի փրկարար զօրութիւնը. ուստի և տարուայ որոշ ժամանակներին դալով յերկրպագութիւն ս. Գեղարդի, մի և նոյն ժամանակ մի ազգային ժողովրդական հանդէս են կատարած լինում:

Ս. Գեղարդն էլ մեր վանքերից շատերի նման հայ ժողովրդի մէջ իբրեւ բանաստեղծութեան հովանաւոր է համարվում: Շատ գաւառացի աշուղներ երկար ժամանակ ծով ու պահք պահելով վանքի ուխտի օրերում իրենց չունդորի լարերը առաջին անգամն այս մենաստանի պատերի տակ են հնչեցնում, ազգային բանաստեղծները իրենց յօրինած երգե-

րը և լէլէները Գեղարդաձորումն են երգում, որոնց մէջ գովաբանվում է ս. Գեղարդը, յիշվում է նախնի հայ քաջերի անունները, մանաւանդ կարմիր, մեծ ու հզօր Վարդանը: Սուանձին բանաստեղծական ոգեւորութիւն է տիրում մարդուս, երբ այդպիսի ամառուան պարզ գիշերին, մերձակայ լեռների եակից բարձրանում է լուսինը, խաղում է իւր ճառագայթներով երբեմն հանդարտ՝ երբեմն բարձրաձայն՝ քրքրեցած ողջ Սգատի ալիքների հետ. ամբողջ ձորը մոգական դրութիւն է ընդունում: Լուսնեակ գիշեր, այրերի միջից որոտացող գիշերային թռչունները, դափ ու ղուռնա, այս ամենը մի արտակարգ տրամադրութիւն են պարգևում: Բայց փորձեցէք. մոտեւ մենաստանի բակը. ի՞նչ կրտսնէք. ձեր առաջ մի չը տեսնուած տեսարան է ներկայացնում: զոյնզոյն տարադնեւորով, ոսկի վընոցներով ու ապարանջաններով հարուստ զեղեցիկուհիները, ահագին շրջան կազմելով, ներդաշնակ ու մեղմ եղանակով սէր ու քաջութիւն են երգում: Սյդ ժամանակ նորանց շուրջը հաւաքվում են իրենց սիրած երիտասարդները, որոնք աչքի տակից նայում են իրանց նշանածացու աղջիկներին և այլ ևս չկարողանալով համբերել իրենք էլ շրջան են կազմում, իրենք էլ սկսում են երգել և մի տեսակ երաժշտական մրցում է առաջանում: Սյսպէս պար ու երգ իրար խառնելով, նորանք իրենց ունեցած լուսման թողնում են վանքին և ուրախ ու սփոփուած սրտով դառնում իրենց տեղերը: Պատահում է յաճախ, որ որպէս վերջին հրաժեշտ վանքին, հայ երիտասարդների արձակած հրացանների ձայնը զեռ երկար ժամանակ խորհրդաւոր արձագանքներ է տալիս Գեղարդայ հեռաւոր և ահռելի կիրճերի ու ձորերի մէջ:

Ս.



Տասներկուերորդ վարու վերջերում, երբ բարբարոս մոնղոլները իրենց ասպատակութեան ասպարէզ դարձրին Սիւնեաց քաջարի իշխանների օրրանը, երբ այդ արիւնարբու ցեղի հրոսակներն անդթօրէն սրի անցրին նաև Գանձակու բոլոր ազգաբնակութիւնը, նոյն իսկ այդ ժամանակ, 1181 թուականին, իր հայրենեաց աւերումներին ականատես ա-նուանի Մխիթար Գօշ վարդապետը, Գետիկ գեղատեսիլ վայրում, աջակցութեամբ Վախտանգ իշխանի և նորա Արզու-խաթուն ամուսնու, հիմն է դնում հայաստանի այն հռչակա-ւոր մենաստաններից մինի, որոնք այնքան նշանաւոր դեր են խաղացել բազմաշարժար հայ ժողովրդի կեանքում:

Այս մենաստանը, որ Վարդան աշխարհազիրը Գետկա-վանք կամ Գօշ Մխիթարի աթոռատեղի է անուանում, գտնվում է Արցախու նահանգում, Գետիկ կամ Տանձուտ գիւղատեղի մի վայրում, անտառներով շրջապատեալ: Մենաստա-նը, որ բաղկանում է մի քանի եկեղեցիներից, ընկած է լե-րան մի գեղեցիկ լանջի վերայ, որտեղից բացվում է բնու-թեան հրապուրիչ և վերին աստիճանի կենդանի մի տեսարան:

Առաջին եկեղեցին ս. Աստուածածնայ անունով կառու-յուած է մեծ ճարտարութեամբ ընտիր սրբատաշ քարերից: Սա ունի մի ընդարձակ գաւիթ չորս հրաշակերտ սիւնների վերայ. հնումը ունեցել է և փոքրիկ կաթողիկէ, որը այժմ խախտուած է: Մայր եկեղեցու ձախակողմում գտնվում է նուրբ քանդակագործութեամբ մի այլ քարաշէն եկեղեցի, որի սե-



Գօշ Մխիթարի վանքը: Մ. փառազեանի լուսանկարից.

Монастырь Гошъ—Мхитара.

Автотипія Ангера въ ІѢнѣ.



ղանի զողը շինած է Գրիգոր, Տղայ անուանեալ, կաթողիկոսը: Այս եկեղեցին հիմնարկած է Մարտիրոս անուամբ առաջնորդը, բայց Լուզիմ Սալահադինի արշաւանքների պատճառաւ չէ կարողացել աւարտել, որը, սակայն, վերջացրել է Կապալու Գրիգոր իշխանը 1241 թուականին: Սորա դրան երկու կողմում կան երկու խաչքար, որոնք իրենց ճարտար, նուրբ փորագրութեամբ բոլոր հայոց խաչքարերի մէջ գլուխգործոյր կարելի է համարել. գէթ մենք մինչև այժմ չենք տեսել հայոց քանդակագործութեան մէջ սոցա հաւասար մի հրաշալի գործ: Ի սրտէ յաւուր ենք, որ այս գրքի մէջ մենք կարող չեղանք դնել այդ խաչքարերի լուսատիպ օրինակները, որոնք անպատճառ գետեղելու ենք յաջորդ գրքում: Վերոյիշեալ փոքրիկ եկեղեցու յետևի կողմում կայ մի այլ եկեղեցի ս. Գրիգոր անուանով դարձեալ հարուստ չքնաղ կերտուածնեւորով: Այս եկեղեցուն կից ընկած են զանազան հայ պայադատների մատուռներ և դամբարաններ: Աւագ եկեղեցու աջակողմում կանգնած է զանգակատունը, որի կաթողիկէն բոլորովին քանդուած է. սորան կից կայ մի այլ եկեղեցի դարձեալ ս. Աստուածամօր անուամբ անսաշ քարից, որ այժմ աւերակ է: Այս վանքերի հանդէպ, ջրի միւս կողմում, գտնվում է Խաչատուր վարդապետի կառուցած կաթողիկէ եկեղեցին, որի մօտ է մի մատուռ, որի մէջ է Մխիթար Գօշ ս. վարդապետի գերեզմանը:

Մխիթար Գօշի վանքը ժամանակին բաւական բազմամարդ է եղած. այստեղ միաբանած են հոռւմը շատ յայտնի անձինք, նաև շատերը իրենց ամուսիններով, գէթ ինչպէս հաստատում են այն բազմաթիւ արձանագրութիւնները, որոնցով ծածկուած են այս սրբավայրի բոլոր պատերը, թէ ներքին և թէ արտաքին կողմից: Ժամանակին մեծ հռչակ վայելելով, հայ մեծատունք միշտ մեծամեծ նուիրաբերութիւններ են արած այս մենաստանին նորա ապահովութեան համար. այսպէս, 1289 թուին, Մանազկերտցի Ճար իշխանն ընդարձակ հող գնելով նուիրաբերում է այդ Մխիթար Գօշի մենաստանին, որի արձանագրութիւնը գրուած է ներկով սեղանի վե-

րէր ՁԼԲ Թուականաւ: Այնուհետեւ նուիրաբերութիւններ արած են. 1186-ին Գայլ իշխանը, նորա որդին Գայլաձագը, Սմբատ իշխանի որդի Գրիգոր չեջուբը, Իգանատիոս անունով վարդապետը, Կիրակոս Պատմագիր վարդապետը, որի նուիրատուութեան արձանագրութիւնը աւելորդ չենք համարում արտագրել սեղանի ձախակողմի կամարի վերայից...

«Կամաւն Աստուծոյ եւ Կիրակոս վարդապետ տվի 'ի մեր եկեղեցիս զիրք քսան եւ քառասուն դահեկան եւ մէկ շուրջառ. եւ դրի զդասերս միաբանքս տվին մեզ երկու պատարագ 'ի տաւնի Թադէի առաքելոյն»:

Այս վանքերի մօտի Գետիկ զիւղում այժմ ապրում են մօտաւորապէս քսան տուն հայ ընտանիք, որոնց հովուում է Տէր Աւետիս անունով քահանան: Ժամերգութիւնը կատարվում է Մխիթար Գօշի շինած ս. Աստուածածնայ աւագ եկեղեցում:



Ի դէպ այստեղ գետեղում ենք Մակարայ վանքի դրան ճակատին փորագրած ս. Աստուածածնի նկարի լուսատիպ օրինակը, որ միապատմութեամբ շրջապատ անցեալ դրոքում գետեղած Մակարայ վանքի նկարագրութեան մէջ:





Հաղարծնի վանքը Մ. Փափազեանի լուսանկարից:

Агарцинскій монастырь.

Автопнія Ангерера въ Вѣнѣ.

Հրատ. «Արարի» հանդիսի:

ТИП. ТОВА. «ОБЩ. ПОЛЬЗА»

Изд. лит.-худ. обозрѣній „Аракс“.



ՀԱՂԱՐԾՆԻ ՎԱՆՔԸ

Հաղարծինը ևս հնումը հայոց գլխավոր վանքերից մինն էր համարվում: Այս մենաստանը մասնավորապես սկսեց ծաղկել տասներեքերորդ դարու երեսնական թուականներից, երբ Տարօնեցի Խաչատուր վարդապետը առաջնորդ էր այստեղ, որի օրով հաղարծինում բազմացաւ և միաբանութիւնը: Նախ քան անուանի Խաչատուր վարդապետի հաղարծին գալը, այս վանքը երկար ժամանակներից ի վեր ամայի էր դարձած: Վրաց Գորգի Թագաւորը իր մասնավոր յարգանքի պատճառաւ դէպի Խաչատուր վարդապետը, առատ ընծայաբերութիւն է անում հաղարծնոյ վանքին, նուիրելով երկու գիւղ՝ Աբասաձոր և Տանձուտ ու մի այգի Միջնաշէնում: 1254 թուին Խաչատուր վարդապետը իր Բարսեղ եղբօր հետ կառուցանում են վանքի հանդէպ մի եկեղեցի երեք խորանից, դմբեթաւոր և անուանում են ս. Գէորգի անունով: Այս տաճարի հիմնարկութիւնից մի տարի յետոյ, այն է 1255 թուականի վերջերում, վախճանվում է յիշատակած արժանի Խաչատուր վարդապետը և թաղվում է եկեղեցու արեւմտեան կողմում: Հետեւեալ տարին, 1256 թուին, հաղարծնոյ վանքը առաջնորդ է նշանակվում Յովհաննէս ալմանեցի վարդապետը, որը նոյն տարին կառուցանում է երեւելի սրբատաշ քարերից մի ընդարձակ սեղանատուն միաբանութեան համար: Սա միաժամանակ առաջնորդ էր և Գետկավանքում, երբ այնտեղ առաջնորդի պաշտօնը թափուր էր: Յովհաննէս վարդապետը իր առաջնորդութեան օրով այստեղ՝ եպիսկոպոս


է ձեռնադրվում և մի քանի ժամանակից յետոյ ընդ միշտ փոխադրվում է հաղթատու նշանաւոր վանքը:


Հայ պայազատները և մեծատունները, նոյն և ժողովուրդը իրենց ջերմեռանդութիւնից միշտ մաս են հանած և այս վանքին, այդպիսով հաղարծնին բազմաթիւ նուիրատուութիւններ են արած, որոնց մասին վկայում են նաև մենաստանի անհամար արձանագրութիւնները:

Այս վանքը գտնվում է Գանձակի նահանգում, Դիլիջան ականի խճուղուց դէպի ձախ մօտաւորապէս ինը վերստ հեռավորութեամբ անտառապատ լեռնավայրի ստորոտում: Վանքը բաղկանում է երեք եկեղեցիներից՝ ս. Ստեփաննոս, ս. Գրիգոր Լուսաւորիչ և ս. Աստուածածին անուաներով: Ժամերգութիւնը լինում է այս վերջնոյն մէջ, ըստ որում մնացեալ երկուսը այժմ խախտեալ վիճակի մէջ են:

Այժմ բացի վանահօրից այստեղ ապրում են միայն մի սարկաւազ, տնարար և մի սպասաւոր: Վանքը հարուստ է ունի վարելահողեր, ջրաղաց, կովերի ու եզների հօտ:

Դեռ վերջերս, հաղարծնոյ վանքի շրջակայքում, ինչպէս յայտնի է, գտնուեցաւ մի ահագին պղնձեայ կաթսայ, երեք ոտների վերայ, որի վերայ կան այլ և այլ արձանագրութիւններ: Այս կաթսան այժմ գտնվում է ս. Էջմիածնի Թանգարանում:







тип. 81. голлс.

Գէորգեան Ճեմարանը. Տ. Փեշտմալճեանի լուսանկարից:

Эчміадзинская академія съ сѣверной стороны.
Фотографія Т. Пештимальна. Автотипія Ангерера въ Вѣнѣ.



ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆՈՒԷՐ ՀԱՅ ՎԱՐԺԱՊԵՏԻՆ

Վարժապետ, եթէ չես ուտում փլաւ,
Հաղիդ էլ չունիս աօնի մի հալաւ,
Գրպանիդ մէջը չըկայ հացի զին,
Ոտքիդ կոշիկը և՛ ծակ է, և՛ հին,—
Փոյթ չէ, սուրբ մշակ, խաչիդ պատուաբեր
Վերան զրաժ է կրել տանջանքներ,
Առաքինու պէս պէտք է համբերած,
Գործողին բաժին միշտ այդ է տուած:

Քեզ չի պատկանիլ նման միւսներին
Արժէք տալ փողին, փարթամ ապրուստին.
Լուսոյ սերմնացան, հազար պատիւ քեզ,
Ուսման հատիկը անխոնջ պիտ' ցանես.
Զարկամից կոխան թէ լինի ցանքըդ,
Զուր մի համարիլ զորժ զրաժ ջանքըդ.
Ապագան քոնն է, սրբազան զործիդ
Յօժար նուէր տուր և՛ սիրտդ, և՛ հոգիդ:

Վարար քրտինքովդ ոռոգուած ծիլեր
Կ'ուռճանան բարով, կրտան լի հասկեր,
Տաղնապոտ ժամին կարելի է գանգտել,
Բայց սուրբ շաւիղէն մե'ղք է վհատել:
Կրբօնը մեղնից խլեց շատ բիւրեր,
Վաշ, ուսման գործին քիչ են անձնուէր,
Ա՛խ, թէ մեր նախկին սուրբ ջանքը լինէր,
Ազգը կունենա՞ր այսքան խոլ, ցաւեր:

Ամենքն էլ լքեալ, դարձալ դու ես ժիր.
Պաշտելի կերօնդ կրիր անձանձիր.
Մի վախիլ վատթար անձանց նետերէն,
Գործըդ վեր դասիր քո թանկ արիւնէն:
Թող չըզնահատեն, չըտան կտոր հաց,
Հպարտ՝ ծրնել ես, ցրվերջ հպարտ կաց.
Աշխարհում լինիս անշուք, անապրուստ,
Բայց սե՛ծ ես գործով քան անթիւ հարուստ.
Փոյթ չէ, թոքերըդ թող հալուին-մաշուին,
Գործըդ ու անունդ անմոռ կը յիշուին:

Ս. Քաճալեանց



the morning of the 1st of June
the wind was from the north
and the sea was very rough
the ship was driven to the south
and the wind was from the south
the sea was very rough
the ship was driven to the north
and the wind was from the north
the sea was very rough

the morning of the 2nd of June
the wind was from the north
and the sea was very rough
the ship was driven to the south
and the wind was from the south
the sea was very rough
the ship was driven to the north
and the wind was from the north
the sea was very rough



Աշոտ Ողորմածի գերեզմանը: Պ. Ս. Լոյրի լուսանկարից:

Гробница Ашота Милостиваго.

Гравировалъ Беме.





Կ Ե Ն Ս Ա Գ Ր Ա Կ Ա Ն

ՍՏԵՓԱՆՆՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԽԻԹԱՐԵԱՆ

Այս տարի օգոստոսի 2-ին Թաւրիզում խոլերայից վախճանուեց Ատրպատականի առաջնորդ Ստեփաննոս եպիսկոպոս Մխիթարեանը։ Նա մեր այժմեան այն սակաւաթիւ Հոգեւորականներէցն էր, որոնք տեղն եկած ժամանակ իրենց բնածին բոլոր ընդունակութիւնները, իրենց ահագին եռանդն ու մտաւոր կորովը ներդաշնակութեամբ միաւորում են անտէր ժողովրդին օգնելու և իր անկեալ վիճակից բարձրացնելու ազնիւ ցանկութեան հետ, որոնք իրենց խորը հոգու բոլոր յոժը, բոլոր կիրքը, բոլոր սէրը վճռողական տարիներում կարողանում են կենդրոնացնել մի ողորմելի, մի յետամնաց, մի թշուառ ժողովրդի վերայ և՛ միանալով նրա ժամանակակից բուն կարիքների հետ՝ վերածնվում, մաքրվում, ազնուանում են այդ ժողովրդի սիրով, բոլորովին նոր մարդ են դառնում, ցոյց են տալիս բոլորովին նոր հոգեկան կարողութիւններ և շարժում են ժամանակակիցների ու յետնորդների պատկառանքըն ու զարմացքը։ Մեր ուշադրութեան արժանի սակաւաթիւ բարձրաստիճան հոգեւոր անձերի մէջ,—որոնցից ահա ամայանում է մեր կեանքը կարճ ժամանակից ի վեր,—Ստեփաննոս եպիսկոպոսը առանձնապէս փայլեց իր գեղեցիկ բարեմասնութիւններով՝ մանաւանդ Ատրպատականի առաջնորդ

նշանակուելուց յետոյ, երբ նա ոչ միայն ամուր սիրով իր հետ կապեց իւր հօտը և մի կարգ հայ երիտասարդութիւն, այլ և դէպի հայր ներշնչեց յարգանք ու համակրութիւն պարսիկ կառավարութեան և եւրոպական ազգերի ներկայացուցիչների մէջ, և երկիւղ ու ականաճութիւն՝ աւագակ խաների ու մարդորս այլազաւան քարոզիչների մէջ: Ահա այս պատճառով մենք ուրախութեամբ ձեռք ենք տալիս նորա կենսագրութեանը, և մի առանձին սիրով ու մանրամասնութեամբ կանգ ենք առնելու նորա կեանքի առաջնորդութեան տարիների վերայ: Շատ ենք ջալում, որ մեզ չը յաջողուեց առաւելութեամբ կատարել այս գործը՝ սրբազանի մասին մեր ունեցած նիւթերի սակաւութեան պատճառով, որովհետեւ մեզ նիւթ մատակարարել են զլիսաւորապէս մեր բոլոր պարբերական հրատարակութիւնները:

Ստեփաննոս եպիսկոպոսի ծնողները էրզրումից են դադրել 1827 թուի ռուս-թուրքական պատերազմից յետոյ՝ յայտնի Կարապետ արքեպիսկոպոսի դադրեցրած հայերի թուում, որոնք բնակութիւն հաստատեցին մեծ մասամբ Աղեքսանդրապոլ քաղաքում: Ահա այստեղ էլ ծնուեց Մխիթարեանը 1845 թ. և այդտեղի հոգևոր դպրոցում Էլ ստացաւ իւր սկզբնական ուսումը: Նա 12 տարեկան հասակում մտաւ իբրեւ ժառանգաւոր, այսինքն՝ կուսակրօն հոգևորական, ս. էջմիածնի հոգևոր դպրոցը, երբ նոր էր մեռել Ներսէս Ե-ը: Հինգ տարուց յետոյ, 1862 յունիսի 13, Մատթէոս կաթողիկոսի հրամանով չորս աստիճան է ստանում հանդուցեալ Մկրտիչ արքեպիսկոպոս Բարամեանից, իսկ յաջորդ տարուայ օգոստոսի 7-ին նոյն արքեպիսկոպոսից աւագ սարկաւազ է ձեռնադրւում: 1864 թ. ապրիլի 12-ին, երբ Մխիթարեան 19 տարեկան էր, արեղայ ձեռնադրուեց սինոդի անդամ Գրիգոր արքեպիսկոպոս Յովսէփեանից: Երկու տարի յետոյ, 1864 ապրիլի 13-ին, հոգելոյս Գէորգ Դ. կաթողիկոսի հրամանով ստանում է ծայրադոյն վարդապետութիւն Պետրոս արքեպիսկոպոս Վեհապետեանից: Վերջապէս 1882 մայիսի 9 Գէորգ Դ. կաթողիկոսից եպիսկոպոս է ձեռնադրւում և նշանակւում է

մի քանի ամսից յետոյ Ատրպատականի առաջնորդ: Բայց կաթողիկոսի մահը յետաձգում է այդ որոշումը մինչև նոր հայրապետի դալը, 1886 թիւը, երբ Մակար կաթողիկոսի 7 մայիսի № 264 կոնդակով դարձեալ նշանակվում է Ատրպատականի առաջնորդ:— Բայց այդ կարեւոր հովուական պաշտօնը ստանձնելուց առաջ Մխիթարեան սրբազանը իւր վարչական ու խելացի զիւով իր վրայ էր դարձրել սինոդի ու վեհափառ հայրապետների ուշադրութիւնը, ուստի իւր 16-ամեայ հասակից ի վեր նշանակուել է ամենակարեւոր վանական և արտաքին պաշտօնների, մանաւանդ խճճուած վիճակային ու կալուածական գործերի քննութեան ու զեղծութենքը վեր հանելու գործում, որի մէջ նա առանձնապէս ցոյց է տուել իր շնորհքը յօգուտ ս. Աթոռի: Այսպէս 1861 և 1862 թուականների ընթացքում սինոդի որոշման համաձայն նա վարում է կաթողիկոսական տան, շտեմարանի, հանդիսատան, մառանատան վերատեսչի ու կառավարչի և միանգամայն Մայր-Աթոռի ծախսարարի օգնականի պաշտօններ: Դրանց հետ միաժամանակ, այդ պատանի հասակում, կրօնուսոյց էր Վաղարշապատի զիւղական դպրոցում և քարոզիչ՝ նոյն զիւղի եկեղեցում: 1863—66 թուերին նա շարունակ վարել է՝ Մատթէոս կաթողիկոսի հրամանով՝ Մայր-Աթոռի ծախսարարութեան անդամի պաշտօնը և միաժամանակ Սատթէոս կաթողիկոսի քննչական գործերի առանձին յանձնարարութեանց պաշտօնէութիւնը: 1866 և 1867 տարիներում նշանակվում է սինոդի օրագրութեամբ Նոր-Բայազէդի դործակալ կամ յաջորդ և՛ Երեւանի վիճակային ատենի յանձնարարութեամբ՝ կատարում է նաև այդ ամբողջ դաւառի քննչական պաշտօնը: Նոր-Բայազէդում աբեղայ Մխիթարեանը յորդորում է քաղաքի հասարակութեանն ու համաձայնեցնում է որ նախկին անշուք ս. Կարապետ եկեղեցին հիմքից նորոգեն, որ և աւարտվում է իւր հռանայուց յետոյ այդ քաղաքից: 1868 և 1869 թուականներին, Գէորգ Դ. կաթողիկոսի առաջին տարիներում, Մխիթարեան սինոդի որոշմամբ դարձեալ վարում է ծախսարարի անդամի պաշտօնը, միաժամանակ Գէորդ

Դ. ի առանձին յանձնարարութիւնները կատարելով թեմերի զանազան քննչական գործերի մասին: 1869-ին նշանակվում է Հին-Նախիջևանի փոխանորդ: Այստեղ նա՝ առաջուց ծանօթ և մտերիմ բարեկամ լինելով զենեքալ Քեալբալայ խանի Հես՝ կարողացաւ համոզել նրան, որ քաղաքի կենդրոնում եղած իւր սեպհական զեախնը նուիրի Հայոց եկեղեցի շինելու համար, որի հիմքը հանդիսով օծելով սկսում է ս. Գէորգ հոյակապ եկեղեցու շինութիւնը: Նախիջևանի դաւառումն էլ Ստեփաննոս վարդապետը հիմնեց եկեղեցիներ ու դպրոցներ այն զիւղերում, ուր որ պակասում էին: 1872-ին Նախիջևանից Մխիթարեանը փոխադրվում է Տաթևի վանքը իբրեւ վանահայր և Սիւնեաց աշխարհի փոխանորդ, միաժամանակ և այդ վանքի հարուստ կալուածների կառավարիչ: Երիտասարդ վարդապետը բաւական հմտութեամբ առաջ տարաւ վանքի կալուածների դատը այլ և այլ դատաստանատներում և նոյա անկորուստ պահպանութեան համար շատ աշխատեց. նոյն նպատակով նա մի խիստ քննութիւն կատարեց Յովհաննէս եպիսկոպոս Ասլանեանի Տաթևում ունեցած պաշտօնավարութեան մասին: Այս վանքում Մխիթարեանը շինել տուեց մի քարուկիր հաստատուն վանական դպրոց և մի նոր առաջնորդարան ու միաբանների համար յարմար սենեակներ: Դպրոցի շինութիւնը նոր էր աւարտած, իսկ միւսները դեռ կիսատ էին, որ Գէորգ կաթողիկոսը կարեւոր համարեց 1876 արձակել նրան իւր վարած պաշտօնից և նշանակել լիազօր քննիչ Հին-Նախիջևանի վիճակի հոգեւոր գործերի և Երնջակի ու Կարմիր վանքերի, նաև Ղարաբաղի ամբողջ թեմի և թեմական ատենանի ու Սարգիս արքեպ. Ջալալեանի, և այլ մի քանիսի դաւադրութիւնների՝ Խորէն վ. Ստեփանէի և մի քանի շուշեցի առաջաւոր անձանց դէմ: Ամենայն յաջողութեամբ աւարտելով այդ պաշտօնը, վարդապետ Ստեփաննոսը հետեւեալ 1877 թուին դարձեալ Գէորգ կաթողիկոսի կոնդակով և սինոդի որոշմամբ նշանակվում է քննիչ Ռեսարաբիոյ և Նոր-Նախիջևանի թեմի, ուր լոյս է հանում զեղծումներ վիճակային և կալուածական գործերում: Սինոդը այս տես-

նելով նրան նշանակում է նոյն վիճակի կառավարիչ և Քիշ-
նեում եղած Էջմիածնի կալուածների վերահսկող: 1879 վի-
ճակային կառավարութեան պաշտօնը թողնելով իւր պաշտօ-
նավայրը նոր ժամանած Մակար արքեպիսկոպոսին (այժմ ի
Տէր Հանգուցեալ կաթողիկոս), ինքը միմիայն կալուածների
տեսչութեան պաշտօնն է կատարում մինչև 1882 թուականը,
երբ հրաւիրվում է Գէորգ կաթողիկոսից Էջմիածին եպիսկո-
պոսական ձեռնադրութիւն ընդունելու համար, որից յետոյ
կրկին վերադառնում է իւր պաշտօնավայրը՝ Քիշնէ: Այս
բաղաբում Էջմիածնի կալուածները յաջողակ տեղում լինե-
լով Հանգերձ՝ բաւական տարածութեամբ շատ տարիներ ան-
շէն ու անօգուտ էին մնում: Մխիթարեան սրբազանը կա-
րողացաւ առանց ս. Աթոռը ծանրաբեռնելու օգտաւէտ պայ-
մանով այն անշէն տեղերից ուրիշներին տալ շինելու և ապա
Աթոռի սեփականութիւն դարձնելու: Այժմ կալուածների
արդիւնքը եռապատկուել է այդ միջոցի շնորհիւ: Իսկ վիճա-
կային բազմակնձիռն գործերը, որոնք Այվազեան սրբազանի
առաջնորդութեան և նրա յաջորդների օրերից խառն դրու-
թեան մէջ էին, բոլորովին կարգի բերեց և այդպիսով մեծ
դիւրութիւն տուեց ատենական ընթացիկ գործերին: Մին-
չև 1883 թուի սկզբները մնում է այնտեղ իւր պաշտօնում,
և այդ թուին Էջմիածին է գալիս Ատրպատականի առաջ-
նորդ գնալու համար, ինչպէս որոշուած էր սինոդի օրագրու-
թեամբ և հանգուցեալ Գէորգ Դ-ի ցանկութեամբ: Սակայն
կաթողիկոսի մահուան (1882 դեկտ 6) պատճառով սինոդի
այս վճիռը փոփոխութեան ենթարկուեց և սրբազանը ստի-
պուած եղաւ Էջմիածնի վանքում մնալ ու սպասել նոր հայ-
րապետի գալստեանը: Վերջապէս ի Տէր Հանգուցեալ Մա-
կար կաթողիկոսը, ինչպէս վերելք յիշուեց, 1886 նրան Ատր-
պատականի վիճակաւոր առաջնորդ նշանակեց:

Ստեփաննոս սրբազանի կեանքի վրայ ձգած այս համա-
ռօտ ակնարկից երևում է, որ նա իւր պատանի հասակից
ցոյց էր տալիս վարչական շնորհք, արիութիւն, աշխիւ եռանդ
ու անկեղծ ցանկութիւն օգտաւէտ լինելու Մայր-Աթոռին,

միւսնոյն ժամանակ անաչոռ քննադատող միտք՝ որ բաւականութիւն էր գտնում ս. Աթոռի անհարազատ պաշտօնեաների ընթացքը մանրակրկիտ զննելու դործում: Նա իւր անվեհեր քննադատութիւններով և շիտակ բնաւորութեամբ վաստակեց ոչ-սակաւ թշնամիներ, որոնց համար ախորժելի չէր ենթարկուել սրբազանի սուր խայթոցներին և մերկացումներին, այս պատճառով այդ անձինք առաւելապէս ցանկանում էին որքան կարելի է իրենցից հեռու պահել անհանգիստ եպիսկոպոսին, որ տեղիք չլուսն նորանոր զեղծութեան վեր հանուելուն: Եւ ահա սրբազանին վիճակուեց Ատրպատականի հովուութեան գործը իւր վրայ առնել: Մինչև այժմ սրբազանը շատ սակաւ դէպքերում ստիպուած էր եղել գլուխ կանգնել մի բազմամարդ ժողովրդի, շփուել նրա հետ, հոգալ նորա պէտքերը: Նոր Բայազիդում ու Հին-Նախիջևանում վարած յաջորդութիւնն ու փոխանորդութիւնը ի հարկէ չունէին այն նշանակութիւնը, ինչ որ կարող է ունենալ Ատրպատականի առաջնորդութիւնը իւր կատարեալ անկախ դիրքով և իւր գրեթէ անյաղթելի դժուարութիւններով: Այս պատճառով խիստ հետաքրքրական է դիտել սրբազանի գործունէութիւնը նրա այդ փշոտ ասպարիզում, մանաւանդ որ Ատրպատականի թեմը հանգուցեալ ս. հօր հովուութեան ժամանակ խիստ հետաքրքրական գործունէութեան ասպարէզ էր: Բայց որպէս զի մեզ համար պարզ լինի սրբազանի գործունէութիւնը, մենք կարեւոր ենք դատում ներկայացնել այստեղ իրերի վիճակը նորա Ատրպատական մանելուց առաջ:

Ատրպատականի թեմն ընկնում է պարսից պետութեան Ալեքսէյժան նահանգում, որ տաճկաց և ռուսաց պետութիւններին սահմանակից է և որի զխաւոր քաղաքն է Թաւրիզ: Այստեղ է նստում Պարսկաստանի թագաժառանգ իշխանը՝ իբրեւ փոխարքայ, այստեղ է նստում նահանգապետը, այստեղ են անդլիացոց, ֆրանսիացոց, ռուսաց և օսմանեան հիւպատոսները, այստեղ է և հայոց առաջնորդարանը: Թաւրիզը միւսնոյն ժամանակ Պարսկաստանի ամենաբազմահայ քաղաքն է. մօտ 500 տուն հայերը զետեղուած են

քաղաքի երկու Հայկական թաղերում, Ներսի թաղում կամ
Ղալում՝ Աստուածածին եկեղեցով (որի բակումն է առաջ-
նորդարանը) և Արամեան ու օր. ա. Աննայի դպրոցներով և Դրսի
թաղում կամ Լիլավայում՝ ա. Սարգիս եկեղեցով և Հայկաղեան
դպրոցով: Ներսի թաղում ապրում են Հարուստ և վաճառ-
կան Հայերը, իսկ Դրսի թաղում՝ աղքատ ու արհեստաւոր
Հայերը: Դասակարգերի այդ բաժանումը իւր յոժը ցոյց է
տալիս նաև Հասարակային բոլոր գործերում: Հարուստ դա-
սակարգը, կամ «աղաները», նիւթականի ուժով իւր ձեռքն է
առել եկեղեցու, դպրոցի և նոյն իսկ ամբողջ թեմի գործերի
վարչութիւնը իբրև երեցփոխան, իբրև Հոգաբարձութիւն և
իբրև առաջնորդի խորհրդական անձինք, և գործերը վարում
է իւր կամքի ու քիմքի Համեմատ: Իսկ աղքատ դասակարգը
ստիպուած Համակերպվում է նոյա՝ վախենալով աւելի մեծ
վնասներից: Արամեան դպրոցը, որ թեմական է Համարվում,
Մխիթարեան սրբաղանի Թաւրիղ մանկըլ տարին ունէր 2
պատրաստական և 3 Հիմնական դասարաններ 5 տարուայ
դասընթացով. նա միւսն ժամանակ և՛ ծաղկոյցի, և՛ ծխա-
կան դպրոցի դեր է կատարում Ներսի թաղի Հայ մանուկների
Համար՝ մի ուրիշ ծխական դպրոցի բացակայութեան պատ-
ճառով նոյն թաղում. ընդունվում են 6-7-ամեայ մանուկներ,
աշակերտների թիւն է 110—130. ուսուցանում են Հայերէն,
պարսկերէն, Ֆրանսերէն և ռուսերէն լեզուներ, և մի
քանի առարկաներ. բայց բոլորը խիստ Հարեանցի ու ան-
Հաստատ: Դպրոցի տարեկան ծախսն է 1400 թուման (4000
մանէթ), որ ծածկվում է դպրոցապատկան զրամաղլխի (4000
թուման) տոկոսներից, աշակերտների տարեկան թոշակադրա-
մից (3 թ.), պարսից տէրութեան տարեկան 200 թուման
մշտնջենական նպաստից դպրոցի օգտին և ռուսաց տէրու-
թեան տարեկան 150 թ. նոյնպիսի նպաստից. ուսուցիչները
6—7 Հոգի են: Դպրոցը կառավարվում է 1875 Անդրէաս եպիս-
կոպոսի Հաստատած կանոնադրութեամբ, որի Համաձայն Թաւ-
րիղի բոլոր Հայ դպրոցների վարչութիւնը յանձնվում է 6
Հոգի Ժողովրդից ընտրուած Հոգաբարձուների, որոնց նախա-

զահը առաջնորդն է: Դպրոցը չունի տեսուչ, մասնավարժական ժողովներում նախագահում են Հերթով ուսուցիչները և Հերթով էլ վերակացութիւն են անում: Նոյն ծախսով և նոյն ուսուցիչներով կառավարվում է և Արամեանին կից օրիորդաց դպրոցը 2 պատրաստական ու 1 Հիմնական դասարաններով, որ 1886 թ. ունէր 20 աշակերտուհի. ուսուցանում էին միայն Հայերէն, ձեռագործ և մի քանի տարրական գիտելիքներ: Լիւթալայի ծխական դպրոցը 1886 թ. ունէր 90 աշակերտ, 2 պատրաստական և մի Հիմնական դասարան, ծախսն է տարեկան 215 թուման, որ մի կերպով հոգում է հոգաբարձութիւնը. հաստար եկամուտ չունի: 1876 թականից Թաւրիզի երկու Հայոց թաղերում հաստատուել են ամերիկացի միսիոնարները, «Պորտ» ընկերութեան առաքելները, որոնք խաղաղ ու հանգարտ առաջ դնալով իրենց ընտրած ասպարիզուս և ահագին գումարներ ծախսելով՝ 1886 թ. ունէին արդէն մի գեղեցիկ տղայոց դպրոց, ուր յաճախում էին 40 Հայ տղաներ, և մի նոյնպիսի օրիորդաց դպրոց՝ 48 Հայ աղջիկներով, որոնք ձրի և՛ ուսում, և՛ դասական պիտոյքներ են ստանում: Ընդամենը 3 միսիոնար, 3 միսիոնարուհի և մի բժիշկ են. ունեն մի ժողովարան և մի դեղատուն:

Թաւրիզի շուրջը 3 Հայ գիւղ կայ 200 տուն բնակչով, 3 եկեղեցով ու 4 քահանայով առանց քահանայի, մի ծխական դպրոցով. բողոքականներն ունեն մի ժողովարան և դպրոց:

1. Արգաբիւլ քաղաք, 10 տուն վաճառական Հայերով, մի փայտաշէն մատուռով՝ առանց քահանայի, մի ծխական դպրոցով. բողոքականներն ունեն մի ժողովարան և դպրոց:

2. Ղարադաղի գաւառ: Սա միակ երկիրն է՝ ուր Հայութեան հոտ է փչում և Հայերը կենդրոնացած են: Մօտաւորապէս 700 տուն երկրագործ ու շերամապահ Հայերը ապրում են 28 զուտ Հայաբնակ գիւղերում, 27 եկեղեցով՝ մի քանիսը աւերակ, 13 քահանայով, առանց դպրոցի: Նոյա գիւղերը կալուածներ են զանազան խաների, որոնք խիստ նեղում են

նոցա, մանաւանդ Չէլէքեան խաները: Լեզուն անխառն գաւառական բարբառ է: Ի բնէ քաջ և ժիր, աշխատասէր մարդիկ են: Քաջանաները խիստ տգէտ են:

3 Խոյ քաղաք և գաւառ: Քաղաքում կենում են մօտաւորապէս 80 տուն արհեստաւոր հայեր, 2 եկեղեցով և մի քաջանայով: Սոքա զետեղուած են Խոյ քաղաքի պարսպից դուրս երեք թաղերում, ոչ մի դպրոց չունեն, սիսիոնարները Խոյի հայոց մէջ մի դպրոց ունեն: Գաւառում 5 հայաբնակ գիւղ կայ մօտ 170 տուն երկրագործ հայերով՝ մահմետականների հետ խառն բնակուած, ունեն 4 եկեղեցի և մի քաջանայ:

4. Մաքուի գաւառ և գիւղաքաղաք (հին Արտաղը): Գիւղաքաղաքում 70 տուն երկրագործ ու արհեստաւոր հայ կայ մի եկեղեցով և մի քաջանայով: Այս գաւառումն է հըռչակաւոր «Թագէի» վանքը, այժմ անշուք ու երեսի վրայ ձգած: Վանքի ահագին կալուածներից մնացել է մի թշուառ գիւղ 20 տուն հայերով և մի քաջանայով: մնացեալ գիւղերն ու վարելահողերը դրաւել են Մաքուի Ալի-խանի որդիքը: Գաւառում կայ և 2 հայաբնակ գիւղ 5 տուն բնակչով, մի եկեղեցով ու մի քաջանայով: Հայերը ենթարկվում են Մաքուայ խաներին:

5. Սալմաստի գաւառ (հին Հեր-Ձարեանդ) 27 հայաբնակ գիւղերով, որոնց մէջ կենում են 1000 տուն և աւելի հայեր՝ խառն մահմետականների, նեստորական, բողոքական և կաթոլիկ ասորիների հետ: Նշանաւոր են հաւթուան և Փայի-աջուկ գիւղերը մի մի ծխական դպրոցով և առաջնորդարաններով (մի քանի տարի առաջ այդ գիւղերում առաջնորդներ էին նստում). եկեղեցիները 24 հատ, քաջանայք՝ 23: Այս գաւառի գիւղերում բողոքականներն ունեն երեք դպրոց: Խոսրովայ գիւղաքաղաքը կաթոլիկ քարոզչութեան և գործունէութեան կեդրոնն է. այստեղ են հաստատուած լազարիտ կարգի պատերները մի արքեպիսկոպոսով, ունեն եկեղեցի, կուսանալի վանք, տղայոց և աղջկանց լաւ դպրոց: Այս կաթոլիկ դպրոցն են ուղարկում իրենց տղաներին ու աղ-

Ջեկներին հարուստ հայ ծնողները զանազան տեղերից, մինչև անգամ Թաւրիզից: Գիւղաքաղաքի բնակիչները բոլորը կաթոլիկ ասորիներ են, 13 տուն հայ կայ միայն: Գաւառիս հայերը պարապում են վաճառականութեամբ, անասնապահութեամբ, այգեգործութեամբ և զլիաւորապէս կտաւազործութեամբ: Հազուստը թրքական է. կան և 15 տուն կաթոլիկ հայեր: Այս գաւառումն է և Դէրիկայ ս. Աստուածածնի վանքը՝ Տաճկաց սահմանադրին:

6 Ուրմի քաղաք և գաւառ: Քաղաքը ամերիկացի բողոքական միսիոնարների կենդրոն է. նրանք ունեն երկսեռ դպրոց, մի լաւ տպարան, որտեղ հրատարակվում է մի ասորերէն կրօնական թերթ, մի հիւանդանոց, մի լաւ ժողովարան: Այդ քաղաքումն է հաստատուած Խոսրովայի կաթոլիկ միաբանութեան մի ճիւղը: Այստեղ է նստում և նեստորական ասորիների եպիսկոպոսը, Մար-Շիմոնի փոխանորդը: Ուրմիում 21 տուն հայ կայ առանց քահանայի ու եկեղեցու: Գաւառում 41 հայաբնակ գիւղ կայ, մօտ 700 տուն երկրագործ, այգեգործ, կտաւազործ և անասնապահ հայերով, որոնք խիստ ցրուած ապրում են խառն նեստորական, բողոքական և կաթոլիկ ասորիների հետ, նոցա լեզուով խօսում, նոցա հաղուստով ու սովորութիւններով վարվում, միմեանց հետ ազգականութիւն անում. նոքա ունին 12 եկեղեցի, 17 քահանայ և ոչ մի դպրոց: Բողոքականներն ունին երեք դպրոց:

7. Քիւրդստանի գաւառը, որի զլիաւոր քաղաքն է Սովուճ-Բուլլախ, ունի 12 հայաբնակ գիւղ՝ 140 տուն երկրագործ, խաշնարած և մասամբ վաճառական հայերով, որոնք ապրում են քրդերի, զարափափախ թուրքերի, հրէաների և ասորիների հետ. ունեն 7 եկեղեցի, 5 քահանայ և ոչ մի դպրոց: Ամենքի՛ նոյն իսկ քահանաների՛ լեզուն, հազուստն ու սովորութիւնները քրդական են: Բողոքականները այս գաւառի հայոց մէջ ունին 3 դպրոց: Քրդերը կեղեքում են հայ երկրագործներին, իսկ հայ վաշխառուներն էլ՝ քրդերին:

8. Մարաղայ քաղաք և գաւառ: Քաղաքում կան 60—70 տուն գինեվաճառ հայեր, մի եկեղեցով ու մի քահանայով,

առանց դպրոցի: Բողոքական քարոզիչներն ունին մի դպրոց լի հայ մանուկներով և մի ժողովարան: Բոլոր ժողովուրդը բողոքականութեան է անցել: Քաղաքն ու ժողովուրդը խօսում են քրդերէն. հագուստը նոյնպէս քրդական է: Գաւառում կան 7 հայ զիւղեր 112 տուն երկրագործ հայերով՝ որոնք քրդերի հետ խառն են ապրում՝ 2 քահանայով և 4 եղեղեցով: Եւ վերջապէս՝

9. Ս. Ստեփաննոս Նախավկայի վանքը Արաքսի ափում, այժմ խիստ անշուք, մի վանահայրով և Դարաշամբ կոչուած մի զիւղով 10—15 տուն հայերից բաղկացած:

Ուրեմն Մխիթարեան սրբազանին վիճակուել էր հովուելու մի թեմ, որի բոլոր հայաբնակ քաղաքներն ու զիւղերը 118 հաս էին, մօտ 3700 տուն հայերով, որ 20,000 հոգուց աւելի է, 92 եկեղեցով, 71 քահանայով, 5 ծխական դպրոցով (Թաւրիզում 2, Հաւթուանում, Փայիաջուկում և Արտաբիւլում մէկ-մէկ) և մի թեմական համարուող դպրոցով (Արամեան դպրոցը Թաւրիզում): Իսկ ընդհակառակը բողոքականներն ունէին հայերի մէջ 14 երկսեռ դպրոց և ժողովարաններ, իսկ կաթողիկէները՝ երկու միջնակարգ դպրոց (Խուսրովայում՝ աղայոց և աղջկանց համար):

* * *

Այս համառօտ նկարագրից պարզ տեսնում ենք՝ թէ որքան ողորմելի է այս ժողովրդի բարոյական ու մտաւոր վիճակը. աւելացրէք սրա վրայ՝ որ հայերը առհասարակ՝ երկարատեւ ծանր ստրկութեան տակ՝ բոլորովին կորցրել են իրենց նախնի առաքինութիւնները, իրենց սէրը զէպի կրօնն ու ազգային սրբութիւնները, որ շատ տեղ չըզիտեն թէ ո՞վ է Լուսաւորիչը, ի՞նչ է էջմիածին, կաթողիկոս, որ նոքա մեղկացել ու վատ թուլամորթներ են դարձել, որ ամբողջ թեմում մի կանոնաւոր ու կրթուած քահանայ չըկայ, որ Թաւրիզի նման քաղաքներում հայերի երիտասարդ մասը վաճառակաւութեամբ շփուելով Ռուսաստանի սպականուած քաղաքների հետ՝ բոլորովին նեխուել ու փչացել է բարոյապէս և ցա-

Լազարուել Ֆիզիքապէս անառակութեան հետեանք եղող բոլոր ախտերով, իսկ դպրոցը, այն էլ Արամեանի նման ողորմելի դպրոցը, պատանիներին միայն 4 լեզուներ է ուղղում սովորեցնել առանց ներշնչելու նրանց բարոյական որ և է մաքուր զգացմունք, աւելացրէք նաև՝ որ Արաքսից այն կողմն անցնող ոչ մի լուսամիտ մարդ այսպէս թէ այնպէս չէ կարողացել արմատներ գցել Ատրպատականում և Եօլայ զնալ Թաւրիդի աղաների նման անձանց հետ, որ շատ առաջնորդներ զգուելով անվերջ կռիւներից ու անախորժութիւններից՝ թողել հեռացել են իրենց պաշտօնից, որ ժողովրդի այդ անսէրունչ վիճակից լին ձեռքով օգուտ են քաղում բողոքականներն ու կաթոլիկները, իսկ վերջերս Ուրմիում հաստատուել են նաև յունադաւան եկեղեցականներ, որոնք տարէցտարի ընդարձակում են իրենց ~~խաղախաղ~~ աշխարհակալութիւնները, — և դուք կըստանաք մի աղօտ պատկեր այն զարհուրելի դժուարութիւնների, որոնցից շրջապատուած զգաց իրեն Միլիթարեան սրբազանը՝ իր նոր պաշտօնը մտնելով։

Արդեօքն ի՞նչն է Ատրպատականի հայոց այս յետամնացութեան պատճառը։ Համեմատաբար հայոց տնտեսական վիճակը վատ չէ։ Երկրի վաճառականութիւնը համարեաւ հայերի ձեռքումն է. Թաւրիդում մեծ առևտրական տներ կան, որոնք Պարսկաստանի բերքերը Ռուսաստան արտահանելով են զբաղվում։ Իսկ հայ զիւղացին վճարում է արքունի մի թեթև հարկի, կալուածատիրոջը տասանորդ, և առաջնորդին հոգեոր տուրք, «շնչադրամ», այն է իւրաքանչիւր շունչ վճարում է 3 շահի կամ 5 կուպէկ։ Քաղաքներում հայերը բոլորովին հարկից ազատ են, իսկ ամբողջ պետութեան մէջ՝ զինուորագրութիւնից և զինուորական առու բքից։ Միայն Ուրմիոյ և Սալմաստի հայերից իւրաքանչիւր տունը վճարում է տարեկան 30 կ. սարփարտասին, որ կարավարութիւնից նշանակուած մի պաշտօնեայ է այդ գաւառի քրիստոնեաներին կառավարելու համար։ Այնպէս որ կարելի է ասել, որ հայերը համեմատաբար նիւթական լաւ վիճակի մէջ են։ Միայն Ղարապաղի, Ուրմիոյ և Քրդստանի հայերը նեղութիւն են

կրում Ձէլէբիան խաներից և քիւրդ Ավշար ցեղից, առաջիններն արքունի հարկը հնգապատիկ վերցնելով, իսկ երկրորդները թալանելով, սպանելով ու առևանգելով:—Քաղաքական կողմից էլ հայերը մեծ ազատութիւն են վայելում՝ աւելի քան սպասելի էր մահմետական մի աններողամիտ պետութիւնից: Նոքա պետական ծառայութեան մէջ անխափր ընդունվումեն պարսիկների հետ միասին: Պարսից կառավարութիւնը հայերի գլուխ և ներկայացուցիչ, պաշտպան և միջնորդ իր առաջ ճանաչում է հայոց առաջնորդին կամ խալիֆային, որ իր պաշտօնական յարաբերութիւններում դիմումներ է անում արտաքին գործոց նախարարի օգնականին, քարկուղարին. սրա հետ են գործ ունենում և թաւրիղի օտար հիւպատոսները իրենց պաշտօնական յարաբերութիւնների ժամանակ պարսիկ կառավարութեան հետ. նա նստում է թաւրիղում: Ի հարկէ, հայերի արտաքին գործոց նախարարին ենթարկուելը յառաջ է եկել մահմետական աններողամտութիւնից: Սակայն շատ գործերում առաջնորդը դիմում է և ներքին գործոց վարչութեանը, որի ներկայացուցիչն է թաւրիղում Ատրպատականի փոխարքան կամ վալիէհատի փիշքարը: Չընայելով որ շէրիաթի օրէնքը տարածվում է և հայերի վրայ, բայց Նորին Մեծութիւն Շահը վերջին ժամանակներս մի հրովարտակով ջնջեց շէրիաթի օրէնքներից միւնը, որ հայերի համար անթիւ ղեղձումների դուռ էր բացել մինչև այդ օրը: Այդ օրէնքով եթէ հայը թուրքացաւ, նա իրաւունք ունի տիրանալ ընտանիքի միւս անդամների ժառանգութեանը. շատ հայեր թուրքանում էին՝ յուսալով իրենց հարուստ ազգականների ժառանգութիւնը ձեռք ձգել. միւս անդամներն էլ ստիպուած կամ պէտք է փոխէին հաւատքը, որ մասն ստանան, կամ պէտք է աղքատ մնային: Քաղաքներում հայերը աւելի հանգստութիւն են վայելում. իսկ գիւղերի հարստահարող ու կեղեքիչ խաներին ու բէկերին առաջնորդը իրաւունք ունի քարկուղարի կամ փոխարքայի միջոցաւ բերել տալ թաւրիղ և դատի ու պատժի ենթարկել: Քանի որ առաջնորդը պատասխանատու է իւր հօ-

տի կողմից տէրութեան առաջ, հայերը կարող են և՛ դպրոց բանալ, և՛ ընթերցարան, և՛ եկեղեցի շինել, և՛ ներկայացում տալ, և՛ ընկերութիւն հիմնել, և՛ ժողովներ կազմել, — հարկաւոր է միայն առաջնորդի թոյլտվութիւնը: Հայերին արգելուած չէ ղէնք գործ ածել, միայն իրենք վախկոտ ու թուլամորթ լինելով՝ չեն կարողանում պաշտպանել իրենց դոյքը: Վերջապէս Ուրմիոյ, Սալմաստի և Քրդստանի քրիստոնեաները (հայերը և ասորիները) վաղուց ի վեր կառավարութիւնից ստացել են մի տեսակ ներքին ինքնավարութիւն, տէրութիւնից նշանակուած մի քրիստոնեայ կառավարիչ որ կոչվում է սարփարասա՝ ոչ ոք չէ միջամտում նրա կառավարութեանը. նա հարկեր է հաւաքում, դատում է նրանց վէճերը և պատասխանատու է տէրութեան առաջ: Սարփարաստը հայոց առաջնորդի հաւանութեամբ է նշանակվում և կարող է փոխուել, եթէ նա պահանջեց: Վերջապէս թէ՛ Ն. Մ. Նասր-էզդին Շահը, թէ՛ Ն. Բարձրութիւն Մուֆար-էզդին թագաժառանգը, թէ՛ նախարարները և թէ՛ Ատրպատականի կուսակալ է միր-նիզամ Միրզայ հասան խանը անկեղծ կերպով ցանկանում են հովանաւորել հայերին և պաշտպանել ամեն տեսակ հարստահարութիւններից: Կառավարութիւնը և լուսամիտ թագաւորը ամեն յարմար դիպուածում ցոյց են տուել՝ որ հայերի յառաջադիմութիւնը և բախտաւորութիւնը իրենց աչքում նոյնքան ղին ունի, որքան և բուն պարսիկ ժողովրդինը:

Ժողովուրդը նիւթապէս աղքատ չէ և՛ թեթեւ բացառութեամբ՝ հարստահարուած չէ, կառավարութիւնն էլ ամեն հնարաւոր ազատութիւն տալիս է: Ուրեմն ո՞վ է արգելում պարսկահային բախտաւոր ապրելու:—Այս հարցին պատասխանելու համար պէտք է հասկանալ թէ՛ ո՞ւմ ձեռքին է ժողովրդի բախտը, ո՞վ է ղեկավարում նրա ամբողջ կեանքը, իսկ դորա համար պէտք է ըմբռնել առաջնորդի դերը Ատրպատականում:

Ամենայն եպիսկոպոս, որ նշանակվում է ամենայն հայոց կաթողիկոսից առաջնորդ, ստանում է նրանից յանձնարարա-

կան թղթեր յանուն փոխարքայի և քարկուղարի: Առաջնորդը իւր պաշտօնն ընդունելուց առաջ Հանդիսաւոր կերպով ընդունվում է փոխարքայից և քարկուղարից, որոնց և ներկայացնում է իր բերած թղթերը: Կառավարութիւնը՝ պատասխանելով կաթողիկոսի թղթերին՝ խնայն հրամայում է ճանաչել եպիսկոպոսին իբրեւ կաթողիկոսի ներկայացուցիչ կամ խալիֆայ (պետ) Ատրպատականի բոլոր հայերի: Այնուհետեւ նա կառավարութեան աչքում օտար պետութիւնների հիւպատոսներին հաւասար է համարվում պատուով: Նա՝ այսպէս ասած՝ էջմիածնի կաթողիկոսից ուղարկուած հայոց հիւպատոս է: Այնուհետեւ առաջնորդը գրեթէ անսահման կերպով տնօրինում է իր հօտի գործերը՝ ինչպէս որ կամենում է. նա միջամտում է նոյն իսկ հայոց քաղաքային վեճերում ու գործերում, և կառավարութիւնը բնաւ չի արգելում այդ շատ անգամ վիճողներին ինքն է ուղարկում առաջնորդի մօտ դատուելու: Եթէ հայերին զաւառներում նեղացնում են զանազան պաշտօնեաներ, առաջնորդը պաշտպան է հանդիսանում հայերին, յանցաւորներին Թաւրիզ է բերել տալիս և իր ներկայութեամբ գործը վճռել է տալիս: Առաջնորդից լիովին կախուած է հայերի բախտը: Եթէ նա ազդեցութիւն կարողացաւ ունենալ փոխարքայի կամ նահանգապետի կամ քարկուղարի վերայ, նա կարող է միշտ դէպի լաւը վճռել տալ բոլոր գործերը. իսկ եթէ թոյլ և անընդունակ մէկն եղաւ, անտէր է մնում ժողովուրդը և չարաչար տուժում է: Պարսիկ պետութեան քաղաքացու բարօրութիւնը դրական օրէնքով չէ ապահովուած, ինչպէս քաղաքակիրթ ազգերի մէջ. ամեն բան Պարսկաստանում՝ և ընդհանրապէս արեւելքում՝ կախուած է անձնաւորութիւնից. զօրեղ մարդու կամքը այնտեղ օրէնք է: Բայց դժբախտաբար Պարսկաստանի հայոց մէջ ամենալաւ առաջնորդն անգամ մի զօրաւոր խոջնդոտի է հանդիպում, որ ջլատում է նրա ոյժը, վայր է ձգում նրա հեղինակութիւնը, և շատ անգամ ստիպում է ասպարէզից հեռանալ ու անխնամ թողնել ժողովուրդը: Այդ արգելքը հտրուստ «աղաներն» են,

Թաւրիղի վաճառականներն ու խանութիւն ստացած հայերը, որոնք իրենց հարստութեան ու ազդեցութեան շնորհիւ կամեւում են իրենց ձեռքն առնել դպրոցը, եկեղեցին, նոցա դրամազուխը և նոյն իսկ առաջնորդին և վարվում են իրենց կամքի ու օգտի համաձայն, իսկ ժողովուրդը թէև տեսնում է, որ ինքը տուժում է, բայց չի կարողանում ձայն հանել, երկիւղեց շողոքորթում է նոցա և հրապարակաւ դովում է: Առաջնորդը ստիպուած կամ միանում է նրանց հետ և ենթարկվում է նրանց ազդեցութեանը, կամ հակառակում է, այս վերջին դէպքում մի զօրեղ կուսակցութիւն է յառաջ գալիս, որ ամեն կերպ աշխատում է նրան վայր ձգել: Միխիթարեան սրբազանի իւր նոր պաշտօնին մտնելիս այդ աղաները խմբուել էին դպրոցի հոգաբարձութիւն անունով և անդապար խռովութիւններ էին դրում առաջնորդի ու իրանց մէջ: Պէտք է յիշել որ առաջնորդը ոչ կառավարութիւնից է ռոճիկ ստանում, ոչ էլ էջմիածնից: Նրա ռոճիկը ժողովուրդն է վճարում «հոգևոր տուրք» և «պտղի» անունով: Հոգևոր տուրքը «շնչադրամն» է զլիսաւորապէս, այսինքն իւրաքանչիւր շունչ մեծ թէ փոքր՝ պէտք է վճարի տարեկան 3 շահի կամ 5 կոպէկ, այնուհետև կայ աթոռահարկ պատկներից, հոգեբաժին, կողոպուտ, որոնք բոլորն էլ «պտղի» են կոչվում: Տարին մի անգամ առաջնորդը ուղարկում է իր կողմից մի նուիրակ, վարդապետ կամ քահանայ, որն և ժողովում է պտղին: Սովորաբար բաւական մեծ գումար է հաւաքվում, եթէ նուիրակը հաւատարիմ անձն է: Միջին թուով տարեկան պտղի փող հաւաքվում է 600 թուման, եթէ աւելացնենք սրա վերայ և առաջնորդի միւս եկամուտները, տարեկան մօտ 800 թ. կունենայ առաջնորդը: Իսկ կեանքը Թաւրիղում խիստ էժան է:

Այս բոլորից պարզ է առաջնորդի նշանակութիւնը: Նա ամեն բան է Ատրպատականում: Նա չընայելով բոլոր արդելքներին կարող է և իրաւունք ունի ամեն հնարաւորն ու ձեռքից եկածն անել իւր հօտի բարեաց համար. նրա ձեռքերը կաշկանդուած չեն որ և է քաղաքական կամ նիւթական

անյաղթելի խոչընդոտներով, միայն հարկաւոր էր մի ուժեղ ու եռանդով լին անձն, զործելու և մաքառելու ծարաւ մի հողեւորական, որ պատրաստ լինէր նոյն իսկ զոհ դնալ իւր հօտի համար, և դրանով արդէն չարիքը դարմանուած կը լինէր: Եթէ աւելացնենք սրա վրայ որ Ատրպատականը միայն մի երկու այգպիսի առաջնորդների անուններ կարող է տալ, որպիսիք են Մուշեղեան, Անդրէաս արքեպիսկոպոս, Գրիգոր արքեպիսկոպոս, եթէ աւելացնենք՝ որ Ատրպատականը վաղուց ի վեր հայութեան մի յետ ընկած, երեսից ձգուած անկիւն է համարվում՝ թէ էջմիածնի և թէ մոռածող հայերի աչքից հեռացած, մտքից մոռացուած՝ մանաւանդ 1828 թուի մեծ դաղթականութիւնից յետոյ, որ այդ ժամանակից ի վեր աւերիչ դաղթականութեամբ դատարկուող Ատրպատականը հեաղհեաէ օտար ազդութիւնների ու դաւանութիւնների համար հրապուրիչ պատառ դարձաւ, իսկ հայերի կողմից ոչ մի ընդդիմութիւն չեղաւ այդ յանդուգն ոտնհարութիւններին, — մենք պարզ կը հասկանանք այդ 20,000 հայերի և այդ բուն հայկական մեծ նահանգի ամառութեան ու յետամնացութեան պատճառը:

Մինչդեռ 1882 թ. Թաւրիզի հայերը իրենց առաջնորդն էին որոնում, վերջապէս կանգ առան ս. Ստեփաննոսի վրայ. բայց, ինչպէս ասացինք, կաթողիկոսի մահուան պատճառով այդ հարցը աւելիս մնաց: Մինոզը Թաւրիզ ուղարկեց ձերմական վարդապետին: Սակայն սա երեւի չըկարողացաւ գլուխ դնել Թաւրիզի աղաների հետ՝ չընայելով որ լեղուագէտ ու կրթուած մարդ էր, այդ պատճառով շարունակ խռովութիւններից իւր գլուխն աղաւեց հրաժարական տալով. ուստի հոգեւոյս Մակար կաթողիկոսը՝ ունկնդիր լինելով Թաւրիզեցոյ բողոքներին այդ վարդապետի դէմ և նոցա աղերսներին՝ իրենց մի լաւ հովիւ շնորհիւ նորա փոխարէն, — առաջարկեց այդ պաշտօնը Մխիթարեանին: Սա լաւ գիտէր թէ որքան ծանրացել են այժմ այդ թեմի դործերը, թէ որքան աչալըջութիւն է պահանջում իրենից այդ թեմի առաջնորդական պաշտօնը: Նա երկար ժամանակ չէր վճռում յանձն

առնել այդպիսի մի պատասխանատու պաշտօն, որ կարող էր հակառակ դէպքում բոլորովին սեւացնել նրա փոքր ի շատէ փայլուն անցեալը: Բայց վերջապէս նա յանձն առաւ: այն ժամանակ Ստեփաննոս սրբազանը 41 տարեկան ուժերով լի այր մարդ էր. նա յանձն առաւ՝ օգնութիւն ու աջակցութիւն խնդրելով վեհափառ հայրապետից իր կազմած ծրագիրներն իրադործելու համար և՛ վստահացնող խոստումներ ստանալով այդ մասին՝ ճանապարհ ընկաւ իւր պաշտօնավայրը:

Սրբազանի առաջնորդ կարգուելը ուրախութեամբ ողջունուեց Ատրպատականի լուսամիտ հայերի կողմից: «Աւելի յաջող ընտրութիւն անել անկարելի էր,—գրուս է լրագրում այս առթիւ մի Թաւրիդեցի հայ երիտասարդ,—և շատ ուրախ ենք Ատրպատականի թեմի համար, որ յանձին Ստեփան եպիսկոպոսին ստանում է մի արթուն և քաջ հովիւ»: Վերջապէս 1886 յունիսի 15 Մխիթարեանը Թաւրիդ մտաւ և մեծ պատուով ընդունուեց: Քաղաքի հայ հասարակութիւնը սրբազանին ընդ առաջ էր գնացել մինչև Աջի դետի մօտ գտնուած այգին, ուր սրբազանը երկայն ճանապարհից ու տօթից նեղուած՝ փոքր ինչ հանդիստ էր առել: Նետղհատէ բազմացաւ ընդառաջողների թիւը. ինչպէս սովորութիւն է, կառավարութիւնը և Թաւրիդի օտար հիւպատոսներն էլ իրենց ներկայացուցիչներին նորին սրբազնութեան ընդ առաջ ուղարկեցին: Այնուհետև հանդիսաւոր զնացքը սկսուեց և հասնելով առաջնորդարանի մօտ՝ կանդ առաւ: Այդտեղ Ստեփաննոս սրբազանը ձիուց իջաւ, փրան շուրջառ առաւ և եկեղեցական դասի հետ շարականներով հասաւ մինչև ս. Աստուածածնի բակը, ուր դպրոցների երկսեռ մանուկները երգելով ընդունեցին նրան: Եկեղեցի մտնելուց ու սովորական աղօթքն անելուց յետոյ՝ սրբազանը դարձաւ խուռն բազմութեանը և յայտնեց թէ ինքն եկել է հասարակութեան հետ ձեռք ձեռքի տուած դործելու, խորհուրդ տալու և հարցնելու, յորդորներ ու խրատներ տալու ի շահ և ի պայծառութիւն հայկական եկեղեցւոյ, դպրոցների և բոլոր ազգային բարենպատակ ձեռնարկութիւնների: Ինքը՝ յանձն առ-

ներով Ատրպատականի թեմակալ առաջնորդի ծանր պաշտօնը՝ պէտք է աշխատի ամեն կերպով յուզեալ մտքերը հանգարտեցնել և ազդի երկպառակուած ու դայթակղուած մասերը միաւորել: Սրբազանն ականարկում էր հաւատաւորիս հայերին: Ուրեմն սրբազանը ցանկանում էր ձեռք ձեռքի տուած զնալ հասարակութեան հետ, նրանից խորհուրդ հարցնել, բայց և խորհուրդ տալ, խրատել ու յորդորել, նրանց իր ծրագրած շաւղով առաջ տանել: Այս խօսքերը՝ Թաւրիղի ազանների կողմն էր զցում սրբազանը, բայց զգուշութեամբ ու քաղցրութեամբ: Նա յայտարարում էր նրանց, որ ինքը չէ սիրում հպատակուել ու ենթարկուել որ և է ապօրինի հեղինակութեան, որ ինքը անկախ մարդ է և միշտ սովոր է եղել զեկավարել ու առաջնորդել, իսկ գործիք լինել որ և է մէկի ձեռքին—ու երբէք: Նա յայտարարում էր միւսնոյն ժամանակ, որ ինքը կուուելու է հաւատորմների դէմ, որոնք իւր հօտը յափշտակում են չորս կողմից. այդ նպատակի համար նա պէտք է դպրոցներ բանար, նա պէտք է եկեղեցիները ծաղկեցնէր քահանաներով, տպարան հաստատէր, լրագիր հրատարակէր և իր շուրջը ընտիր ոյժեր հաւաքէր: Նա խոստանում էր այս բոլորը, որոնք իրեն ծրագրին էին Ատրպատականի համար:—Ժողովուրդը խիստ զոհ մնաց սրբազանի խօսքերից և վառ յոյսերով ցրուեց: Իսկ սրբազանը զնաց օրիորդաց դպրոցի գեղեցիկ շէնքում մի քանի շաբաթ բնակուելու, որովհետեւ առաջնորդարանի մի կողմը քանդուած լինելով՝ բնակութեան անյարմար էր:

Ստեփաննոս եպիսկոպոսը իր զլխաւոր ոյժը դարձրեց Թաւրիղի միսիոնարների դէմ: 40 հայ տղայ և 48 հայ աղջիկ նոցա որսն էին դարձել գեղեցիկ դպրոցական շէնքերը, ձրի ուսումը և ձրի դասական պիտոյքները, միսիոնարների քաղցր վարմունքը, նոցա ահազին հարստութեան մասին համբաւները,—այս բոլորը զրաւել էին առաւելապէս Դոսի Թաղի աղքատ հայ ծնողներին, որոնք ուրախութեամբ իրենց զաւակներին նոցա դպրոցներն էին ուղարկում: Աւելացրէք դրա վրայ հայկազեան դպրոցի ողորմելի վիճակը, որ մի օր

գոյութիւն ունէր՝ միւս օրը մեռնում էր եկամուտների անկանոնութեան պատճառով, նաեւ այն՝ որ Թաւրիղի միակ օրիորդաց դպրոցը իւր գոյութիւնն սկսեց միայն 1885 թուից, երբ Թաւրիղի առաջնակարգ վաճառական Թումանեան եղբարք մի շքեղ շէնք շինել տուին և իրենց մօր անունով նուիրեցին քաղաքի հայերին՝ իբրև օրիորդաց դպրոց, նաև լացրէք նաև՝ որ ներսի թաղի երկու դպրոցներն էլ հեռու էին ընկած Լիլավայի թաղից և այնտեղի չքաւոր ծնողներին փոքր ի շատէ ծախքերի տակ էին ձգում,— և հասկանալի կը լինի բողոքական միսիոնարների յաջողութիւնը Թաւրիղի հայոց մէջ։ Թէև ս. Աննայի դպրոցի հիմնարկութիւնը մի զգալի հարուած էր միսիոնարների համար, որովհետև ներսի թաղում նրանց ոյժը կոտրուեց, բայց նոքա չքվհատուեցին։ Ամփոփելով իրենց ոյժը՝ նոքա կենդրոնացան Լիլավայում, աներկմիտ հաւատալով որ առատ հօնձ կանեն այդ յետ ընկած թաղի հայ մանուկներից։ Բայց ահա Մխիթարեանը պատերազմ յայտարարեց նոցա։ Թաւրիղի երիտասարդ հայ ուսուցիչները, որոնցից ոմանք առաջուց ճանաչում էին սրբաղանին անձամբ և նրա ջերմ համակրողներէն էին, արձագանք տուին նրա ձայնին և ուրախութեամբ իրենց աջակցութիւնն առաջարկեցին այդ զործում։ Մխիթարեանը խելացի հոգևորական էր և զիտէր իւր շուրջը հաւաքել ու զրաւել լաւ երիտասարդներ, նա կարողանում էր երիտասարդների հոգին ճանաչել և նոցա սիրելի ու համակրելի դառնալ։ Թաւրիղի ուսուցիչները իսկոյն միացան սրբազանի հետ, տեսնելով նրա մէջ մի լուսամիտ՝ բուն-ժամանակակից հոգևորական, որի աչքում բարձր զին ունի թարմ, աշխոյժ, աղնիւ երիտասարդ սերունդը։ Ստեփաննոս սրբազանը այդ երիտասարդութեան հետ ձեռք ձեռքի տուած սկսեց մի անհաշտ կռիւ թէ՛ Թաւրիղի և թէ՛ դաւառների պլադաւան բարոյիչների դէմ։ Նոցա ոյժը չափուած էր, նոցա արտաքին փայլի տակ ծածկուող ներքին ոջնչութեանը արգէն վերահասու էին եղած։ Չնայելով որ միսիոնարների ընկերութիւնը Պարսկաստանի հայերի համար տարեկան 30,000 ֆունտ

ստերլինգ գումար է նշանակել, որից միայն Ատրպատականի Հայոց վերայ պէտք է 20,000 ֆ. ս. (մօտ 200,000 մանէթ) ծախսուէր,—չընայելով այդ ահագին գումարին,—բողոքականութիւնը Ատրպատականում չի կարող պարծենալ ո՛չ իւր դպրոցների օրինակելի մանկավարժական կադմսկերպութեամբ, ո՛չ իւր արագաքայլ յառաջադիմութեամբ հայերի և ասորիների մէջ, ո՛չ էլ իւր ահագին ռոճիկներ ստացող պաշտօնականերով: Նոցա դպրոցները ոչ միայն բարձր չեն կանգնած հայոց դպրոցներից, այլ և շատ ասոր են, ինչպէս մի քանի անգամ առիթ ունեցաւ համազուելու Թաւրիզի Հայոց ուսուցչական խումբը՝ ներկայ լինելով նոցա հարցաքննութիւններին և դասերին: 200,000 մանէթի ահագին գումարը բուլրովին չէ դործադրվում իր նպատակին, այդ պատճառով կարելի էր երաշխաւորել՝ որ չնչին դիմագրութիւնն անգամ հայերի կողմից բաւական սաստիկ հարուած կը լինէր քարոզութեան համար: Եւ ահա Արամեան դպրոցի երեք ուսուցիչներ իրար հետ համաձայնելով՝ մտքներում դնում են ս. Սարգսի դպրոցը բարեկարգել. նոքա բաւականանում են դպրոցի 215 թուման չնչին ռոճիով, յուսով ներկայացումներից ու նուէրներից դոյացած արգիւնքի վրայ: Նոքա սկսում են իրենց գործը: Իսկ սրբազանը կանչելով իր մօտ Լիլավայի Հայ ծնողներին, նոցա խրատում, համոզում է որ իրենց երեխաներին հայոց դպրոցն ուղարկեն: Միւսնոյն ժամանակ Լիլավայի թաղում սի ուրիշ օրիորդաց ուսուցչարան էլ բացուեց, որ կառավարվում էր Հայկազեան դպրոցի ուսուցիչներով: Իսկ թէ՛ նոյգ և թէ՛ ս. Աննայի դպրոցը յաճախող Հայ աղջիկներին նիւթապէս օժանդակելու և խրախուսելու համար դպրոցի մի վարժուհու նախաձեռնութեամբ Թաւրիզում հաստատուեց մի կանանց ընկերութիւն՝ տարեկան 5 կամ 10 ր. անդամավճարով: Կանանց ընկերութիւնը իւր շրջանը ընդարձակելու համար մի քանի հոգաբարձու մարդիկ ընտրեց: Ընկերութիւնը իւր հաւաքած դրամով հոգում էր չքաւոր աշակերտուհիների դպրոցական պիտոյքները:—Սյս բոլոր եռանդուն մեջոցներն իրենց աղքեցութիւնն ունեցան: Կիսից ա-

ւելի երկսեռ Հայ մանուկներ բողոքականներէց Հայոց դպրոց-
 ներն անցան. ս. Աննայի դպրոցում արդէն 50 աշակերտուհի
 էին սովորում 1886—87 ուսումնական տարին. Լիւսավայի օր.
 դպրոցումն էլ բաղմացան աշակերտուհիները: 1890 թ. վե-
 րոյիշեալ Թումանեան եղբարք Հայկազեան դպրոցի խարխուլ
 շէնքին կից մի նոր 3—4 դասարանից շինութիւն կառու-
 ցին և նուիրեցին իրենց Հօր յիշատակին: Ուսումը Թաւրի-
 զում քաջալերուեց այսպիսով: Սյսբանը դեռ բաւական չէր.
 Հիտլհատէ նորանոր միջոցներ ձեռք առնուեցան, որոնց
 շնորհիւ Թաւրիզի Հայ Հասարակութիւնը քիչ-քիչ դուրս եկաւ
 իւր ինքնամոռացութիւնից և ընդհանուր Հայութեան Հետ
 հաղորդակից եղաւ, նրա ինքնաճանաչութիւնը զարկ ստա-
 ցաւ և սիրով կապուեց իւր աղջի Հետ: Սյգ միջոցներն էին՝
 ընթերցարանը, որ սրբազանի Թաւրիզ գնացած տարին բա-
 ցուեց Լիւսավայի թաղում (բացի Ներսի թաղում առաջուց
 եղած ընթերցարանից, որ ղետեղուած է Արամեան դպրոցի
 դահլիճում) և քիչ-քիչ կանոնաւոր վիճակի Հասաւ. լսա-
 րանը, որ վերջերս բացուեց Թաւրիզում շաբաթը երկու ան-
 զամ երեկոները չափազաս Հայերին մի ժամի չափ դասեր
 տալու և զանազան նիւթերի վրայ շահաւէտ դասախօսու-
 թիւններ անելու համար. դրական երեկոյթ, որ վերջերս Լի-
 ւսավայի դպրոցի թատրոնական դահլիճում տեղի ունեցաւ
 կիրակեայ դպրոց բանալու օգտին և որը առաջին անգամն
 էր Թաւրիզում. ջութակի ձայնակցութեամբ երգում էին
 դպրոցների սաներն ու սանուհիք. ընկերութիւնները, որոն-
 ցից նշանաւոր է վերջերս Հաստատուած «Հայոց կրթական
 Սէր» ընկերութիւնը՝ ուսում, դիտութիւն ու արուեստներ
 ծաւալելու Հայ չքաւոր՝ մանաւանդ զիւղական՝ տարրի մէջ,
 ուսումնարաններ, ընթերցարաններ բանալու գիւղերում և
 մասամբ քաղաքներում. տպարանը, որի շինութիւնը սկսուեց
 նոյն իսկ սրբազանի Թաւրիզ գնացած տարին ու արդէն
 յաջորդ տարուայ օգոստոսին աւարտուել էր և որի
 մէջ միւս 1888 թուի սեպտեմբերին ղետեղուեց Ս. Յովնա-
 նեանի նուիրած տպագրական մամուլը իւր պարագաներով:

սրբազանը կարողացաւ իր ազգու զիմուքներով մի քանի հայ հարուստներին դրամական նուիրատուութիւննր հաւաքել տալարանի օգտին ինչպէս Աստրախանում բնակուող էլիանողովին, որ 500 ռ. նուիրեց և խոստացաւ շարունակել նուիրատուութիւնը ուրիշ անգամներ էլ. և վերջապէս թատրոնական ներկայացումները, որոնք միւլենոյն ժամանակ դպրոցների և ընթերցարանների ծախքը ծածկելու միջոց էին և մի առանձին նշանակութիւն ունեցան Թաւրիզեցոյ համար՝ մանաւանդ Ստեփաննոս եպիսկոպոսի առաջնորդութեան տարիներում:

Բեմը շինուած է Արամեան դպրոցի մեծ դահլիճում, որին կից ղեռնղոլում է և ընթերցարանն: 1883 թուից, երբ դպրոցների հոգաբարձութիւնը երիտասարդների մասնակցութեամբ շինեց այդ բեմը, մինչև Ստեփաննոս սրբազանի Թաւրիզ մասնիւ միայն երկու անգամ ներկայացումն էր արուել այդ բեմի վրայ, որովհետև հասարակութեան միջեց զանազան դժգոհութիւններ էին յայանել և քարկուզարի կողմից ներկայացում տալը՝ առանց կառավարութեանն իմացնելու՝ արգելուել էր: Սրբազանի զաւուց յետոյ ներկայացումները տարին մի քանի անգամ և մի առանձին շքով էին տեղի ունենում, և այդ ներկայացումները իրենց այցելութեամբ պատուել և քաջալերել են թաղաժառանգը, Էմիր-Նիզամը, Նոսրէթ-Դովլէն (Ատրպատականի զօրքերի ընդհանուր հրամանատարը) իւր ղենուորական նուազախմբով, որը ձրի հայոց թատրոնին էր շնորհում, Թաւրիզի օտար հիւպատոսները, Ղալուբէկը (քաղաքապետը), Բէկլէր-բէկը (օստիկանապետը) և քաղաքի շատ եւրոպացիներ իրենց ընտանիքներով: Ներկայացումների լեզուն հայերէն էր, մի քանիսը միայն թուրքերէն: Տալիս էին Թիֆլիզի հայոց թատրոնում սովորաբար խաղացուող պիեսները: Թաւրիզի միակ բեմը այդպիսի դէպքերում միշտ մի առանձին դոհունակութիւն է պատճառել յիշեալ հիւրերին, որոնք ամեն անգամ առատ նուէրներով դպրոցների օգտին ցոյց են տուել իրենց համակրութիւնն ու յարգանքը դէպի հայը մանաւանդ թաղա-

ժառանգը, որ ամեն անգամ 75 թուման միայն իւր կողմից նուէր է ուղարկել, Էմիր-Նիզամը—50 թուման, ինչպէս և միւս բարձրաստիճան անձինք։ Առանձնապէս Հայոց ներկացումները խրախուսել է Էմիր-Նիզամ կուսակալը, որ երկար ժամանակ Փարիզում պարսից դեսպան լինելով Նապոլէօն Գ. ժամանակ, լաւ ըմբռնել է քաղաքակրթութեան նշանակութիւնը և այսպիսի դէպքերում Հայոց մէջ նկատելով յառաջադիմական ձգտումն՝ սիրել ու համակրել է նոցա այդ ջանքերին և այդ զգացմունքը ներշնչել է նաև իր շրջապատողներին։ Նա հրամայել էր Հայերին որ զոնէ ամիսը երկու անգամ թուրքերէն ներկայացում տան, որոնց ինքը խոստանում էր ներկայ լինել իսկ եթէ չէր կարողանում ներկայ լինել, իւր առատ նուէրները՝ այնուամենայնիւ՝ անպակաս էր անում Հայոց դպրոցներին։—Պէտք է ուշադրութեան առնել և Արամեան դպրոցի բարեկարգութեան հարցը, որով պէտք է Ատրպատականի վարժապետանոցի հարցը լուծուէր։ Աչքի առաջ ունենալով որ 5 տարուայ դասընթացը ունեցող դպրոցում չորս լեզուներ ու տասը այլ և այլ առարկաներ էին աւանդվում 7—8 տարեկան մանուկներին, ուստի և հարևանցի կերպով չանցնելու համար այդքան առարկաներ, հէնց Սրբազանի Թաւրիզ գնացած տարին, դպրոցում բացուեց նաև 4-րդ դասարան։

Ահա այսպիսի միջոցներով սրբազանը մեծ զարկ տուեց Թաւրիզի Հայերին և խիստ զգալի հարուած՝ նոյն քաղաքի միսիոնարներին յաջողութեանը։

Այս բոլոր զեղեցիկ ձեռնարկութիւնները ի հարկէ կատարվում էին Ստեփաննոս սրբազանի ղիտութեամբ, թոյլ տուութեամբ, քաջալերութեամբ և պաշտպանութեամբ։ Թէև այդ դործերի նախաձեռնողները Կովկասից գնացած երիտասարդներն էին, թէև Թաւրիզի ու առհասարակ Ատրպատականի Հայոց այս մտաւոր և բարոյական ցնցումներն ու ըսթափմունքը կատարվում էին նոյն այդ եկամուտ երիտասարդութեան միջոցաւ,—որ ուսուցչական պաշտօններով ապրում է այդ թեմի այլ և այլ տեղերում,—բայց ի հարկէ

առանց Մխիթարեան սրբազանի պաշտպանութեան և հովանաւորութեան այդ երիտասարդութեան ջանքերը հաղիւթէ մի որ և է տեւական արդիւնք ունենային: Առաջնորդի, իբրեւ հայոց ազգապետի, կամքը, ցանկութիւնն ու հրամանը անհրաժեշտ է այդ բոլոր գործերում, այլապէս՝ կառավարութիւնը ոչ մի կերպով չէր թոյլատրի այդ զեղեցիկ գործերը կատարել Ատրպատականում:

Թաւրիզի հետ միաժամանակ նոյն տեսակ և նոյն նպատակով գործունէութիւն էր տիրում նաեւ դաւառներում: Այդ գործունէութեան միջնորդները դարձեալ մասամբ զրաի, մասամբ էլ գաւառացի տեղական հայ երիտասարդութիւնն էր, որը սերտ կապերով միացած էր սրբազանի հետ, նորան յարգում, սիրում ու մինչեւ իսկ պաշտում էր: Մեր ուշքը գրաւում են զլիւսաւորապէս Սալմաստի և Ուրմիոյ գաւառները, որոնք բողոքական և կաթոլիկ քարոզչութեան կեդրոններ էին 1830 թուականներից և որոնց մէջ՝ ասորիներից յետոյ՝ բաւական յաջողութեամբ հայերն էին հաւատափոխ լինում: Եկեղեցիներ, դպրոցներ ու ընթերցարան հիմնելը, կանոնաւոր քահանաներ, ուսուցիչներ ու քարոզիչ վարդապետներ կարգելը զլիւսաւոր միջոցներն էին քարոզչութեանց դէմ մրցելու և հային ինքնաճանաչութիւն ներշնչելու: Փայլաջուկի ու հաւթուանի ուսումնարաններից յետոյ, որոնցից երկրորդի դպրոցին կից բացուեց նաեւ մի ընթերցարան զիւղացոյց համար, դպրոցներ բացուեցին նաեւ Սալմաստի, Ղալասար և Մահլամդուտ հայաբնակ գիւղերում ու Սաւրում, փառաւոր քարաշէն եկեղեցի շինուեց Ուրմի քաղաքում և ուսումնարանի համար հանգանակութիւն բացուեց տարւոյս սկզբներին: Այսպէս և Ատրպատականի միւս գաւառներում հետզհետէ ուսումնարաններ բացուեցին Մարաղայում, Մակուի գիւղաքաղաքում, Մուժամբար գիւղում (զեղեցիկ երկսեռ դպրոց): Բացի այդ՝ մի քանի ընկերութիւններ հաստատուեցան Սալմաստում և այլևայլ գիւղերում (Գրասիրաց, Սանուց, Բարեգործական և կանանց Խնայողական և այլն ընկերութիւններ Սալմաստում, հաւթուանում և Ղալասարում) որոնք թէ

և վաղանցուկ էին ու մի շօշափելի արդիւնք դեռ չեն ցոյց-տուել, բայց կարողացան մի թեթեւ հարուած տալ ժողովրդին և ապագայ զործունէութեան համար ճանապարհը հարթել:


Առանձնապէս ուշադրութեան արժանի է սրբազանի զործունէութիւնը կաթողիկոսների դէմ, որոնք չափազանց զայ-րանալով նրա դէմ՝ ծայրայեղ միջոցների դիմեցին վնասելու նրան և նրա հօտին: Մխիթարեան սրբազանի Թաւրիզ մըս-նելու ժամանակ Փրանսիացի պատերները հայերի մէջ յաջո-ղութիւն ունենալու համար բերել էին տուել Վինետիկի Մխիթարեան վարդապետներից երկու հոգի, որ նրանց միջո-ցով պապականութիւնը հայերի մէջ տարածեն: Արդէն հաւ-թուանում 15—20 տուն կաթողիկ հայեր կային: Կաթողիկ քարոզիչները իրենց բացարձակութեան ու աններողամտու-թեան քարոզով հանդերձ դէպի մի այլ կրօն կամ լեզու կամ ազգութիւն, — որով մեծ աւելութիւն սերմանեցին բուն հայ ժողովրդի և հաւատաւորիս եղած հայերի ու ասորիների մէջ, — այլ և այլ եղուխտական միջոցներ էին գործ դնում խռովու-թիւններ ձգելու արեւակից եղբայրների մէջ և պղտոր ջրում՝ ձուկ որսալու: Երբ երկու հայերի մէջ դատական մի խնդիր էր լինում, նոքա իսկոյն մի կողմի պաշտպան էին կանդ-նում և՛ եթէ հարկաւոր էր՝ ծախքեր էին անում, մինչև որ մարդը կաթողիկութիւնն ընդունում էր: Հակառակ կողմը ստիպվում էր կամ ծանր մեղաներով իրեն պաշտպանել, կամ ստիպուած նոյնպէս կրօնափոխ էր լինում: Այս և այս տե-սակ միջոցներով նոքա թշնամութիւններ էին ձգել ասորի-ների իրար մէջ և հայերի ու ասորիների մէջ: Երկու ազգու-թիւններին էլ ծանր էին թուում իրենց քաջած զրկանքները՝ նոքա սրտանց ատում էին իրենց այդ օտար քարոզիչներին, որոնք իրենց երկիրը մտնելով կամայականութեամբ կարգադ-րութիւններ էին անում ու նոյա բախտը զեկափարում: Ատե-լութիւնը սաստկացաւ մանաւանդ՝ երբ Մար-Շիմոնի իրաւա-տութեան տակ եղող Մար-Կիւվէրկիզ (ս. Մարգիս) վանքը Սաւրի մօտ Մխիթարեանք առան ասորիներից և նորոգե-լով՝ շինեցին այնտեղ դպրոց, միաբանների համար սենեակ-

ներ, պարտէղ, Հիւանդանոց: «Ասորիների զրգուռած զայրոյթն արտայայտուեց նրանով որ զաղանի զաւաղութեամբ վանքում սպանեցին Մխիթարեան Սրապիոն վարդապետին: Մեղքն սկսեցին Սալմաստի Հայերի վրայ ձգել, իբր թէ նրանց զիտակցութեամբ ու թելադրութեամբ է սպանուել վարդապետը: Այդ զրպարտութիւններով զինուած՝ Սրապիոնի ընկեր՝ նոյնպէս Մխիթարեան Մովսէս վարդապետը բողոքում է պարսից կառավարութեանը Հայերի դէմ, որոնք իբր թէ Սալմաստում յեղափոխական ընկերութիւններ են կազմել, պատրաստվում են կառավարութիւնների դէմ կռուելու, մեծ քանակութեամբ զէնքեր ունին հաւաքած և այլն: Սալմաստցիք սաստիկ վախեցան, հաւթուանցիք երկիւղեց իրենց ընթերցարանը փակեցին ու ցրուեցին և քիչ մնաց ամբողջ զիւղը կաթոլիկութիւն ընդունէր: Մովսէս վարդապետը զրանով չըզոհացաւ. նա դնաց Թաւրիզ և այս ու այն անձերի դէմ մարդասպանութեան դատ բաց արեց, բայց ոչինչ չըկարողացաւ հաստատել: Այնուհետև Թէհրան զիմեց նախարարների ժողովին բողոքելու և Ֆրանսիական դեսպանի միջոցաւ ներդործելու համար: Սակայն նախարարապետ Ամին Սալթանայ չուլեց առանց ապացոյցների որ և է մէկի վրայ ձգել մեղքը: Այն ժամանակ վարդապետը իւր զայրոյթն ու մաղձը թափում է մի փոքրիկ վիմատիպ տետրակում, որ Հայերէն լեզուով Թէհրանում տպուեց՝ բայց հրատարակուեց իբրև Վինետկի Մխիթարեանց վիմադրատան արդիւնք. տետրակի նպատակն էր զխաւորապէս վայր ձգել Ստեփաննոս սրբազանին, որ ներկայացուած էր իբրև տէրութեան վնասակար մի անձնաւորութիւն: Նա՝ իբր թէ՝ Սրապիոն վարդապետին սպանել է տուել մի քանի Հայ լրագիրների կուսակցութեան պատկանող զործիչների միջոցաւ: Տետրակը զիւլջում էր և Էմիր-Նիզամին, որ այդ ժամանակ Թէհրան էր կանչուել և Շահին սիրելի մի անձն էր: Տետրակը զայրոյթ և իրարանցում ձգեց Թէհրանում: Շահը լսելով այդ՝ իսկոյն հրամայեց որ անպատճառ հրատարակչին գտնեն ու պատժեն: Թուրք վիմադրողը ձերբակալուելով խոստովանուեց որ հրա-

տարակիչը մի Թաւրիղեցի երիտասարդ է, որը Ստեփաննոս սրբազանի հրամանով Թաւրիղեցի հեռացրած էր և կաթողիկոսների ուսուցիչ էր գնացել: Կառավարութիւնը հրամայեց տետրակի ցրուած բոլոր օրինաները հաւաքել և ոչնչացնել, և այնուհետև այդպիսի երեւոյթներ իսպառ դադարեցնելու համար Թէհրանում առաջին անգամ սահմանուեց հայ և ռուս հրատարակութիւնների դրաքննութիւն: Մխիթարեան միաբանութիւնը Վենետիկից շտապեց հրապարակաւ ամեն «աղ-գայիններին» և այդ տետրակից «իրաւամբ վշտացող» անհատներին հաւատացնել, որ ինքը մասնակցութիւն չունի տետրակի տպագրութեանը և շատ ցաւում է կեղծիքի վերայ:

Բայց կաթողիկոսները պահանջէին չքննարկել: Մեսրոպ Փափազեան, հայ եկեղեցու վարդապետը, շրջադայելով Պարսկաստանի զանազան գիւղերն ու քաղաքները մի սպասաւորի հետ հասաւ հաւթուան և եկեղեցու սենեակում իջեանց: Հետեւեալ օրը գիշերով պապական ասորիները սպանում են հայ վարդապետին ու իր ծառային, խոսրովացիք յուսալով իրենց լատին պատերների պաշտպանութեան վերայ չեն յանձնում սպանողներին կառավարութեան ձեռքը: Ամբողջ Սալմաստի դաւառի հայերին սարսափելի յուզմունք է տիրում: Իսկոյն հեռադրում են Մխիթարեան սրբազանին: Սա աղղու կերպով աշխատում է մարդասպաններին դռնել սալ: Էմիրն իզամը (որ դեռ չէր գնացել Թէհրան) խիստ հրամաններ է ուղարկում Տիլմանի կառավարութեան վերայ (որին ենթարկվում են Սալմաստի գիւղերը), որ անպատճառ զոնեն սպանիչներին: Երկու սպանուածներին մեծ շքով թաղեցին հայերը եկեղեցուն կից հին մելիքների շարքում: Բայց ճիզուխի-ններն էլ իրենց կողմից վարձում են մի հաւթուանցի, որ վկայի թէ Փափազեանին Լաւթունցիք են սպանել: Երբ մարդը Թաւրիղ է հասնում, խղճահարվում է և յայտնում է թէ չէ կարող սուտ վկայութիւն տալ, դառնում է Սալմաստ: Ճիզուխիներն իրենց մի քանի ոսկին յետ ստանալու համար բանտարկել են տալիս յիշեալ հաւթուանցուն:

Հարուսակութիւնը միւս գրքում:





ТРЕ. АЗ. 1902.

Ամասիա. Երմանիզի լուսանկարիչ:

Городъ Амасія въ Малой Азіи.





ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ

ՄԵՐ ԽԷՉՕՆ

Էս օր է, որ մեր Խէչօն կուչ է եկել, կժկուել, դառել մի տղաթեւած հաւի ճուտ ու առաւօտեան զանգակի հետ տեղիցը վեր է կենում, դնում սուրբ Պօղոս-Պետրոս եկեղեցու պատը համբուրում, երեսին երեք խաչ քաշում ու լնզլնգալով իրանց այգու ճանապարհը բռնում, մինչև երեկոյ հնձանի կտերը նստում, այգին պահում և իրիկները վերադառնում:

Ասա՝ մի մարդ սկի բեղի տակումն աճեց է կայնում էդ մի բռնցքաչափ զզկնած հալիւորին, կամ միտք անում է, թէ մի օր կար, որ ծանօթ, անծանօթ դտակ էին հանում, Խէչօյին խոր դուլիս տալիս:

Էսպէս է աշխարհքիս բաները, իմ միս կտրող թշնամին չը ծերանայ, ուժից չընկնի: Լաւն էն է՝ մարդս քանի կռներումը զօրութիւն կայ ու ծնկներումն ոյժ, մինչև որ իր պատիւը տեղն է ու ջահէլների արհամարհանքին չի ենթարկուել, ջահէլների լեզուի տակ չի ընկել, իր պատուովը մեռնի, աշխարհքի ափսոսալիքը դառնայ:

Ափսոս չէ՞ր, որ մեր Խէչօն ծերացաւ:

Ասենք՝ ուղար սատկի, սատկի, էլի կաշին մի իշաբեռը կը լինի, մարդը թէկուզ ծերանայ, թէկուզ աղքատանայ, թէկուզ մեռնի, եթէ նա մի ժամանակ խելք ու հունար, շէնք ու շնորհք, մարդութիւն ու լաւութիւն ունեցել է, նրա անունը միշտ կը յիշուի, կը յիշատակուի:

էս մի բանն է, որ մարդիս սրտին յոյս է ու մխիթարանք. էս էլ որ չը լինի, աշխարհքի մէջ ապրելը բոլորովին պէտքը չի:

Քիչ պատիւ է մեր Խէչօյի Համար, որ ինքն անցկենալուս երեսին չեն մոտիկ տալիս, բայց ետեւիցն ականջն է ընկնում, որ ջահէլները մէկս մէկու փափսում են. դիտե՞ս՝ սա ո՞վ է, սա Խէչօն է, որ մի ժամանակ աշխարհք է դողացրել:

— Սա, էս անցկենող ծեփը, զարմացմամբ Հետաքրքրուում է խօսակիցը:

— Սյո՛, Հէնց սա, էս պատիկ փտած մարդը, կաւեւացնենք մենք, սա մեր Խէչօն է, որին շատ լաւ յիշում են իր ժամանակակիցները, որի անունը սարսափ էր պարսկական, տաճկական և ռուսական սահմանադրւոյնների նահանգներում:

Շատ ու շատ են մեր Խէչօյի դործերը, բայց մենք մտադիր չենք նրան իր կեանքի ամբողջ պատկերով ձեր առաջին տնկելու. բաւական է վերցնել նրա կեանքի անթիւ և անհամար երեւոյթներից ամենաանշան պէտքեր և դուք կիմանաք, թէ ի՞նչ մարդ էր, կամ ո՞վ է մեր Խէչօն:

— Ո՞վ էր. ո՞վ պէտք է լինէր, կը պատասխանեն մեղ շատերը, ձեր Խէչօն աւազակապետ էր, անապատների ու ձորերի բնակիչ էր, փլան ու Փստան դող թուրք բէգերի ընկեր էր:

— Խօսքդ շաքարով կոտրենք մենք, մեր Խէչօն դաշտապարուկ (չլէտառն) մարդակեր էր, արենխում էր. ուղիղ է ասածդ, Ե. աւաղակապետը նրա արեւոյն էր երգուում, յիշածդ բէգ ու բէգդապէքը նրա խօսքի միջնն երկու չէին անում, քուրդ ճասօ աղէն նրա անունը լսելուս՝ Թանի քերեղանը բերնիցը վէր էր քցում կոտրում:

Երբէք չեմ մոռանում ես մեր Խէչօյի երիտասարդական պատկերը և նրա զեղեցիկ կազմուածքը:

Սո՛ւտ է, թշնամու խօսք է, ո՞վ է ասում, թէ մեր Խէչօն աւաղակապետ էր: Սարերում ու չօլերում քաշ եկող մարդն էնպէս նուրբ պատկեր կունենայ, արեւի ու անձրեւի, քամու ու խորշակի տակ ընկնողն էնքան քնքուշ զծագրու-

Թիւնի տէր կը լինի: Հէնց իմանա՜ շուաքներումն ապրած, դիւանատաների փափուկ աթոռների վրայ բազմած դատաւոր լինէր, որ երբէք կոշտ ու կոպիտ առարկաների ձեռք չի տուել, այլ միայն սադի փետուրն է մատների մէջ շարունակ ճղճղացրել ու թղթերի երեսները լցրել:

Հաւատացէք ինձ, մեր Խէչօն իր անուսում տեղովը, իր տաշուած ու կոկուած վարմունքովը, իր անուշ լեզուովը, իր քաղցր մասլաՀաթներովն ու անկեղծ բարեկամութիւնովը ոչ թէ արենխում աւաղակի էր նման, այլ սրտակից եղբայր-տղայի, այլ զիտնական փիլիսոփայի և ամենաքաղաքավարի ուսումնականի: Որ մարդի Հետ կամաց-կամաց, ծանր-ծանր ժպտալով խօսում չէր ու դատողութիւններ տալի, մարդ ուղղւում էր վեր Թռչի ու է՛ն պռօշները Համբուրի, որ տեղից էդպէս անուշ խօսքեր են դուրս գալիս: Լեզու Հօ չէր, որ բանայնում էր, քաղցրահամ ու անմահական կերակուր էր, որ քո ճաշակի բաց էր անում, քեզ կշտացնում, քեզ իր զուխը սիրել տալիս: Անուշ տալիս՝ մի էնպէս սրտալի «ջա՛» էր Հետը միացնում, որ ջանումնէ նստում էր: Մեղք չի՞ մեր Խէչօյին աւաղակ ասելը. ի՞նչ կար նրա մէջ աւաղակի նմանութիւն, ոչ Հասակն էր բարձր, ոչ դէմքն էր սոսկալի ու անճոռնի, ոչ կազմուածքն էր անտաշ: Միջահասակից էլի կարճ, բարակ ու շիմշատ, պստիկ ու ճստիկ մի մարդ էր մեր Խէչօն. տեսնողը կասէր՝ մի ձեռքով վերցնեմ, եօթը սարի քամակը շարտեմ: Կը շարտէր բաս ի՞նչ կանէր. մարմնական ոյժ չունէր մեր Խէչօն, 15 տարեկան պատանին նրա Հետ կոխ պրծնելով, Հետն ըմբշամարտի կպչելով նրան զեննովը կըտար, եթէ նրա կողքից կախած չը լինէր իր անբաժան եղբայր արծաթապատ դաշոյնը:

Այդ ժամանակ զլսից ձեռք քաշած մարդը պէտք է փորձէր մեր Խէչօյին բարկացնել, անխելք յիմարի վերջին արեւ տեսնելն էն օրը կը լինէր: Հոգուս ծանր մեղք եմ անում, թէպէտ, ինչպէս մեր Խէչօն ինքն էլ այսօր վկայում է, 17 տարին մտնելու օրից մինչև 40-ը, իր մի ոտքը տանն է եղել, միւսը դուրսը, մի ձեռքին սուրն է եղել բռնած, միւս ձեռ-

քին ձիու սանձը, մի զիշեր փափուկ անկողում է պարկած եղել, տասը զիշեր ետփունջու կէսը վերմակ, կէսը մահիճ է շինել, թէպէտ չոր քարն է փետրալից բարձին փոխարինել, բայց մեր Խէչոն իր կեանքումը անմեղ արիւն չի թափել:

Մի ժամանակ մեր աշխարքն էն օրուայ նման Հանգիստ չէր, օր չէր անցկենալ, որ տապաւանութիւնների, մարդասպանութիւնների և կողոպտումների ձայներ չը լսուէին, շաբաթ չէր լինում, որ երեք սահմանակից տէրութիւնների մէջ բանակցութիւններ չը ծաղէր՝ երեք աշխարհքը խռովող աւաղակներին ոչնչացնելու մասին. բայց ինչ կանես, որ արած բոլոր փորձերը նպատակի չը հասան:

Հնար կ'ար միթէ մի յաջող ելքի գալը, կասէին քեզ ամէնքը, մինչ դեռ Խէչօյի խումբն էր աշխարհքն իրարոցով տուողը: Խէչոն ինքն էր այս ինչ տեղում այն ինչ վաճառականին իր ձեռքով ոչխարի նման մորթողը:

Ո՛չ, անամօթ զրպարտանքներ ու սուտ բամբասանքներ են, որ մեր Խէչօյի շուաքի ետեւից անում էին, էդ ձայները տարածողները միշտ իրանք երկջու ու կնատ հաւաքողից ճամփայ կտրող դառած աւաղակներն են եղել. կողոպտուածներին երկիւղ աղբելու համար աւաղակները Խէչօյի անունով են պարծեցել:

Ես չեմ ժխտում, մեր Խէչոն ինքն էլ չի ուրանում, որ արիւններ թափել է: Իգիթ աղամարդը, չօլերի Աստուածը եթէ արիւն թափելու շնորհ չունենայ, մինչև իր ընկերների աչքի առաջին իր նման աշխարհք սասանացնողներից տասնաւորներին հաւի ձագերի պէս մորթոտած չը լինի, նա կարո՞ղ է խումբ կաղմել, նա կը համարձակուի՞ վերև յիշածս արիւնկերների ընկերութեան զլուխը կանգնել. էն էլ ինքը մի Հայ, տասը թուրքի խանդատէք ու բեզդատէք:

Սյո՛, այո՛, մեր Խէչոն արիւն թափել է, բայց ոչ թէ աստուածասէր ու խաղաղասէր ժողովրդի արիւնն է թափել. նա ուրիշ տեսակ մարդկանց հոգեառն ու թշնամին էր. ընդ հակառակը աշխատասէր զիւղացիք ու բարի քաղաքացիք միշտ նրան կեանք ու արեւշատութիւն էին խնդրում, նրան օրհնում, օրհնաբանում էին:

Մի օր կար՝ ղըլուսը մի սոխ էր, իրիկունը մթնեց՝ չէիր վստահանում Հարեանիդ տունը ճրագլուսի գնալ, շատ անգամ արտդ մնում էր Հնձեղու, այգիդ փորելու, բար ու բարաքաթիդ տուն ածելու որովհետև «~~արհալ~~» (ժամանակ) փուչ էր, քչիցը՝ օրական Հինգ արիւնի ձէն էիր լսում. հասեղ տուին, տարան, էնտեղ կողոպտեցին, միւս տեղն ընկե Հարեանիդ սպանեցին:

Էդ անապահօվ վայ ու վայնասունի օրերը նոր չէին, վաղուց էին անցկացել, Հիմի ոսկին «նախ» (ափսէ) ղըլսիդ ղիր, ճամփայ ընկիր, օշով քո իշին չօշ չի տսիլ: Էդ «~~արհալ~~» էդ վտանգներն էն ժամանակներն էին որ զեռ մեր Խէջօյ լոյս չէր ընկել: Մեր Խէջօյի անունը դուրս եկած օրից՝ էս օր լսում էիր, թէ Ֆլան աւաղակապեան է եղել սպանուած դաշտումը քցած, էգուց՝ միւսն է բռնուած, ոտերը բխոված, (պրկած), բերդը դրած. մի քանի ամսումը ջնջուեցին ոչնչացան, Հոսները կտրուեց: Շատերն իրանց ոտովն եկան, երկրի դատաւորի ծնկներն ընկան, մեղաց եկան, որ էլ այսուհետև Հարամութիւն չեն անիլ ու իրաւունք առան, ղնացին իրանց Հօր արհեստը բանացրին, իրանց արեւի ձէնն ածեցին:

Բայց էդ դարձ կողոններն էն էլ չը մոռացան բացաշկեարայ երկրի տէրերին խոստովանուել, որ նրանց մօտ դալուց յառաջ, իրանք Խէջօյին են խօսք տուել, որ աղաւաղակութիւնը թողան:

Արի՛ ու խօսք մի տալ, մեր Խէջօյի «~~արհալ~~» տեսել էին, վաղի առակի պէս դայլե աչքերն էին աղուէսին վարպետ շինել:

Խէջօյի էդ աղնիւ դործերն էին, որ նրա էհալբարը (վարկ) երկրի կառավարիչների մօտ բարձրացրել էին. էս ու էն մեծամեծների տներն էնպէս Համարձակ ել ու մուտ կանէր, դրանց Հեռ ծնկնէծունք կը նստէր, ոնց որ դու քո աղիդ սիրեկան բարեկամի մօտ կը մտնես:

Մեր ասածիցն էն է դուրս դալիս, որ մեր Խէջօն միայն աւաղակներ զսպող է եղել, ուրիշ ոչինչ սխալանք չի արել, կամ արիւններ չի արել:

— Զէ՛, էսպէս վկայելով մենք Աստծուն խաբած կը լինինք. հալալ մարդն էնպէս ընկերներ չէր ունենալ. մեր Խէչօյի էս օրուայ ընկերները մի օր իրա սպանոտած աւազակների խմբապետներն էին ու հիմի իրանք են մտել Խէչօյի պէս մի պստիկ հայի բուռը ու հաւատարիմ որսկան թաղու պէս աչքներն իրենց տիրոջ երեսին քցած՝ նրա հրամանին են սպասում՝ որսի քամակիցն ընկնելու:

Ուրեմն մեր Խէչօն կատարեալ ճանապարհ կտրող աւազակների ընկերն ու զլխաւորն էր, և էդպէս էր:

Բայց աւազակներից, ասացինք՝ մեր Խէչօյի սուրը շատերի սրտումն է ցցուել: Այո՛, շատ հարուստների ոսկիք Խէչօյի փորումը հալուել էն:

Որտեղ աղքատի բերանից պատառը խլող, շահի շահ առնող, ժլատ հայ ու թուրք կային, ինչտեղ իրանց ուսհաթին զրկող, նեղացնող կալուածատէրեր լինէին, ինչտեղ հողիքը դադի ծերին չափող բազազներ, կշեռքում հարամութիւն անող հացածախներ կային, բոլորը կամ ուղղուում, աստուածավախ, ճշմարիտ, ողորմած ու աղքատասէր էին դառնում, կամ թէ կեանքները լորի պոչի պէս կարճանում էր, դժոխքի բաժին էին լինում: Մեր Խէչօն իր ձեռքով էր էդպէսներին զնգակախորով անում, կամ վզերը կարմիր թել կապում (մորթել):

Զենք կարող ուրանալ, որ մեր աշխարհքի ամէն մի քարայրն ու ձորերը յայտնի էին մեր Խէչօյին, բայց էս էլ ասացինք, որ տարուան մեծ մասը նրա մի ոտը Օսմանցուի հողումն էր, միւսը Ղզլբաշի: Ղարս ու Արզրումի սարերը, Թաւրիզի, Խոյի ու Սալմաստի ձորերը մեր Խէչօն իր հօր տան քունջ ու պուճախի պէս դիտէր:

Էս օր կըլտէիր, թէ Խորասանու ճանապարհից մի ուղտի կարաւան՝ ոնց որ մի ասեղ՝ մի օրումն անյայտացել է, էդուց ձէն վեր կըլինէր, թէ Արզրումի ու Բայազեդի մէջ տեղը այս ինչ հայ, կամ տաճիկ վաճառականի ապրանքի բեռները ցրիւ են տուած. երրորդ օրը կըպատմուէր, որ Թիֆլիզու և Երևանի ճանապարհից Կոպէց Մարտիրոսի ապրանքը

բերող ֆուրգունները դատարկ են յետ եկել ու ապրանքի փոխարէն տեղական վարչութիւնների վկայութիւնն են բերել, որ ֆուրգունների բեմներն աւաղակների խաչով են խաչուել:

Եթէ էս լուրերի հետ լսեցիր, որ ապրանքը կողոպտելուս ոչ մի սայլորդ, կամ քրեհտար չի սպանուել, կամ թէ տեսնում ես, որ ամէնքը յաւում են, թէ ընչի՞ ապրանքների հետ իրանց անաստուած ու անխղճմտանք տէրերն էլ չեն սպանուած, իմացիր, որ էդ բոլոր կողոպտուածները մեր Խէչոյի իր դործն է. Խէչօն վատ մարդկանց Գաբրել-Մուքէլն էր:

Մի անգամ մեր Խէչօն իր խմբով մի զիշեր Աղլըաշի հողումը՝ Արարդաղի մի մեծ զիւղում ուզում է մի երկու ժամ հանդստանալ, ձիանոնց ու իրանց փորերը կշտացնել ու ճանապարհ ընկնել: Թուրքի զիւղ է լինում:

Արի տես, որ էդ ահադին շէն ու շէնիկումը մի կտոր ցորնի հաց և մի բուռը դարի չի ճարուել. էս ու էն տներից ժողոված, մի շաբթէն թխած չոր կորկի ճաթ են դրել նրանց առաջը. պանրի, իւղի, թանի, ձուի անուան էլ մի տալ:

Մեր Խէչօն չի հաւատացել, զիւղ լինի ու հաւ ու ճիւղ, կով ու կթան չլինի, վարուցանքի տէր լինիս ու մի բուռը ցորեն կամ դարի չունենան:

Խէչօն վեր է կացել կէս զիշերին՝ իր սրի զոռով զիւղի մի ծայրից մտել, միւսից դուրս եկել, տուն, տեղ գոմ, ծակ, ծուկ չի թողել՝ ճրագով տակն ու վրայ է արել:

Իմ արենիկը թշնամուն Աստուած ոչ հանգիպեցնի՝ ինչ նրանք են տեսել. քաղցածութիւնը, մերկութիւնը, դառն աղքատութիւնը համահաւասար բռնած է եղել զիւղը. տնաբանդի թուրքերը մի մի փալաս չեն ունեցել, որ տակները, քցեն, խոտերի վրայ են եղել անասունների պէս վէր թափուած. ողջ զիւղը կրակ տայիր, քիթի շորահոտ չէր առնիլ, մի մի պղինձ չեն ունեցել, որ բայրամի օրերը զոնէ, կրակին դնէին:

Խէչօն հարց ու խնդիր է եղել, պատճառն իմացել, որ էդ ջրատարների տարուան բոլոր աշխատանքը մոնում է զիւղի կալուածատէր խանի փորը. մղում ու քամում է եղել անիրաւն իւր ռահաթին:

— Էն օրուանից՝ որ մեծ խանն իր հօրը թաղեց, էն օրուանից մեր աստղը խաւարեց, պատմել են զիւղացիք, սրա հօր կենդանութեան ժամանակ ձեղ նման աղայ մարդիկ օրական 100-ը դային, թագաւորաւայել պատիւ կստանային մեր զիւղումը: Ի՛նչ արած, մենք էլ ուրախ չենք, որ ձեր հրամանոց մօտ սեւերես ենք մնում:

— Ձեր խանի մահից յետոյ զիւղն ո՛ւմն է մնալու, հարցնում է մեր Խէչօն զիւղացիներէ:

— Ո՞ւր էր, աղայ ջան, Աստուած բերանիցդ լսէր, մեծ խանի հոգին առնէր, փոքր եղբայրը մի պատուական մարդ է, եթէ բայրամներ ժամանակ (տօն) չորաթանի կամ բրնձի համար տեսնում ենք, փոքր խանի ողորմութիւնիցն է, եղբօրիցը թագուն ամէն տուն ուղարկում է:

— Որ էգպէս է, այսուհետեւ շատ բայրամներ կունենաք, ու երբ բայրամի օրը նամազ անելուս կը լինէք, ձեր բայրամ տուողի համար էլ աղօթք արէք, ասում է Խէչօն:

Եթէ հետեւեալ առաւօտն այն զիւղը մանէիր, կը կարծէիր, թէ Նովրուդ-Բայրամն է, զիւղացիք բոլոր, մեր ու մանուկ հաւաքուած են խանի ամարաթի առաջը և ուրախ ուրախ փառք են սալիս Աստծուն: Ի՛նչ է՝ թէ էս զիշեր զողերն իրանց մեծ խանին միջից չորս կտոր են արել ու տանից մի ասեղչեն տարել:

Մեր Խէչօն իր ձեռքովն է մեծ խանի գլուխը կտրել, Խէչօյի ընկերներն են կտոր կտոր արել:

Մի ժամանակ կար, որ մեր երկրի գործ ածած մովեղէնը (մետաքսեղէն) Ղզլաշից, իսկ միւս խասեղէնը (կերպաս) Օսմանլուից էր գալիս: Դրսից եկած ապրանքների վրայ մեծ մաքս էր դրած: Էդ արած էր, ի հարկէ, որ վաճառականները մերը թողած ուրիշի հացին իւր չը քսէին, իրաւ որի ապրանքը թողած՝ օտարինը չը ծախէին:

Մեծ հսկողութիւն կար կարգուած. զէնքերի մէջ կորած պահապաններ ու կանոնաւոր զաւակներ մօտ է մօտ կայաններում անքուն սպասում էին. մի քանի տեղ մաքսատներ էին բացուած, բայց շուկաներումը արգելուած ապրանքը

Համարձակ ծախուում էր, էն էլ՝ նշանակած մաքսի գնից շատ պակաս:

Մաքսանենդների շնորհքն էր այս, իսկ ինչպէս ուրիշներն ասում էին, մեր Խէչօն ամենազլիսաւոր մաքսանենդն էր:

Բանաւոր պայման էր կապում նա վաճառականի հետ և թռչում իր ոսկէդոյն Ղարաբաղու նժոյգ ձիու քամակը:

Մի քանի օրից՝ տուած փողի արժէքով մետաքսեղէն, եւրոպական թանգազին խմիչքներ, թէյ, շաքար, ինչ որ վաճառականի ծախելիքն էր, մի զիշեր նրա խանութն էր լըցնում, իր վարձն առնում ու դնում ուրիշի համար բերելու:

Միայն մեր Խէչօն չէր մաքսանենդութիւնով պարապում, շատ քաջ մարդիկ էդ ճանապարհով հաց էին ուտում: Բայց շատ շատերը միշտ չէին յաջողում: Երբեմն նրանք ապրանքը զազախների ձեռքին էին թողնում, իրանք գլխներն ազատում, վախտ էլ գլխներն ապրանքի հետ զազախներին էին բաշխում:

Օր չէր անցկենալ, որ զազախները փախցրած ապրանք չը խլէին, կամ մաքսանենդներ չը բռնէին, բայց զազախներն ուրախ էին, որ տարուայ մէջ մի անգամ միայն կարողանան իրանց պարտքը կատարել: Թաքըլի բռնուողը Խէչօն լինէր:

— Կէ՛չ, Կէ՛չ, ե՛րբ պէտք է մեր ճանդն ընկնի Կէ՛չ, Տաղէն-նի՛ Կէ՛չ, ախ էին քաշում զազախները:

Ղազախներն էլ մեղաւոր չեն, անիրաւ Խէչօն խեղճերին չէին: Եր պար ածում, դիւադադար էր անում, ի՞նչ խաղ ասես, որ նրանց գլուխը չը բերէր:

Իրան է յայտնի, թէ ինչպէս էր ապրանքը սահմանն անցկացնում, բայց երբ որ էնքան հեռացնում էր, որ ապահովուում էր, թէ էլ զազախի ձեռքը չի ընկնիլ, Խէչօն վերադառնում էր ու ձին քշում դէպի զազախները, ատրճանակն երեք անգամ կրակ տալիս ու փախչում: Գնդակներ է որ ետևիցը սուալով, օդը ճղելով դուր կորչում են: Խեղճերն ստիպուած էին լինում յայտնի հայհոյանքը քամակիցն ու զարկելով՝ իրանց սիրտը հանգստացնել:

Մի անգամ զազախները հօտն առնում են, որ Խէչօն Պա-

րականտանից 50 բեռն ապրանք էս քանի օրս անց է կացնելու:

Մի նեղ կիրճ է լինում միակ անցքը:

Էսօր, էգուց, էլ օր, զալ օր՝ չըկայ, որ չըկայ. մտածում են՝ չըլինի՞ խաբուել են լրտեսից: Բայց լրտեսը երգում հաւատ է անում, որ ինքն իր աչքովը տեսաւ Խէչօյին իր ընկերներով կարաւանի առաջն ընկած: Հսկողութիւնը շարունակում են:

Մի օր, գիշերուայ մի ժամանակը, ինչպէս է լինում, ինչպէս է պատահում, զաղախների քունը տանում է: Խեղճերը գլխի են ունենում, կերելի՝ մի մի բաժակ սուելի են խմել:

Սովորաբար զաղախներն իրանց հրացանները մէկս մէկու դէմ տալով՝ պատրաստ կանգնացնում են, որ պէտք եկած ժամանակն իսկոյն վերցնեն ու գործ ածեն:

Էն ժամանակները դեռ ոչ պիտոնով հրացաններ կային և ոչ նոր ձևի շուտ բացողները. բեվոյվերի անունը չէր լսուած. հրացան ու ատրճանակ բոլորը քար ու լախնախով էին (կայծաքար և հրահան):

Յանկարծ զաղախները հրացանի ձայներ են լսում, աչքները բանում են, որ տրաք-տրաքոյն իրանց ոտի տակին է:

— Սմաչեցէք, ամաչեցէք, Խէչօն 50 բեռն ապրանք փախցրեց և դուք խռովացնում էք, յանդիմանում է զաղախներին հրացան արձակող ձիաւորը:

— Կէչօ, Կէչօ, ձայն ձայնի տուին զաղախները:

— Հա, Հա, Կէչօ, աչքներդ լաւ բաց արէք, ես եմ Կէչօն, քանի օրուայ աշխատանքներդ ջուրն ընկաւ, ջուրը տարաւ, 50 բեռն ապրանքն անվնաս անց կացաւ, ասում է Խէչօն և մի վերջին անգամ լոկ վառօթով լցրած ատրճանակը ուղղակի զաղախների խմբի մէջ դատարկում ու ծանր ծանր ձին կրնդում:

Հաղախներն շտապով վերցնում են իրանց հրացաններն և ոտքը քաշում, բայց ոչ մէկը չի տրաքում. չըրը՛իկ, չըրը՛իկ, չըրը՛իկ՝ ուրիշ ոչինչ:

Ամէնքը շուարում են. նրանց հրացաններն երբէք սխալուած չեն, հիմի ի՞նչ Աստուած խռովեց իրանց գլխին.

— Ոչինչ շատ հասարակ բան, բոլոր հրացանների կայ-
ծաքարերը մեր Խէչօն հանոտել է ու հրացանները տեղը
կանգնացրել:

— Մնաք բարեւ, սիրելի ղաղախնե՛ր ծաղրել է մեր Խէ-
չօն, որտեղ ձերը պատմէք, իմն էլ վրէն աւելացրէք:

Ասել է Խէչօն ու ձին քշել:

Մեր Խէչօյի քաջազործութիւնները մի Յայսմաւուրք
կը լցնեն, բայց ես ուզում եմ նրա հայրենասիրութիւնի մի
օրինակն էլ պատմել ու ծերին կապ տալ:

Մի անգամ Խէչօն ընկերներին ուղարկում է կարաւան
կտրելու և ինքը յետ է մնում:

Երկու երեք օր անց է կացել, տղէքանց ոչ ձէնը կայ,
ոչ իրանք: Զիու քամակն է թռչում, չօլն ընկնում:

Մի ձորամիջում Խէչօն հեռուից իր ընկերների ձայնը
լսում է: Ծիծաղ, հանաքներ, հռհռոց, քռքռոց բարձրացել է
իրան յայտնի մի այրի միջից:

Ուղղակի ձիու գլուխը դէպի այրն է դարցնում և զար-
մանում, թէ ի՞նչ է ընկերների անսովոր ուրախութեան պատ-
ճառը. դրանք երբէք իւր ներկայութեամբը էնքան ուրախ
չեն եղել:

Մօտենում է այրին և մուտքի առաջին վառած մեծ
կրակի լուսով տեսնում հեռուումն ընկած անգլուխ դիակը:

Յառաջ է դալիս մեր Խէչօն և նկատում, որ սպանուա-
ծի հաղինը հայ տէրաէրի փարաջայ է, իսկ մի կողմն ընկած
է քահանայի գլուխը՝ մօրուքը դէպի երկինք ցցուած:

Հէնց էդ ժամանակն էլ լսում է այրի միջից ընկերնե-
րից մէկի խօսքերը.

— Լաւ քէֆ արէք, տղէ՛րք, էսօր մեր աղատ օրն է,
բռնաւ չափ հայի աչքը մեր սիրտը չի զողացնում, մեռանք
առաջին մուկը դառնալով:

— Ի՞նչ անենք, որ մուկը չը դառնանք, պատասխանում
է մի երկրորդը, մեղանից աւելի կտրիճները փորձեր շատ
արին, ուղեցան առանց Խէչօյի բան տեսնել, բայց որը կա-
խաղանի վրայ քացի քացի անելով շունչը փչեց, որն էլ Սի-

բիրումը փթեց: Էն մարդի վրայ սատանայի Բլխանէ (Հմա-
յութիւն) կայ, քանի իր Հեռ ենք, մի օր զատարկ ձեռքով
չենք յետ դառել և ոչ բռնուել ենք: Դատաւորները բոլորը
զիտեն, որ Խէչօն իր ընկերներով օրական եօթն արիւն, 17 Դա-
ւան (ասպատակութիւն) է անում, բայց մէկը չի ասում, թէ քա-
մին քեզ դիպչի. զիշերները ճանապարհ ենք կտրում, ցերեկը
մեր ընտանիքի Հեռ ենք մեր տներում ժամանակ անցկացնում:

— Վնաս չունի, մենք էլ իրա վրէժը կառնենք իր ազգից,
վրայ բերեց մի ուրիշը, տարեկան մի քանի տէրտէր կրմորթենք:
Օխայ, աւելացրեց նոյն աւազակը, ձեռքս որ չը քցեցի տէրտէրի
մօրուքն ու զլուկը կտրեցի, սրտիս վրայ մի թիղ իւղ կանդ-
նեց, ես աւելի ուրախացայ, քան թէ Ն. բէզն իր մօրթած
ոչխարովը, որի խորովածը ձեռքներիս կոծում ենք:

— Հա՛, Հա՛, Հա՛, ձայն ձայնի տուին ամէնքը:

Հէնց էս միջոցում Խէչօն սուս ու փուս ներս է մտնում
ու անխօս գլխավերեւները կանգնում:

Աւազակները բոլորը պապանձուում են և դողալով
տեղներիցը կանգնում:

— Ապրիք աղէ՛րք, խեղճ ժողովուրդին քերթող մի տէր-
տէրի արեւ մթնացրել էք, ասում է Խէչօն, վաղուց մտքումս
դրել էի սրա պէս մի քանիսին էն աշխարհը զրկել, բայց
չէր յաջողւում, դուք իմ միտքս հասկացել էք:

Ասում է Խէչօն և նստում:

Անցնում է մի քանի շաբաթ:

Մի օր Պարսկաստանում Խէչօն տեսնում է, որ մի քանի
սէյիդ, դավըիշ ու մուլա ճանապարհովը զալիս են:

Իսկոյն նա հրամայում է իր ընկերներին, որ բոլորին ձորա-
մէջը քշեն, մէկ մէկ մօրթոտեն ու գլխներն իրար մօտ շարեն:

Ատամները կրճտելով, սրտներին հուպ տալով՝ Խէչօյի
ընկերները իրանց հողեօրականներին սուրն են քաշում:

— Եթէ ձեր մօրթած տէրտէրը մի գիւղի էր միայն
վնաս տալի, ասում է Խէչօն հեզնական ժպտով, էս քաղ-
ցած դայլերը և իրանց նմանները թուրք ու հայի զլուխ
չեն թողում, ոտնատակ են տալիս: Որքան սրանցից շատ կո-

տորենք, ինչքան անգործ ու պարապ—սարապ, զիւղացու ա-
րիւնք տղրկի պէս ծծող սէյիդներին, դարվիշներին ու խա-
բեայ մօլլաներին շատ ուղարկենք Վանախը (գրախար) էն-
քան մեր թափած արիւնների ծանրութիւնը մեր վրէյ կը
թեթևանայ:

Ընկերները ոչ մի ձայն չեն հանում, հասկանում են, թէ
սլաքն ի՞նչ տեղ է ցցում, իմանում են, որ տէրտէրի վրէժն
է առնում:

Եւ ճանապարհորդութիւնից վերադառնում է մեր Խէ-
ջօն և իր ընկերներին հրաժարական տալիս: Նա չի ծածկում,
յայտնում է, որ ինքը նրանց թշնամին է, յայտնում է, որ
ինքը լսել էր այրի դռանը նրանց խօսակցութիւնը և թէ
այսուհետեւ եթէ խելք ունին, թող իրանից հեռու ման գան,
որովհետեւ երգուել է քահանայի թափուած անմեղ արիւ-
նովը, որ մինչև բոլորին էլ չըբռնի ու արդարութեան աստե-
նին չըմատնի, չի հանգստանալու: Մեր Խէջօն իր ուխտը կա-
տարեց, առաջին գործն եղաւ տէրտէրին մօրթողին ասպա-
տակութեան ժամանակ բռնել և իր ձեռքով մօրթել, զու-
լը կտրել և դունչը դէպի վերեւ դնել: Միւսներին էլ մէկ մէկ
բռնեց և սիրիական արեց:

Զը կարծէք, թէ Խէջօն նամարդի (ապիկար) պէս իրանց
աներուֆն էր բռնոտում, ոչ, նա Սուրբ Գէորգի պէս ամէն
մէկին չարագործութեան տեղումն էր վրայ հասնում, կողոպ-
տողներին ազատում, կողոպտողին բռնում ու կռներն
ետեիցը կապում:

Ի՞նչ եմ գլխացաւանք անում, մեր Խէջօյի մասին այժմ
այդքանը հերիք է. եթէ օրը կըգայ՝ բարին հետը՝ միւս ան-
գամ ուրախ սրտով, ցամաք աչքով կարժանանանք ես ու
մեր Խէջօն միմեանց համբուրել, հետը կերթամ՝ նրանց այ-
գին, թուղթ ու զրիչը մօտս կունենամ, ծառերի հովուքը
կը նստենք, մի կողմից ծառից ընկած պտուղներն անուշ
կանենք, միւս կողմից թղթի երեսները կըսւսցնենք:

ԿԻՄ X Գ Ե Զ Ը Թ Կ



Մ Ա Տ Ե Ն Ա Խ Օ Ս Ա Կ Ա Ն

Du Caucase au golfe Persique a travers L'Arménie, le Kurdistan et la Mésopotamie par P. Müller-Simonis suivie de notices sur la geographie et l'histoire ancienne de l'Arménie et les inscriptions cunéiformes du Bassin de van par H. Hyvernats. Delhomme et briguet, éditeurs, Paris Rue de L'Abbaye, 13. 1892 en.

Կովկասից մինչև Պարսից ծոցը հայաստանի, Բուրղաստանի և Միջագետքի վերայով. Միլլեր-Սիմոնի. հայաստանի հին աշխարհագրութեան և պատմութեան մասին ակնարկներով նոյնպէս Վանի աւազանի սեպաձև արձանագրութիւնների յաւելուածով ի միասին. շարագրութիւն հիվերնատի:

Այս գիրքը, որը մի մեծ ծաւալով և շատ սիրուն հրատարակած հատոր է, լի բաղմաթիւ և հիանալի նկարներով, որոնք ընդօրինակուած են տեղն ու տեղը հանած լուսանկարներից, հանդիսանում է իբրեւ մի բաղմակողմանի հետաքրքիր շարագրութիւն, առանձնապէս այն մարդկանց համար, որոնք հետաքրքրվում են հայոց պատմութեամբ: Հեղինակները, երկու կաթոլիկ արեղաներ, այս շարագրութեան աշխատանքը այնպէս են բաժանել իրենց մէջ, որ Միլլեր-Սիմոնը գրել է տեղագրական և նկարագրական մասը, իսկ հիվերնատը զբաղուել է նորա լեզուագիտական մասով և սեպաձև արձանագրութիւնների հետազոտութեամբ:

Ճանապարհորդութեան նկարագիրը կազմուած է յիշատակարանի ձեռով օրէջօր, և մեծ տաղանդով ու զիտողութեամբ: Այն տեղը, որի վերայով անցել են ճանապարհորդները և այն մարդիկ, որոնց նրանք պատահել են և որոնց հետ նրանք ապրել են, կենդանի լեզուով է նկարագրուած և Արեւելքի կատարեալ պատկերն են տալիս: Բայց այս ամենի հետ ի միասին, մարդու վերայ անսխորժ տպաւորութիւն է թողնում Միւլլեր-Միմնի, հռովմի քարոզչական կոլլէժի աստուածաբանութեան ուսանողի կաթոլիկական մոլեռանդութիւնը: Նա խիստ մեծ տեղ է նուիրում Պարսկաստանի և Հայաստանի կաթոլիկ միսիոնարների գործունէութեան նկարագրութեանը և զովասանելուն, նա յոյս է յայտնում նրանց գործունէութեան շրջանի ապագայի զարգացման վերաբերութեամբ. սորա հետ ի միասին տեղահանութիւն է յայտնում հայերի անողորմաճութեան վերաբերութեամբ, որոնց մասին միայն անցողակի է յիշատակում այն էլ խիստ անկարեկից արտայայտութիւններով: Առանձնապէս նա շատ յարձակվում է Վանի հայերի վերայ, նրանց վտտարի անուանելով, որոնք պատրաստ են իբր թէ ամեն տեսակ ստոր հաճոյականութիւններ անելու տեղային իշխանութեանց առաջ: Աչքի առաջ ունենալով հայերի քաղաքական վիճակը և նրանց բնաւորութեան անհաճոյ դժերը, հեղինակը հաւատացնում է, որ նրանց զոյութիւնը, իբրեւ մի չեղբ ժողովրդի, միայն մի անիրադործելի միտք է, բայց հէնց իսկոյն էլ աւելացնում է, որ հայերը մտաւորապէս շատ են օժտուած, և ինչպէս ազգ, նրանք փայլուն ապագայ ունին: Նկարների մէջ մասնաւոր ուշադրութիւն է դրուում Վանի մօտ գտնուած Վարապի (եղի—քիլիսէ) կոչուած վանքի մէջ եղած Սենքերիմ թագաւորի գահը, որի արտանկարը կղեւեղենք մեր հանդիսի յաջորդ գրքում:

Գիտնական տեսակէտից աւելի հետաքրքիր են յաւելուածները, Հայաստանի հին պատմութեան ակնարկները Ասորեստանի թագաւորների տարեգրութիւնների և Վանի հայոց արձանագրութիւնների վերաբերմամբ, հայոց հին պատմու-

Թեան ակնարկները և չի վերնաստի գրած Մովսէս Խորենացու հայոց Հին պատմութեան մասին յայտնած կարծիքը: Այսպէս նա ժխտում է Մար-Աբաս Կատինայի վաւերականութիւնը, որին իբրեւ ասորի մի դիւանականի վկայ է բերում Մովսէս Խորենացին, իբր թէ նա Պարթևաց Արշակ Թաղաւորից թոյտուութիւն ստացաւ՝ որ ծանօթանայ Նինուէի Հին մատենադարանի հետ: Նեղինակն ասում է, որ այն դարում, երբ ապրում էր Մար-Աբաս Կատինան, Նինուէի Հին մատենադարանը արդէն չորս հարիւր տարի էր որ թաղուած էր Սարգանապաղի պալատի աւերակների տակ: Ներկայումս Հին մատենադարանը գտնվում է Բրիտանական Թանգարանում և մինչև օրս Ասորեստանի հնախոյզները ոչ մի բան չըզտան այնտեղ, որ հաստատէր Մովսէս Խորենացու՝ այս ասորի դիւանականից առած՝ Հին պատմութիւնը:

Սակաւ է նա հաւատ ընծայում և Ասորեստանի թաղաւորների հրամանով այլ և այլ յիշատակարանների վերայ արձանադրած տարեգրութիւններին: Կարգալով այդ արձանադրութիւնները, ասում է նա, կարելի է կարծել, որ Ասորեստանի թաղաւորները ուրիշ ոչնչով չէին պարագում, եթէ ոչ փայլուն յաղթանակներ տանելով հարեան, առաւելապէս հայկական, թաղաւորների վերայ, սակայն այս արձանադրութիւններում եղած բաւական նշանաւոր ժամանակամիջոցների թողնուած տեղերը ապացուցանում են որ Ասորեստանին դառն օրերը էլ էին վիճակվում: Նեղինակը՝ համեմատելով Ասորեստանի աղբիւրների հետ նաև Վանի արձանադրութիւնները, որոնք տուրանական ծագում ունեցող ժողովրդին են պատկանում, ընդունում կամ հերքում է այս ու այն պատմական իրողութիւնը: Բայց Վանի արձանադրութիւններին նա աւելի կարեւոր նշանակութիւն է տալիս Ասորեստանի արձանադրութիւններից: Նա էլ սկզբներում ոչ միայն թաղաւորների յաղթութիւններն է փառաբանում, այլ և նոցա խաղաղ գործերը:

Այնուհետև խօսելով, որ Ուրարտուի ժողովուրդը յաղթուեց իրանական ծագում ունեցող մի ուրիշ ժողովրդից,

այն է՝ այժմեան Հայերից, որոնց հետ նա ձուլուեց, չի վեր-
նաառնալով այսպէս է վերջացնում իւր Ասորեստանի արձանագ-
րութիւնների նկարագիրը: «Սարգանապաղի ժամանակնե-
րից (669—626 Ք. Ա.) ընտհատվում են Ասորեստանի յարա-
բերութիւնները հայաստանի հետ, որը այս ժամանակ արդէն
մի ամբողջ դարի ընթացքում իւր անկմանն էր դիմում:
Բայց Ասորեստանն էլ, իւր փառքի ամենաբարձր կէտում կան-
գնած լինելով հանդերձ՝ մերձ էր իւր անկմանը: Այն ինչ
Ուրարտուցիք վերակենդանացան ի դէմս մի այլ ժողովուրդի,
որը թէև ուրիշ լեզուով էր խօսում և ուրիշ ցեղի էր պատ-
կանում, բայց և այնպէս ժառանգորդ դարձաւ հպարտ լեռ-
նականների ստեղծած անկախութեան, որոնք դարերի ըն-
թացքում մաքառում էին ասորեստանցոց ահադին ոյժի դէմ:
Այդ ժողովուրդը (Հայերը) նոյնպէս բաղմաթիւ փառաւոր
էջերի արժանացաւ պատմութեան տախտակների վրայ. նա
ստեղծեց ամենահարուստ գրականութիւններից մինը, ամե-
նախնքնուրոյն և միևնոյն ժամանակ վեհ ճարտարապետական
ճաշակ: Իսկ երբ ազգերի մեծ շարժման ժամանակ նա ստի-
պուած պէտք է փախէր նոյն այն տուրանական ժողովուրդ-
ների արշաւանքի երեսից, որոնց նա երկու հազար տարի
առաջ զրկել էր ոյժից,—այնուամենայնիւ նա օտարութեան
մէջ էլ ամեն տեղ պահպանեց իր հայրինասիրութիւնը,
իր ազգայնութիւնը, իւր այսպէս ասած անհատականու-
թիւնը: Հայերը միշտ զոյութիւն կունենան: Մինչդեռ Ասո-
րեստանը, ընդհակառակը, ժառանգներ չունեցաւ: Նա թա-
ղուեց նինուէի աւերակների փոշու տակ, մինչև որ Բոտտա
և Լէարդ ուսումնականները դերեղմանից հանեցին նրան ու
յայտնադործեցին նրա 25 դար հոգի տակ թաղուած սխա-
մութիւնը»:

Լ. Մ.



Գարուն, նկար Ռէաիկի:

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԲԱԺԻՆ





Յ. ԱՅՎԱԶՈՎՍԿԻ, Գ. ՍԵՄԻՐԱԴՍԿԻ, ԿՐԷՑ,
Փ. ՎԻԽԵՐՏ ԵՒ Գ. ԳԱՐՐԻԷԼԵՆՆՅՈՒՆ

«Եղիւկալէ» կամ «Եօթն աշտարակներ» Կ. Պոլսում» Յ.
Այվազովսկու փայլուն գործերից միինն է։ Նա մի առանձին
սիրով ու բանաստեղծական աւիւնով է նկարում Բոսֆորի
գեղեցկութիւնները, որոնք նրա գեղամատաղ Հոգու վերայ
մեծ տպաւորութիւն թողեցին նրա առաջին Ճանապարհոր-
դութեան ժամանակ դէպի Կ. Պոլիս Հանգուցեալ մեծ իշխան
Կոստանդին Նիկոլաւչի Հետ 1844 թ.։ Այվազովսկու այնու-
հետեւ մի քանի անգամ արած Ճանապարհորդութիւնները
դէպի Սուլթանների մայրաքաղաքը հարստացնում էին նրան
անգաղար նորանոր տպաւորութիւններով, իսկ նրա Ճանա-
պարհորդական ալբոմը՝ թղթի անցրած նկարների հարուստ
ժողովածուով, որոնցից նա նիւթեր է քաղում իր բաղմա-
թիւ պատկերների համար, որոնց մէջ նկարուած բնութեան
գեղեցկութիւնը զարթեցնում է նրա իսկ-բանաստեղծական
խանդի բոլոր ուժերը։ Մեր այստեղ գրուած պատկերում
լուսնեակի մեղմ լոյսը անդրադառնալով ծովի անհուն լայն
երեսից, մի հրաշալի հակապատկեր է կազմում բիւզանդա-
կան մուսլլ ամրոցի հետ համեմատելով, որը գեռ ներկայ դա-
րիս առաջին կիսումը քաղաքական բանալի պաշտօն էր կա-
տարում։ Մինչև այսօր մնացած խցերը արգելականների հա-
մար ներկայացնում են անձուկ սենեակներ առանց պատու-
հանների և համարձակ կարող են քարեայ վանդակներ կո-
չուել։ Նրանցում ի միջի այլոց մաշվում էին Բուլղակով և

Ուշակով ռուս դեսպանները Կատարինէ Բ. և Սլէքսանդր Ա. կայսերութեան ժամանակ, այդ միապետների պատերազմների ժամանակ Օսմանեան կայսերութեան հետ:

* * *

Գերմանացի նկարիչ Կրէյլի «Պսիխէյա»ն վերին աստի-
ճանի շնորհալի մի գործ է: Դիցաբանութեան ասելով՝ Պսի-
խէյան մի մատաղ գեղանի էր՝ որի վրայ սիրահարուած էր
ինքը Ամուռը, սիրոյ աստուածը: Անմեղութեամբ լի կախար-
չիչ աչքերը և մարմնի նոր ի նորոյ կերպարանուող ձևերը
այս պատկերի մէջ մարմնացնում են անարատ մաքրութեան
ու անմեղութեան զաղափարը:

* * *

Սեմիրադսկու «Լողանալուց առաջ» պատկերը պատկա-
նում է նրա անտիք կեանքի ժանրային պատկերների խմբին,
որն ինչպէս յայտնի է մեր նախորդ գրքերից, այս տաղանդա-
ւոր նկարիչը իր մասնագիտութիւնն է շինել: Երկու մատաղ
կանայք հրաշալի անտիք ձևերով՝ աւազանն են մտել, նրա-
նից մէկը ծածկոյցով իրեն սքողելով՝ պարանով քարշ է տա-
լիս փոքրիկ-նաւակը, որով հրապուրել է ուզում զանգրա-
հեր մանուկին, որին ձեռքերով բռնել է մի ուրիշ կին: Աւա-
զանի մօտ նստած նաժիշտը համոզում է մանկանը համար-
ձակ ջուրը մոնել: Հեռուն երեւում է Փաւստի, անտա-
ռի աստուծոյ, կիսարձանը: Ամբողջ պատկերը լի է զեղեցկու-
թեամբ և բանաստեղծական ոգով:

* * *

Վիսերտ նկարչի «Հեքիաթի Հերոսուհին» պատկերացնում
է մի թափուր անտառ, որի մէջ գերմանական տիպարով
մի գեղանի աղջիկ ողբում է իր սիրեցեալին՝ կռթնելով նրա
պատերազմական երիվարին, որը զլուխը կախած գետնին
նայում է արտմոլութեամբ լի աչքով: Մատաղատի գեղուհու և

ազնիւ կենդանու լոխրութեան վեհ արտայայտութիւնը ներկայացրած է Հիանալի ճարտարութեամբ:

* * *

Առաջին անգամ մենք դնում են մեր Հանգիստում Պետերբուրգի Գեղարուեստից ձեմարանի սանիկ Գ. Գաբրիէլեանցի նկարը՝ «Գիւղացու վար ու ցանքը Արագածի ստորոտում»: Պ. Գաբրիէլեանցը դեռ նոր է սկսում իւր գեղարուեստական դործունէութիւնը. նորա աշխատանքների մեծամասնութիւնն էտիւդներ են և ոչ բոլորովին աւարտած պատկերներ: Պ. Գաբրիէլեանցը Հայ նկարիչներից առաջինը եղաւ, որ ձեռք զարկեց մշակելու Հայրենի ժանրը և մեզ ծանօթացնելու իւր գեղեցիկ էտիւդներով մեր գիւղացի դասակարգի տիպերի, սովորութիւնների և բարքերի հետ, որոնցից մի երկուսը կրկնադէպք յաջորդ գրքում: Այս կողմից պ. Գաբրիէլեանցի ծառայութիւնը շօշափելի է և նա արժանի է քաջալերութեան: Նորա աշխատանքների դինը աւելի բարձրանում է այն պատճառաւ, որ երիտասարդ նկարիչը այս բոլոր տիպերը և տեսարանները տեղն ու տեղն է ուսումնասիրել ինչպէս տեղեկագիր. չնայելով մեր Հասարակ դասակարգի փակուած կեանքին, նա յաջողել է ծանօթանալ նորանց, դադանիքների և նորանց հետաքրքրող առարկաների հետ:

Թէև նորա նկարների մէջ տեղ տեղ պատահում են անհարթութիւններ և նկարչական անճշտութիւններ, բայց յաւամայից մարդ ներում է տեսնելով այնպիսի Հիանալի, կեանքով և ոգևորութեամբ էտիւդներ և տեսարաններ: Դիտելով նորա այս նկարը՝ «Գիւղացիք վար անելիս» մարդու սիրտ սկսում է արագ արագ բաբախել, երբ տեսնում է մի ինչ որ Հարազատ և Հոգու մօտ պատկեր, մարդ մտքով վերանում է այն տեղերը, ու մի առանձին սիրով և յարգանքով նայում է այս գիւղացիներին, որոնք լուրջ կերպով վարում են հողը և ցանկանում էք, որ նորանք յաջողութեամբ վերջացնեն իրենց աշխատանքը և բախտաւոր վերադառնան տուն:





Բիւզանդիոնի աշտարակները աւերակները Մարմարայի ծովի ափում: Նկար Հ. Բ. Բալազովսկու:

И. К. Айвазовскій.—Развалины Византійскихъ башенъ на берегу Мраморнаго моря.

Автотипія Антверпа въ Вѣнѣ.








Լողանալուց ատաջ նկար Վ. Սեմիրադսկու:

Г. И. Семирадскій.—Предъ купаніемъ.

Автотипія Ангерера въ ПѢтѣ.





Հերիաթի հերոսուհին. Նկար Ֆիլիքս Վիլհերտի:

Съ картины Ф. Вихерта.—Сказка,
Автогипія Ангережа въ РЕНѢ.






Պսիխէյա. նկար գերմանացի նկարիչ Արէյի:

Съ картины Крея.—Психея.

Автотипія Гонпе.





Հայ գիւղացու վարուցանքը Արագածի ստորոտում: Նկար Գ. Գաբրիէլեանցի

Г. Габріэлянцъ.—Крестьяне на пашнѣ подѣ Алагезомъ.

Автотипія Гонце.

Հրատ. «Արարի» հանդիսի

ТИП. ТОВ. „ОБЩ. ПОЛЬЗА“

Пзд. лит.-худ. обзорнія „А. акс“.



